



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

507

Унзг

65

1902



ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

# ԷԼԻ ՄԵԿ ԶՈՂ

ԿՕՄԵԴԻԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐՈՒԹԻՒՆ

Ո Ն Ղ Ն Ա

Թ Ի Փ Լ Ի Զ

ԱՐԱԿԱՏԻՊ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՄԻՔԱՑԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 81

1902

Երկրորդ  
Ա-34

"Alte - 1200" - 1200 - 1200 - 1200

1200 - 1200

1200

1870  
12 24

ԷԼԻ ՄԷԿ ԶՈՂ

ԿՕՄԵԴԻԱ ՆՈՒՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԷԼԻ ՄԷԿ ԶՈՂ

ԿՕՄԵԴԻԱ

Սկզբնական օրինակը առաջին անգամ ներկայացրած է  
Թիֆլիզի քաղաքային թատրոնում 1870 թ. Մայիսի 4-ին:



1000

891.99

U-94

# ԷԼԻ ՄԷԿ ԶՈՅ

ԿՕՄԵԴԻԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆՑԻ

ԵՐԿՐՈՐԿ ՏՊԱՐՈՒԹԻՒՆ

Ուղղած

ԹԻՓԼԻԶ

ԱՐԱԳԱՏԻՊ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՄԻՔԱՑԷԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 81

1902

ՀՈՋ ՄԷԿ ԶՈՅ

ՅՈՒՐԿԱԿ

Արարողը պահպանում է իր իրավունքները և չի կրճատում իր անունը և անձնատվությունը և չի կրճատում իր անունը և անձնատվությունը և չի կրճատում իր անունը և անձնատվությունը

2004





ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՍՆԱԿՆ ՈՐ ՀԱԳՈՒՍՏԸ

ՍԱՐԳԻՍ, 55 տարեկան, եւրոպական սե հագուստով:  
ԲԱՐՅԱՐԷ, 50 տարեկան, տեղական հագուստով:  
ՄԻՔԱՅԷԼ, 27 տարեկան, եւրոպական հագուստով:  
ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, 50 տարեկան, զինուորական հագուստով: Ուսերի վրայ գնդապետի փնջաւոր սպիտակ ուսնոցներ, իսկ կրծքին սուրբ Գէորդի սպիտակ խաչ 4-րդ ստտիճանի (նշան քաջութեան): Հանդիսի նշանադրեալի վրայ գրնդապետի աստիճանին վայել և ուրիշ չքաննշաններ ու չքադրամներ: Տանից դուրս գնալիս կամ դրսից տուն գալիս պաշտօնական թուր: Գործ է ածում երկար ծխաքարը:

ՍԱԼՕՄԷ, 40 տարեկան, տեղական հագուստով:  
ԱՆԱՆԻ, 19 տարեկան: Եւրոպական  
ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ, 60 տարեկան: հագուստով:  
ՎԱՆՕ, 25 տարեկան:  
ՆԱՏՕ, 18 տարեկան:  
ՕՍԷՓ, 20 տարեկան:

ԾԱՌԱՅ, Սարգսի տանը, հասարակ սե չէրքէզկայով:

ԷԼԻ ՄԷԿ ԶՈՅ

ԱՐԱՐՈՒՄԺ ԱՌԱՋԻՆ

Սարգսի տանը մի դարդարուն սենեակ շորս դնով՝ աջ, ձախ և երկուսը խորում: Այս վերջին դռներից աջ\*) կողմինը գլխաւոր մուտքն է, իսկ ձախինը դէպի պարտէզն է տանում: Սենեակի աջ կողմը՝ լուսամուտ և սփռոցով ծածկած սեղան, որի վրայ դարսած են մի քանի դրքեր, իսկ ձախ կողմը դիվան և սեղան: Ուր հարկն է՝ աթոռներ և բազկաթոռներ:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍԱՐԳԻՍ, ԲԱՐՅԱՐԷ

ՍԱՐԳԻՍ, մտնելով աջ դռնից, գլխարկը ձեռքին, բարկացած: Է՛սէնց էլ իր առածը՝ «հա ու չէ» չէ իմանում, էլի: Գլխարկը դրում է սեղանի վրայ:

\*) Աջ, ձախ, պէտք է ընդունել հանդիսականների դիրքից նայելով:

**ԲԱՐՔԱՐԷ, հետեւելով:**

Բթխիղա խօ չիս կանա անի խղճին. տեսնում  
իս չէ ուզում, զօռով բան կու'լի:

Նստում է:

**ՍԱՐԳԻՍ**

Ձէնդ, ձէնդ, զիւի քու միզն է, Բարբարէ, վուր  
էնէնց դայիմ\*) է կանգնած:

**ԲԱՐՔԱՐԷ**

Վունց չէ, մէ իմ խիւքով է ապրում, մէկ էլ քու  
խիւքով:

**ՍԱՐԳԻՍ**

'Ես\*\*) էլ էտ իմ ասում, է, վուր ինչ ուզից՝  
հիզը զնացիր, ինչ ասաւ՝ հիզը բանի տուիր ու վիւր-  
չը բերիր էն տիզը, վուր վունց հօրն է լսում, վունց  
մօրը:

Բարկացած ման է դայիս:

**ԲԱՐՔԱՐԷ**

Թէ կի նա իր հօր վրայ էլ ու մօր վրայ էլ խե-  
լօք է, 'ես ինչ անիմ էտումը, քան:

**ՍԱՐԳԻՍ**

Այ, այ, էտէնց իս խօսում զիւի, վուր իրան էլ  
իս գժուեցնում, է:

\*) Ղ տառը թաւով նշանակած [ ղ ] պէտք է արտասանել որ-  
պէս Թուրքաց Չ կամ Վրացոց Յ:

\*\*) Ե տառը մակակետով նշանակած [ 'ե ] պէտք է արտասա-  
նել խի կ իսկ այնպէս, ինչպէս արտասանվում է չէ վանկը բա-  
ռի միջում կամ վերջում ձայնաւորից յետոյ. օրինակ՝ մա չէս,  
Գա չէ անէ, երկնա չէն, եսա չէ, և այլն:

**ԲԱՐՔԱՐԷ**

Դուն թէ գժուեցնում իս, թէ չէ 'ես իսկի էլ չիմ  
գժուեցնում:

**ՍԱՐԳԻՍ**

Ի՞նչ, ի՞նչ... 'ես իմ գժուեցնում. արի ու հիզը  
խօսի:

**ԲԱՐՔԱՐԷ**

Բաս ի՞նչ իս անում. ամալ աչքարա ասում է վուր  
չէ ուզում, դուն կի ուզում իս զօռով ուզիլ տա.  
ախար վնը խելօքը կու լսէ. հա գժուեցնիլ է ու  
գժուեցնիլ:

ՍԱՐԳԻՍ, ձեռքերը բարձրացնելով:

Տօ, Ստեփան Դանէլիչը, Ստեփան Դանէլիչը, էն  
միլիօններու տէրը, ախշիկ ըլի տալի աղանչաքով,  
պաղանտաքով, էնդադա փուղ ու բաժնքով ու խե-  
լօքը չուղէ... Տօ, հազիր ասիս թէ՛ վնը խելօքը  
չի ուղի՛:

**ԲԱՐՔԱՐԷ**

Ի՞նչ անիմ. խօ տեսնում իս վուր նրա ուշկ ու  
միտկը Անանին է:

**ՍԱՐԳԻՍ**

'Ես նրան Անանի կու շանց տամ, հալա մէ մու-  
լափ տայ: էսէնց էլ օյի՛ն. մարթ ձիէմէն վէր դայ՝  
իշին նստի՛, մարթ խալ ու խալիչէն թողնէ՛ գեդնի  
վրայ գլորուի... Տէր օղորմած Աստուծ... Ը՛մ, Ե-  
գօր Սիմօնիչ, էս էր քու մտկումն, էլի՛... է՛նքան  
էկաւ ու զնաց, է՛նքան տարաւ ու էքի, ինչրու աղու-  
նակի պէս էրեխիս խիւքէմէն արաւ իստակ: Բաս թէ  
ես քու տակը մնացի, Եագօր Սիմօնիչ, էլ 'ես մարթ

չիմ ըլի, (Գլխարկը ցոյց տալով:) Էլ էս գրակը գլխիս  
 գրակ չի ըլի... Էս ինչ բանիր մօղա էկաւ, ախ-  
 պէր, թէ եադի տանը եադի աղէն տուն ու դուս  
 անէ, ճաշ գնայ, իրիզուն գնայ, ախշկայ հիդ սազ ու  
 բազ անէ, կ'օսիս նրա բիձու աղէն ըլի: Ի՞նչ է՞ հա-  
 րենիր ինք, կ'օսէ. հարենիր շղառան՝ ցաւ դառան,  
 'երգնուց պատիժ էկան գլխիս, էլի: (Ձայնը փոխելով:)  
 Դուն էլ ամեն սահաթի՞ էս ճաշ սարքէ նրանց հա-  
 մա, էս մաւրաբէք մօղ տար, էս միրք առնուլ տու...  
 է՛ս էիր ուզում, էլի... Աստուձ քիզ կու հարցնէ,  
 քի՞զ, Բարբաբէ. Միխէիլի գժուեցնողը բաշտան ջեր\*)  
 դուն իս:

**ԲԱՐԲԱՐԷ**

Ի՞նչ հանգն իս խօսում, ա՛ մարթ. դուն վուր  
 հէր իս, 'ես մէր չիմ, դուն վուր ուզում իս Միխէիլի  
 լաւութիւնը, 'ես չիմ ուզում: Տեսնում իս իր առածն  
 է. ախար վրէն շարանում իս, էն խիւքի տէրն է  
 վուր վախենայ:

**ՍԱՐԳԻՍ**

Բանրէմց ասա՛ ձեռներուն էլ պաշ անիմ, էլի:

**ԲԱՐԲԱՐԷ**

Ո՛վ է ասում վուր ձեռին պաշ անիս. ամա ամազ  
 իս արի, աշխատանք իս քաշի, ուսում իս տուի,  
 բերիլ իս մարթ իս շինի. քա՛, թո՛ղ ինչ քէփը տայ  
 էն անէ, է, քիզ ի՞նչ:

**ՍԱՐԳԻՍ**

Ի՞նչ քէփը տայ էն անէ. վանց չէ, 'ես էլ դիփ

\*) Զեր—դեռ. ջեր—անդամ.

էտ թաղարիկումն իմ: Աստուձ գիղենայ, տանէմէն  
 դուս կ'օնիմ, թէ էս բանումն ինձ չի լսի:

**ԲԱՐԲԱՐԷ**

Չատ կի՛ կու վախեցնիս նրան. էլի Աստուձն  
 փանք տու վուր էտէնց խունար վուրթի է տուի քիզ,  
 թէ չէ քու դուս անելուն չէր մնայ ինչըու էսօր:

**ՍԱՐԳԻՍ, բարկացած:**

Էս կնիկն ինձ կու գժուեցնէ գրուստ էսօր, Աս-  
 տուձ գիղենայ:

**ԾԱՌԱՅ, մտնելով խորքի աջ դռնից:**

Ազն, Ստեփան Դանէլիչն է:

**ՍԱՐԳԻՍ, շուարում:**

Ստեփան Դանէլիչը... վաւրդի է, վաւրդի. դիվիր  
 էկաւ:

**ԾԱՌԱՅ**

Չէ, աղա, ներքիւր կալասկումը մնում է:

**ՍԱՐԳԻՍ**

Ի՞նչ անիմ հիմի, ի՞նչ մօղօնիմ... (Ծառային:) Գնա,  
 գնա, համեցէք ասա: (Ծառան դուրս է գնում:) Արա  
 ի՞նչ ջուղար տամ, ի՞նչ, քիզ իմ հարցնում, ասա՛, էլի:

**ԲԱՐԲԱՐԷ, բարկացած:**

Ի՞նչ ջուղար գ'ուզիս տաւ. էն դուն, էն քու Ստե-  
 փան Դանէլիչը:

**ՍԱՐԳԻՍ, աւելի բարկացած:**

Ը՛մ, ը՛մ, մէ մտիկ, է...

**ԲԱՐԲԱՐԷ**

Քու գլուխ չունիմ, քա՛...

Գնում է, բայց տեսնելով Ստեփան Դանէլիչին դու-  
 ներում, շուարվում է:

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

ՍԱՐԳԻՍ, առանձին:

Քու ռաստ գալու սահաթն էլ, հըւ...  
ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Բաբի լուս ձիգ:

ԲԱՐՔԱՐԷ

Ատոձու բարին, համեցէք:

ՍԱՐԳԻՍ, բարոյութեամբ:

Ախար, Ստեփան Դանէլիչ, սըր իս էլի ջափա քա-  
շի. ինձ վուր հրամայիլ էիր, չէի գա՛մ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Ի՛նչ անիս, պարուն, օվոր ում մօղ բան կ'ունե-  
նայ, նա պիտի գնայ... (Նստելով:) Էլ ձիր թալաղին  
չիմ մնում:

ՍԱՐԳԻՍ

Վա՛, համեցէք, գէթաղվա:

ԲԱՐՔԱՐԷ

Էտ ինչ խօսի է, պարուն, էլ ինչ միր թալաղէն  
է հարկաւոր, ձիր տունն է:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Ջնորհակալ իմ, իմ քուր... Խիտա դաթրեցայ.  
էս ձիր սանդուխտն էլ խօմա՛ մէ ծէրը գեղնքին է,  
մէկէլը՝ երգնքին:

ՍԱՐԳԻՍ

Ախար, օխնած հորի, 'ես էլ էտ իմ ասում վուր

դուն սըր էիր նիղանում, է. գիղիս քու խաթիր  
ինչուր երգնքի վուրը կ'էհամ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Գիղիմ, գիղիմ, պարուն... Վա՛, նստեցէք, է...  
(Նստում են՝ Բարբարէն Ստեփան Դանէլիչի աջ կողմը,  
իսկ Սարգիսը ձախ կողմը:) Ուրիշ ինչ բարին հարցնիմ,  
իմ քուր:

ԲԱՐՔԱՐԷ

Փոնք Ատոձու. հրամանդդ վոնց իք:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Է՛հ, ապրում ինք, էլի... (Սարգիս:) Անց էի կե-  
նում էսթէնը, ասի քիզ էլ ուրախացնիմ. էն փօղ-  
րաթն ինձ վրայ մնաց, վոնցոր ասում էի քիզ, էն-  
դու վրայ շատ պակաս: Մէկը տասը կարէ, աւտաս:

ՍԱՐԳԻՍ, դարձանալով:

Թէ՛ քու Ատոձ իս սիրիս... Գնա՛ ու գնա, Ստե-  
փան Դանէլիչ. ա՛յ, Ատոձ վուր կու տայ, էրկու  
ձեռով կու տայ, է. էտ խօ խէլի դադում կ'օնէ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Դադումն էն է, աղա Սարգիս, վուր էլ մի ու-  
չացնի էն բանը:

ԲԱՐՔԱՐԷ, կամենալով վեր կենալ:

Դաշլա շանիմ ձիգ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Չէ, չէ, իմ քուր, նստի, դուն էլ իմացի, 'ես  
թարուն բան բանիլ չիմ սիրի. դուն էլ մէք իս,  
կու'լի գիղենաս էլ, քու Միխէլիին ուզում իմ վե-  
սայ շինի իմը... (Յոյց տալով Սարգիս վրայ:) Կ'օ-  
սէր, էլի:

ԲԱՐՅԱՐԷ  
Տարի քիզ ումբը, պարուն, վուր մինձ բախտաու-  
րութին է միզ համա. ամա Միխէիլն ասում է վուր  
Ջեր կնիկ ուզելու միտկ չունիմ, կ'օսէ:

ՍԱՐԳԻՍ, Բարբարէին:  
Է՛հ, դուն ի՛նչ գիգիս: (Ստեփան Դանէլիչին:) Գու-  
ղէ էլ, Ստեփան Դանէլիչ, ու ձեռիս էլ պաշ կ'օնէ,  
քու արիւր:

ԲԱՐՅԱՐԷ, առանձին, նեղանալով:  
Տէր օղորմած Աստուծ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻՉԻ, Բարբարէին:  
Ումիկ ունիմ վաղ բան չիմ ասում, իմ քուր:  
(Սարգսին:) Պիտի շտապեցնիս, աղա ջան. դիփ էրկու  
շարաթ չի քաշի ինչքու էն փօղրաթը կու հաստա-  
տին. ասում իմ վուխտի ըլի, վուր քու աղին կառա-  
վարիլ տամ էս բանը, էլ ուպրավիտիւշչերու ճանգը  
չգցիմ մէկ էլ: Դիփունանցը փորցեցի, դիփունըը խա-  
փեցին անիծածնիրը, դիփ իրանց կուռը տաշեցին:

ՍԱՐԳԻՍ  
Նրանց աղաթն է, ինչ անիս, Ստեփան Դանէլիչ:  
ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻՉ  
Է՛հ, պլոկեցին, ասում իմ, աղա ջան, պլոկեցին:  
ՍԱՐԳԻՍ

Արա էտ հանդի բան վոնց կ'օնէ իմ Միխէիլը.  
Արխային կաց, Ստեփան Դանէլիչ, իմ հոքին էլ գի-  
գենայ ու նրա արիւն էլ իմ ասում, վուր դէնիշկէն  
ինչ է, մէ՛ դէնիշկումը չի խափի քիզ:

ԲԱՐՅԱՐԷ  
Էրնէկ էլաւ իմ Միխէիլին:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻՉ

Էտէնց վուր չըլիմ ճանչնում, խօմ էսէնց էլ տաք-  
տաք չիմ ըլի կաշում. ումը տամ իմ ախշկան վուր  
ձեռիս չպաշ անին. ամա մէ խօսկոյլ ձիր աղին 'ես  
էն գլխէն հաւնեցայ: Խօ գիգիս՝ ինչ մտկումս մէկ  
գըրի, պիտի կատարիմ, ու վերըը թէ նա էլ կու խա-  
փէ ինձ, թո՛ղ խափէ:

ԲԱՐՅԱՐԷ  
Էն օրը մահ ըլի ինձ:  
ՍԱՐԳԻՍ, մեղմ ծիծաղով:  
Տէր, հ'ը, հ'ը... ինչ իս ասում, Ստեփան Դանէլիչ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻՉ  
Խօսկի վրայ իմ ասում, թէ չէ խափելու ինչ  
ունէ, իրն է ու իրը. էն մէ ախշիկն ունիմ, էլի, իմ  
քուր, մէկ էլ մէ աղայ. հալալ կէս կ'օնիմ կայինքս՝  
կէսը մէկին, կէսը մէկէլին:

ԲԱՐՅԱՐԷ  
Ասում էրկուսին էլ քիզ աայ:  
ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻՉ, շարունակելով:  
Թո՛ղ խափէ, տեսնիմ ինչումն է խափում: (Ծի-  
ծաղելով:) Տէր, հ'ը, հ'ը... իմ կամքով վուր կէս կա-  
յինքս տալիս իմ, էլ էստու վրայ աւելի ինչ գ'ուղէ:  
ՍԱՐԳԻՍ

Քու արիւր, Ստեփան Դանէլիչ, դրուստ Աստծու  
օղորմութին է էտ բանը ինձ համա էլ, նրա համա  
էլ. ամա էն օրն էլ ասի վուր մէ քիշ պիտի ժամա-  
նակ տաս, ինչքու մէ տիղ մէկ-մէկու ուստ գան,  
թէ չէ խօմ գիգիս, փուզն ու մէրու պանտէն նրա  
համա դիփ մէկ է:

ՄՏԵՓՈՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Վա, հէր օխնած, էտ խիստ է էրգարանում բանը:  
ՍԱՐԳԻՍ

Ինչի, Ստեփան Դանէլիչ, էրէգ մէկ, էսօր էրկու,  
Ջեր էտէնց ինչ վախտ է անցկացի. էս մէ էրկու  
շափթումը կու վրայ բերիմ, էլի. բաս էլ ինչի հէր  
իմ, վուր էտ էլ չկանենամ: Ամա թէ ինձ կու հարց-  
նիս, 'ես ասում իմ վուր մէ տիղ ուստ գան, դօս-  
տանան. ինչ անիս, ասում ին՝ հիմի մօղէն էտէնց  
է, կ'օսէ:

ՄՏԵՓՈՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Խիլքումս նստում է ասածտ, աղա ջան. բաս ջեր  
էտու վրայ պիտի փիքը անինք:

ՍԱՐԳԻՍ

Բան, բան, Ստեփան Դանէլիչ, 'ես կու իմաց  
անիմ:

ՄՏԵՓՈՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Է՛հ, նիրողութիւն, գլխացաւութիւն տուի: (Վեր  
է կենում, միւսները հետեւում են:) Մնաք բարով, էս  
օրերումը կու մնամ քիզ, աղա ջան, էլ մի էրգարա-  
ցնի, քու հօրն օղորմի:

ՍԱՐԳԻՍ

Վրայ աչկիս, վրայ աչկիս, Ստեփան Դանէլիչ:

ՄՏԵՓՈՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Աստուձ վիրշեներուս բարի անէ:

ՍԱՐԳԻՍ

Ամին, ամին, Տէր Աստուձ:

ԲԱՐՔԱՐԷ

Աստուձ վուրթիքդ զօրացնէ:

ՄՏԵՓՈՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Էրգար օր ունենաս, իմ քուր, Աստուձ քու Մի-  
խէիլին պահէ, լաւ գուակ է, լաւ. էրնէկ չի ըլի իմ  
Վանօն էլ նրա խիլքն ու վարքն ունենայ... թէգուզ  
էնդու կէսը:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչն է պակաս, Ստեփան Դանէլիչ. անմիղ իս  
գանգաւում:

ՄՏԵՓՈՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Է՛հ, աղա ջան, խիստ ջէհէլութիւնիւր է անում,  
է... Մէ էս բանը պրծիլ էր, ասում էի, ու իժում  
պիտի նրա վուտումն էլ բուխաւ գցիմ, թէ չէ անումս  
խտակ բէգնամ կ'օնէ, քու արիւր:

ՍԱՐԳԻՍ

Աստուձ մէ լաւ հալալ կաթնակիրի արժանի անէ:

ԲԱՐՔԱՐԷ

Աստուձ էնէնց բախտաւուրէ, վունցոր ձիւ սիրտը  
գ'ուզէ:

ՄՏԵՓՈՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Բերանդ շնքար, իմ քուր: (Գնում է եւ ճանապար-  
հից յետ դառնալով:) Ղնւրթ, Սէրգէյ Տարասիչ, ինչ  
միտս էկաւ. Սուրաթինք մնամ էստի ձիզ մօղիկ հա-  
րենիւր ին. ում տանն ին կենում, խօ չիս գիղի:

ՍԱՐԳԻՍ

Իրանց տներումը, հէնց էստի էւէտ, զըուստ էս  
տան դէմուդէմը:

ՄՏԵՓՈՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Է՛հ, աղբաթգ խէր ըլի:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ

Ի՞նչ կ'օնէիր, Ստեփան Դանէլի:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ

Վունչիչ, աղա ջան. էն օրը Սօբրանիումը բարեկմացանք, այ էն վուր խղճերու համա բալ էին սարքի:

ՍՏԵՓԱՆ

Հան, հան, Ստեփան Դանէլիչ, իմացիլ իմ: 2 իմ գիղի... (Բարբարէին): վնւր օրն էր... (Ստեփան Դանէլիչին): Եագօր Սիմօնիչի կնիկը միր տանն էր, յիգ էր ասում:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ

Չատ լաւ խալիս ին էրեում, այ:

ԲԱՐԲԱՐԷ

Դիւնիս, մարթը դրուստ Ասածու գառն է:

ՍՏԵՓԱՆ

Նրանց անումն էլ կարուի:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ

Ախիկը խօ մէ հայերէն է խօսում, վուր քէվը դու քայ մարթունը, քու արիւր:

ՍՏԵՓԱՆ

Գիղիմ, գիղիմ, Ստեփան Դանէլիչ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ

Խիսա դուր էկաւ, է. խնդրեցի վուր միղ մօզ գնալ գալ ունենան: Ո՛վ գիղէ վունց ոստա գայ. ասում իմ՝ վաղօրօկ էւէտ տունը գիղեհնամ, վիղիտի վուխար էլ դէս ու դէն շննգնիմ:

ԲԱՐԲԱՐԷ

Հէնց միր տան դէմուդէմն է: (Առաստօտից ցոյց տալով): Ա՛յ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ, մօտենալով լուսատին: Վա՛... Դրուստ դէմուդէմն է էլի... Չնորհակալ իմ, իմ քուր. մնաս բարով, աղա ջան:

Սարգսին ձեռք է տալիս:

Տ Ե Ս Ի Լ Գ

ՆՐԱՆՔ, ՍԱԼՕՄԷ

ԲԱՐԲԱՐԷ, տեսնելով Սալօմէին, որ մտնում է գլխաւոր դռնից:

Քան, այ ինքը Սալօմէին: (Սալօմէին): Համեցէք:

Սալօմէն մնում է շուարուած:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ

Վա՛, էս լաւ ոստա էկանք, հէնց ձիւ վրայ էինք խօսում. համեցէք:

ՍՏԵՓԱՆ

Վուր չըլիմ ամանչում, սանդ-սաղ կ'ուտալիմ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ

Սալօմէին:

Վննց իք, իմ քուր. Եագօր Սիմօնիչս վննց է:

ՍԱԼՕՄԷ

Դանր ողջունելով ու բրբրուելով: Աստուծ ձիր մէ օրը հազար անէ, լաւ ինք. հրամանքը վննց իք, երեխերը խօ լաւ կան, գեհացվալէ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԻ

Փնաք Աստծու, դիվունքս սաղ սալամաթ ինք... Միր կուռը մէկ շանցկացար:

ՍԱԼՕՄԷ

Միղ համա մինձ պատիւ է, պարուն. էլի վուր

գու գանք: (Աջ ու ձախ նայելով:) Վուտի վրայ ինչի՞  
իք: (Ստեփան Գանելիսին.) համեցէք, գէթ աղվա:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Էս է գնում էի, վուր հրամանքդ տուն էկար...  
Հարկաւոր խօսկ ունէի սրա մօղ, ասելուս ասի,  
հիմի դուք խօսեցէք, 'ես էլի մէ քանի տիղ բան ու-  
նիմ: Է՛հ, մնաք բարով: (Գնալով:) Մանխաս, շարչըր-  
վում ինք, էլի: (Սարգսին:) Էլ մի ծռծռեցնի, ա՛յ:

ՍԱՐԳԻՍ

Ջնխտ աչկիս, Ստեփան Դանելիչ, շիրուսդ գի-  
դացի:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ, Սալօմէին:

Իմ կուղմանէ Եագօր Սիմօնիչին կ'օսիս վուր միղ  
չմոռանայ ու ախշկատ շատ ու շատ բարով... (Սա-  
լօմէն ողջունում է:) Ապրիս, ասան... Խիստ լաւ ախ-  
շիկ ունիս, իմ քուր, բախտաւոր կնիկ իս, 'ես ու իմ  
հոքին... Դրդէ միւր տուն, քու հօրն օղորմի, ախշիկս  
կու ուրախանայ: (Գնում է, ամենքը հետևում են:)  
Մի նիղանաք, խնդրում իմ: (Սարգսին դիտաւոր դռան  
մօտ:) Քու հօրն օղորմի, ձեռը վիկալ:

ՍԱՐԳԻՍ

Վան, վան, Ստեփան Դանելիչ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Է՛հ, թա՛րգը ասու, ա՛ղա ջան, է՛:

ՍԱՐԳԻՍ, հետեւելով:

Ինչի՞, ինչի՞, իմ պարտկն է, Ստեփան Դանելիչ:

Ստեփան Դանելիչն ու Սարգիսը դուրս են  
գնում:

Տ Ե Ս Ի Լ Դ

ԲԱՐՔԱՐԷ, ՍԱԼՕՄԷ

ՍԱԼՕՄԷ

Ի՛նչ սառած մնացի, քան... (Նստում են:) Լիզուս  
կապուեցաւ գրուստ... Եանար նրա պէս պատուա-  
կան մարթ էլի կու'լի:

ԲԱՐՔԱՐԷ

Էն դօվլաթն սումը տաս, Սալօմէ, վուր դիփունի  
համա պատուական շըլի:

ՍԱԼՕՄԷ

Էլ մի ասի, Բարբարէ ջան, գլխէմէն ինչըու վու-  
տը զըմգըմում է... Ասում ին 'երկը-չուրս միլիօն  
աւել կ'ունենայ:

ԲԱՐՔԱՐԷ

Էլի ինչոր նուր փօղրաթ է վիկալի... Մէկը  
տասը կու դաղէ, կ'օսէ, ասում էր հիմի:

ՍԱԼՕՄԷ, յողոց հանելով:

Ը՛մ... ինչի՞ չի դաղի... Չուրն էկիլ է ու միղ-  
պէսներուն է տարի... Քանի ջէր ասի իմ մարթուն,  
վուր մէ փօղրաթ վիկալնէ, ամա էնդուրն էլ շուրք  
պիտի, ի՛նչ անիս:

ԲԱՐՔԱՐԷ

Մենակ շուրքի բան չէ, Սալօմէ ջան. Ասում  
ումը կու տայ, կու տայ. ամա ինձ թէ կու հարցնիս,  
օչովի դօվլաթն աճկումս չէ գալի... կու մեռնինք,

զիփ էստի կու մնայ... շուրս գաղ պատանքն ու միր ջանը. թնդ մօզ անին, քանի կանան:

ՍԱԼՕՄԷ

Ախավազլախ նրանց գլխին: (Մօտեցնելով ածոր): Քի մօզ բանի իմ էկի, Բարբարէ ջան... Ախար էս քու Միխէիլը վուր էսէնց սրտով կպիլ է միզ, ինչ պիտի անինք:

ԲԱՐԲԱՐԷ

Կու'լի դուր չէ գալի ձիգ:

ՍԱԼՕՄԷ

Չնայ իմ աչկին, էտ ինչ իս ասում, Բարբարէ ջան. էն օրը մահ ըլի ինձ. վունց թէ դուր չէ գալի... էնէնց սիրում ինք նրան զիփունքս ու պատվում, վունցոր միր տանու վուրթուն... նա ուրիշ աղիդ-մաղիդն է. շատ ծնող պարծենայ վուր նրա պէս վուրթի շունենայ... Անանիս խօս նրա մօզ էնէնց է, վունցոր քուր ու ախպէր. ամա մէ բանով պիտի քութահ ըլի թէ չէ:

ԲԱՐԲԱՐԷ

Իմ ձեռին ինչ կայ, Սալօմէ ջան... Գիդէ Արաբիչը վուր քու Անանուն էնէնց գ'ուղիմ իմ հարս ըլի, վունցոր հորուս համա արքաութին. ամա ինչ անիմ վուր Միխէիլի հէրը կրակ է վէր ածում... Տէնց էսօր էլ խօսի վէր ննգաւ, քու արիւր: «Տանէն դուս կ'օնիմ, թէ էտ բանը կու'լի», կ'օսէ: Արա ինչ անիմ, Սալօմէ ջան:

ՍԱԼՕՄԷ

Չնայ քոռանամ 'ես, էտ հանգի բան վունց կ'օնիմ. աշխրբի դէնօ ու մասխարա խօ չիմ դառնայ:

'Ես վուր ասում իմ, ասում իմ համովութենով ըլի բանը, թէ չէ ինչ լաղաթ ունէ... Լաւ տղայ է քու Միխէիլը, հատը շունէ, քու արիւր. ամա 'եթէ իր հօրն ընդէմ կու'լի, ինչ կ'օնիմ, ինչ արած կու'լինք էնչախը... Անանուս վուր տալիս իմ, Բարբարէ ջան, 'ես մենակ Միխէիլին չիմ տալի, ձիգ իմ տալի, ձիգ կարողութենին իմ տալի, թէ չէ դարդակ շինովնիկը ինչ գլուխս իմ տալի... Տիմի ինչ անինք, վուր ուրիշ-նեքու պէս բահր ու բաժինք շունինք հաղիք. համ փուղ, համ էլ էն հանգի ախշիկ սվ կու տայ ձիգ ախար, ես գլուխս էն տիղն ուր գցիմ վուր իմ վուտով գամ ու ձիգ աղանչաք անիմ:

ԲԱՐԲԱՐԷ

Չնայ, աճկիրս քոռանայ, Սալօմէ, թէ օմքնու բաժինքը ես իմ այնումն ըլի գալի, ես Միխէիլինը... նա պրծնի ամեն ցաւէմէն, վուր դրուստ իմ ասում: Ասած է՝ «Սուխ ու հաց, սիրտը բաց». ամա էլախտ էլ ասի վուր հէրը դարուլ չէ անում:

ՍԱԼՕՄԷ

Բաս իմ շարէն ինչ է, Բարբարէ ջան: Մէ բանով կտրական արէք թէ Աստուձ կու սիրիք. ան՝ հա, ան՝ չէ... 'Ես էլ ախշկայ տէր իմ, հէնց բռնէ ճօշալու իմ դառի, քու արիւր... Թէ կու'լի, խօ խիստ լաւ, թէ չէ ու Միխէիլին դէմուդէմը կ'օսիմ, Աստուձ գիդենայ, վուր մէ քիչ վուտը յիդ խփէ... Խալխի խօսելու ուր իմ դառնում անմիդ տիդ:

ԲԱՐԲԱՐԷ

Ինչ անիմ, Սալօմէ ջան, 'ես էլ մոլորվիլ իմ, Աստուձ գիդենայ:

17-88711-59  
28-7



ՍԱԼՕՄԷ

Քիզ կտրականն ասիմ, Բարբարէ, մէ քանի օր էլի կու մնամ, ինձ ջուղարն իմաց արա... հալբաթ 'ես էլ միւր գլխի շարէն կու տեսնիմ: (Ոտքի ծայն է լավում, շուարվում է:) Մնամ վուր քու մարթն է: (Վեր է կենում:) Գնամ, դալմադալ չբաց անէ: (Բարբարէն եւս վեր է կենում:) Մի նիղանա, գէթ ադիվա, 'ես էսդանց բախչեմէն դուս կ'էհամ, (Գնալով:) ճանփին չուստ գամ:

ԲԱՐԲԱՐԷ, առանձին:

Չար սատանէն ուստ գայ քիզ:

Հետեւում է Սալոմէին:

ՍԱԼՕՄԷ

Արա ուր իս ջափա քաշում, գէնացվալէ:

ԲԱՐԲԱՐԷ

Ինչ կայ:

ՍԱԼՕՄԷ

Իմ ումիկը դուն իս, Բարբարէ ջան:

'Կուրս է գնում գէսի սարտեղը:

Տ Ե Ս Ի Լ Ե

ԲԱՐԲԱՐԷ, յետոյ ՍԱՐԳԻՍ

ԲԱՐԲԱՐԷ, մենակ, առջ գարով:

'Քու աճկն էլ խիղճ էրեխիս ջագօից դըուստ:

ՍԱՐԳԻՍ, վերադառնալով:

Իր բնիսար վուր գնաց, թէ չէ մէ բէարու կ'օ-



նէի էս ջգրած սրտիս վրայ, վուր էլ յաւիտեան վունց դէսն էին էկի, վունց Միխէիլին տեսի:

ԲԱՐԲԱՐԷ

Հիմի էս էր պակաս:

ՍԱՐԳԻՍ

Ջր, էրկու-էրկու դէղա նստեցանք, խօսեցանք, ձեւեցիք, կտրեցիք, 'ես վունչիչ, էլի... Մուլափ տան հալա. հէստի օր կանգնեցիմ 'ես նրանցը, վուր ասին՝ հա... Խօ տեսար, տեսար էն պատուական մարթուն, խօ քու անգճով իմացար հիմի էն խօսկիրը. էն էլ 'ես էի:

ԲԱՐԲԱՐԷ

Խուլ խօ չէի. ամա Աստուձ կու վիկալնէ, վուր էտէնց սուտ-սուտ ումիկնիր տուիր էն մարթուն. խօ գիղիս վուր Միխէիլը չի ուղի:

ՍԱՐԳԻՍ

Ա՛յ, կու տեսնիս թէ չէ:

ԲԱՐԲԱՐԷ

Վունց չէ, աւտաս աղանչաք անէ:

ՍԱՐԳԻՍ, սաստիկ բարկացած:

Բարբարէ, հիւացի աճկեմէս, թէ չէ քիզ էլ ու նրան էլ էս սահաթիս... բերնումս ինչիւր է գալի:

ԲԱՐԲԱՐԷ, բարկացած:

Մէ խիստ շարացի, խիստ, հէնց գիղենաս աշխրքի տէրը դուն ըլիս... (Առանձին:) Լաւ տարի քիզ գայ, լաւ իմքին դուն իս դառի:

Բարկացած դուրս է գնում ձախ դոնից:

Տ Ե Ս Ի Լ Զ

ՍԱՐԳԻՍ, մենակ:

Ը՛մ, ձիւր քօքը, քօքը... Ի՛նչ ստիղծելու էր կնիկ-  
արմատը վուր ստիղծից Աստուծ... (Բարկացած ման  
է գալիս կրծքին խփելով): Ա՛խ, Միխէիլ, քու խիւքն էլ  
անիծուի, քու ուսումն էլ: Դրուստ կոօի ջինս է ա-  
նիծածը. ախար Թորոզի թուռն է, է՛: Էսէնց էլ մըկ-  
րատ: Համով ասի—չէ, աղանչաք արի—չէ, ջգրուե-  
ցայ—չէ, շարացայ վրէն—չէ... պատիկ էլա մայինց  
ըլի, մէ ոօղգատրաք անիմ... Ի՛նչ անիմ, վոննց կօտ-  
րիմ... ախար քարափի աօլ դօվլըթին ածկի է տալի  
ու շուռ է գցում... Էսէնց էլ մարթ: (Լոռեթիւն, յե-  
տոյ, իբրև թէ մի բան մտաբերելով): Մո՛ւ, սո՛ւ... (Սպառ-  
նալի ձեւով): Օ՛, Միխէիլ, մոնղայիթ կաց, փիս բան  
էփուեցաւ գլխումս:

Գլխաւոր դռնից մտնում է Միրայէլը գլխարկը ձեռքին:

Տ Ե Ս Ի Լ Է

ՍԱՐԳԻՍ, ՄԻՔԱՑԷԼ

ՍԱՐԳԻՍ, երկար լոռեթիւնից յետոյ, առանձին, մինչդեռ  
Միրայէլը սեղանի մօտ դբադուած է:  
Ամա չէ, Բարբարէն գրուստ է ասում, էլի կու՛լի  
համովութենով բան դառնայ: (Վօտենալով Միրայէ-  
լին եւ քաղցրութեամբ): Ախար օրս ո՛ւր իս սիւցնում,

վոնրթի, ի՛նչ դէթ իմ արի քիզ. աշխրքին դուն իս  
խրատում, վոնրթի, էտէնց վարուիլ կու՛լի վուր դուն  
իս վարվում քու հօր հի՛դ:

ՄԻՔԱՑԷԼ

Ա՛խ, հայր իմ, սպանիր ինձ ու վերջացրու:

ՍԱՐԳԻՍ

Արա էտ խօսիկ է վուր դուն իս ասում, վուրթի՛:

ՄԻՔԱՑԷԼ

Ուրիշ ոչինչ չէ մնում ինձ ասելու:

ՍԱՐԳԻՍ

Նստի էստի, վոնրթի, նստի: (Նստում են, միայն  
Միրայէլը յետոյ վեր է կենում, բայց կրկին նստում ու վեր  
կենում՝ նայած իր ներքին յուզումներին): Արա մէ փիքը  
արա թէ ի՛նչ իս ասում: Ատում իս վուր կինքդ չիս  
խնահում ինձ, էլի...

ՄԻՔԱՑԷԼ

Այո՛:

ՍԱՐԳԻՍ

Լա՛ւ, ասածդ վուր արարմունքիտ նման չէ. մարթ  
վուր մարթուն կինք չխնահէ, նրա համա էլ ամեն  
բան պիտի վիզն առնէ թէ չէ:

ՄԻՔԱՑԷԼ

Ո՛չ, հայր իմ, ո՛չ. ես պատրաստ եմ որևիցէ վը-  
տանգի ժամանակ քեզ աղատելու համար կեանքս  
դոհել, բայց դու կամենում ես որ ես ամեն օր մա-  
հին երանի տամ. այս ո՛չ մէկ որդի պարտական չէ  
իր հօրը:

ՍԱՐԳԻՍ, գլուխը շարժելով:

Արա ի՛նչ խօսիմ քի մօդ, վոնրթի. էն լաւ չէ՛, ես

մեռնիմ, կանց քիզ էրնէկ տալ տամ մահը: Իմ չա-  
լիշն ինչ է ախար, շիս իմանում. դարթնի քու բախ-  
տաւորութիւնը ուրիշ ինչ կանամ ուզի 'ես քիզ համա:  
**ՄԻՔԱՅԷԼ**

Է՛հ, հայր իմ, դու քո տեսակ ես հասկանում  
բախտաւորութիւնը, ես իմ տեսակ. ինչքան որ խօ-  
սենք այս մասին, մենք միմեանց չենք կարող հաս-  
կանալ:

**ՍԱՐԳԻՍ**

Իմ ասածը դիփուկը կու հասկանան, դ՛նն իս  
վուր շիս հասկանում. ամա քու ասածը 'ես չիմ  
կարծում վուր քախկումը մէ մարթ ըլի, վուր կանն-  
նայ քիզ հասկանա:

**ՄԻՔԱՅԷԼ**

Ես կարծում եմ որ ամեն դարգացած ազնիւ մար-  
դու համար իմ ասածը շատ հասկանալի է:

**ՍԱՐԳԻՍ**

'Քու արիւր դիզենայ, վուր վննց ազնիւը կանայ  
հասկանա քիզ, վննց քախկցին:

**ՄԻՔԱՅԷԼ, ժպտալով:**

Այդպէս ես նայում գործին, որ միմեանց չենք  
հասկանում, է՛:

**ՍԱՐԳԻՍ**

Լաւ է, հէնց ապրիս, էզզամինի վուխտ չէ. 'ես  
քիզ ստում իմ քու խէրը ճանչցի, թէ չէ, Աստուծ  
գիզենայ, ջրատար կու մնաս քախկումը: Արա մէ աշ  
ու ձախ մտիկ արա. մէկը կայ վուր քու հանգն ըլի  
վարվում, քու հանգը ժաժ գալի: Խօսկերով շատ  
բան ին ստում, շատ բանիր ին քօվլանում, ինչ հա-

Չաթ, խօսկը խօ փուղով առնելու չէ, վուր հէսարով  
մխտին. ամա դուն նրանց արարմունքին թմամաշա  
արա: (Միքայէլը անհամբերութիւն է ցոյց տալիս:) 'Երիք  
քու տօլ իմ, 'ես շատ բան իմ տեսի քախկումը. ա-  
ռանց խէր օշով օշովու բարի լուս չէ տալի:

**ՄԻՔԱՅԷԼ, դառնութեամբ:**

Այո, այո:

**ՍԱՐԳԻՍ, շարունակելով:**

Օմքնու մէջը խէր կայ, դիփուկը միզրաճանջի  
պէս գլխին մօդ ին ըլում... Լաւ մարթն էլ նա է  
էրևում, խելօքն էլ նա է էրևում, գիզունն էլ նա է  
էրևում, արթարն էլ նա է էրևում. ամա մարթ ինչ  
գ'ուղէ արթար ըլի, ինչ գ'ուղէ խելօք ըլի, ինչ գ'ու-  
ղէ գիզունն ըլի, թէ խէր չկայ նրա մէջը, հալալ ախ-  
պէրն էլ էրեսը շուռ է տալի նրամէն, սւր մնաց  
վուր մէկէլնիլը: Խօսկերով կի, տարի քիզ ումբը,  
ինչքան գ'ուզիս կու գովին, ամա դիփ դարգակ՝ ճօշ  
չանախ, բօշ չվալ: Տօ, առանց խէր թարաւուրն էլ  
թարաւուրի հիզ բարեկամութիւն չէ անում, ինչ իս  
ասում դուն:

**ՄԻՔԱՅԷԼ, առանձին:**

Կատարեալ տանջանք է:

**ՍԱՐԳԻՍ**

Օշովիմէն քիզ խրատ չի հասնի, վննթի. փնռք  
Աստուծ, տեսնում իմ խիլքով խելօք իս. ամա 'ես  
ուրիշ իմ... 'ես վուր կամ, քու հէրն իմ, ուզում իմ  
ինչ 'ես փորցուիլ իմ՝ իմ փորցածն էլ գիզենաս,  
վուր փորցուելու վրայ էլ նուր մէկանց ժամանակ  
չկորցնիս: Լաւ գիզացի, վննթի, դիփ սուտ է էս

աշխրբումը՝ սէրն էլ, բարեկամութիւնն էլ, ասկակա-  
նութիւնն էլ, մէ բանն է զուրթ...

ՄԻՔԱՅԷԼ, դառնութեամբ:

Փոփոք:

ՍԱՐԳԻՍ

Հնա, ապրիս. դիփ փնւղը, փնւղն ու փնւղը. ա-  
ռանց փուղ դիփ մէ գրօշ: Փուղ ունիս՝ աշխարքը  
քունն է. թէգուղ քաշալ ըլիս, թէգուղ յիմար ըլիս,  
թէգուղ հուտած ըլիս, դիփունի համա սառը-շաքա-  
րը դուն իս, օչով քիմէն շի բէզրի: Դարդակ խճար-  
տանքն ու գիղութիւնը վունշիչ:

ՄԻՔԱՅԷԼ

Բաւական է, հայր, այդքան խրատները: Միթէ  
ես ինքս չեմ հասկանում, որ աշխարհիս մեծ մասն  
այդպէս է. բայց այդ չէ նշանակում թէ այն վար-  
մունքը, որ ուրիշների կողմից անգամ ինձ զգուանք  
է պատճառում, ես ինձ թոյլ տայի անձամբ կատա-  
րելու... Ես նպատակ չունիմ ուրիշների պէս հարստա-  
նալ և հաստատ կանոն եմ դրել որ ես միայն իմ  
սեպհական աշխատանքիս լինիմ պարտական:

ՍԱՐԳԻՍ

Ո՞վ է խլում, ախպեր, քու աշխատանքը քու ձեռ-  
նէմէն. աշխատէ, աշխատէ, շատ լաւ էլ իս անում,  
Աստձու դուրեկանն էլ էտ է. ամա հաղիր հաղրա-  
բաշի աշխատանքը վուր քիզ թայգուլի պէս թաւա-  
ղա ին անում, ինչի իս էրեսդ շուռ տալի:

ՄԻՔԱՅԷԼ

Այսինքն պարոն Բրիլիանտովի հարստութեան մէկ  
մասը, որ նա տալիս է իր աղջկան իբրև բաժինք:

ՍԱՐԳԻՍ

Հնա. ինչ փիս բան է, ախար:

ՄԻՔԱՅԷԼ

Այն՝ որ ես նրա աղջկան չեմ հաւանում և երբէք  
էլ չեմ կարող հաւանել: (Լուռութեամբ) Ես արդէն ընտ-  
րել եմ մի այնպիսին, որ կատարելապէս համապա-  
տասխանում է իմ գաղափարներին... Եւ եթէ այդ  
ևս չլինէր՝ ես մեծ անպատուութիւն կը համարէի  
փողի համար պսակուել:

ՍԱՐԳԻՍ

Տօ՛, մենակ դուն խօսմ չիս քախուումը. ախար մէ  
ծաղկով զարունք դու քայ, մենակ դուն դուս էկանր  
գիղունն աշխրբումը. չէ վուր քու ննգըրտիքն էլ քի  
պէս ուտում առած էին... Աքա վնւրն արաւ՝ ինչոր  
դուն իս ուզում անի. ո՞վ ուզից մուքթ ախշիկ, վուր  
դուն իս ուզում. ո՞վ ածկի էրիտ բահր ու բաժնքին,  
վուր դուն իս ածկի տալի... Քանիսի անումը գ'ու-  
ղիս տամ... (Լուռութեամբ) Էկան, փրփուտացին, քու  
հանգի բանիր շատ ասին. էս մարթութիւն, ասում  
է. էս սէր ու միաբանութիւն, ասում է. էս խղճի  
պահպանութիւն, ասում է. ամա վիրշը վուրդի էրկու  
հազար ու 'երեք հազար թումնի ձէն իմացան,  
տրտինգ տալով ձեռն էնդի կպցրին: Տիս վուր միր  
քաղաքը նրանք լաւ ճանչցան ու էնէնց էլ վարուե-  
ցան. հիմի դուն իս ուզում օրինակ դառնա դիփու-  
նանց համա:

ՄԻՔԱՅԷԼ

Ես ոչ ոքի համար օրինակ չեմ կամենում դառ-  
նալ, հայր. ինչ որ խելքս կտրում է ու խղճմանքս

տալիս է, այնպէս եմ վարվում: Իմ ընկերներէից մէկ քանիսին օրինակ ես բերում, նրանք ինչ լաւ օրինակ կարող են լինել. ամբողջ իրանց կեանքում աշխատում էին արդարութեան սանդուղքը բարձրանալ, բայց վերջին աստիճանին չհասած՝ ճանապարհից յանկարծ վայր գցեցին իրանց: Ես տեսնում եմ որ շատերի համար նրանք պարծանք են, շատերը երանի են տալիս նրանց, որ ոչինչ չունէին ու այժմ երեք յարկանի տներ են ձգել, կառք ու կարեւորներ սարքել. բայց այն մարդու համար, որ ունի այստեղ (Ձեռքը կրծքին է խփում:) սիրտ ու ազնուութիւն, նրանք կորցրին իրանց մարդկային արժանիքը... 2է, չէ, հայր, չէ, իմ համոզմունքները խորը արմատներ են ձգել սրտումս և միայն այն ժամանակ կարելի է հանել նրանց, երբ խելքս կը կորչի և սիրաս կը մեռնի: (Լուռօթիւն:) Ստեփան Դանէլիչի աղջիկն ինձ բոլորովին յարմար չէ. նրա համար շատերը կան, որոնք նրա փողով և բաժինքով իրանց շատ և շատ բախտաւոր կը համարեն:

ՍԱՐԳԻՍ

Քառ քու միտկն ինչ է, հէնց ապրիս, դընտան ասա:

ՄԻՔԱՅԷԼ

Իմ միտքն արդէն քեզ յայտնի է, հայր. իմ ընտրածն Անանին է, բացի նրանից ես ոչ ոքի հետ չեմ կարող կեանքս կապել: (Առաջ դալով բռնում է հօր ձեռքը:) Աղաչում եմ քեզ, հայր իմ, արգելք մի լինիր երջանկութեանս. դու լաւ գիտես, հայր, որ մինչև ծանր ու բարակ չէի մտածել, ես այսպէս

հաստատ չէի խօսիլ: Իմ սէրը մի նմանեցնիր այն սիրոյն, որ մարդ մի գեղեցիկ աղջիկ է տեսնում և նրա գեղեցկութեամբ խսկոյն յափշտակվում: Անանու խելքը, խղճմտանքը, վարքը, ինչպէս մէկ բան կը շռուես, այնպէս կը շռուել եմ և հաստատ համոզուած եմ որ նա այնպիսի կին կը լինի ինձ համար, որպիսին ես վաղուց ցանկանում էի և երազում:

ՍԱՐԳԻՍ, ուսերը բարձրացնելով:

Լաւ իս ասում, վուրթի, ամա վուր փնւղ չունէ. դուն «հա ու չէ» չիս իմանում... Ախար դուն ու նա դիփ մենակ խօմ շիք մնայ աշխրբումը. չէ վուր էքուց, էյօր վուրթիք կուլին, էն վուրթիքերանցը ջեր ծծմէր է հարկաւոր, իժում պահնուրթնիր, իժում ուսում. ինչո՞վ իս տալի, ինչո՞վ: Իմ կայինքը խօ դիդիս, զարթնի քիզ 'երիք վուրթի էլ ուրիշ ունիմ. ինչ կու ննգնի ձիզ մարթագլուխ, յիշիլն էլ ամուրթ է, ու քու տօնլուղով խօմ ապրիլ շի ըլի քախկումը: Քիզ վուր էտղաղա ուսում տուի, քու խճպտանքը դարուլ կ'օնէ վուր քու վուրթիքը քիզ վրայ պակաս ուսում ունենան:

ՄԻՔԱՅԷԼ

Իմ որդւոց ուսումը, հայր, ինձ այնքան թանգ չի նստիլ, որքան քեզ: Երեխայոց սկզբնական կըրթութեան և դաստիարակութեան համար ոչ այնքան ուսուցիչներ են հարկաւոր, սրբան բարի և կըրթուած մայրեր, և այդ մայրը Անանին է: Ոչինչ չեմ կամենում քեզանից, հայր, ինչ ծախսել ես ինձ վրայ, չափից աւելի եմ համարում, մնացած կարողութիւնդ թող միւս որդւոցդ լինի. ես միայն քո օրհնութիւնն

եմ խնդրում, հայր, օրհնիր ինձ այս ճանապարհի վրայ, էլ ուրիշ հարստութիւն հարկաւոր չէ ինձ: (Լուռօրէն. յետոյ առնելով ձեռքը:) Ոչինչ չես ասում, հայր, համաձայնովում ես: (Գրկում է:)

Խնդրում եմ, հայր, մէկ «այո», մէկ «այո», և քո Միքայէլը ամբողջ իր կեանքումը բախտաւոր կը լինի: ՍԱՐԳԻՍ, վեր կենալով գրկում է եւ արտասուաւի ծայրով: Բարէմց ասա, վուրթի, վուր դանակը վիկալինիմ ու իմ ձեռով բողբոջ դուս կտրիմ, էլի: 2է, Միխէիլ ջան, չէ, վուրթի, էտ չըլելու բան է. խիլքդ մձդ արա ու դուն ինքդ կու իմանաս վուր եանդլիլ իս:

ՄԻՔԱՅԷԼ

Մինչև այսօր քեզ խոնարհ եմ եղել, հայր, խնդրում եմ քեզ իմ խոնարհութեան կապը մի քանդիր, մի հասցնիր ինձ այն տեղը, որ մէկ քանիսի նման իմ հայրական առևեր թողնեմ և գնամ իմ ուղածը կատարեմ:

ՍԱՐԳԻՍ

Հաթաթէք էլ իս տալի. էտէնց իս վջարում իմ ամազը:

ՄԻՔԱՅԷԼ

Քո ամազը—եբախտիքը որ հասկանալիս չլինէի, հայր, այսքան էլ չէի աղաչիլ:

ՍԱՐԳԻՍ, տարանալով:

Իմ աղանչաքը խիստ իս լսում, վուր քու աղանչաքը 'ես լսիմ: 'Ես իմացիլ իմ՝ պատիկը մինձին անգամ գնէ, չէ թէ մինձը պատրկին:

ՄԻՔԱՅԷԼ, վիրաւորում:

Համաձայն եմ, հայր, բայց ճշմարիտ խօսքն էլ պէտք է յարգիլ:

ՍԱՐԳԻՍ, չարանալով:

Մէ ճշմարիտ էլ դուն կու'լիս ինձ մօդ, քու գլխի պատուելը գիղենայ. չէ էլ ամանչում, ինչ հանգն է հիդս խօսում: (Լուռօրէն:) 'Ես քիզ վիրչի անգամն իմ ասում, տուտուց բանիլը գլխէմէտ հանէ ու Ստեփան Գանէլիչի ախչկան ուղէ, թէ չէ, Աստուձ գիղենայ, էլ ինձմէն շիս պրծնի. տանէմէն դուս կ'օնիմ էս սահաթիս, էլ քիզ շիմ մնա:

ՄԻՔԱՅԷԼ

Ինչ կամենում ես այն արա, հայր. իմ ընտրածը Անանին է:

ՍԱՐԳԻՍ

Վուր քու ընտրածն է, դէ գնա ուղէ ու էլ վուրթի մի յիշուի իմը, տեսնիմ վննց իս ուղում. ամա 'եփոր դուն Անանուն ուղիս, էնչախը պարծեցի: (Լուռօրէն. կանգնում է Միքայէլի առաջ եւ ձեռքն իր կրծքին խփում:) Ը՛մ, Միխէիլ, 'ես թէ քու օխտէմէն չէկայ, (Ձեռքը տանելով դէպի ընչացքը:) բաս էս բիխս էստի չի ըլի:

Գլխարկը վերցնելով, դուքս է գնում ձախ դռնից:

ՄԻՔԱՅԷԼ

Իսկ ես չուտով կը վերջացնեմ գործը, թէև յաւիտեան երեսիս չնայես:

Դուքս է գնում աջ դռնից: Վարագոյրը իջնում է:

... րոն էմի սի' ուր մար յի արցանէ՞ յՄ  
մրտա՞ չի՞ մասնանա յի յ: լամերոյր զլիտոտար  
... րոն էմի սի' ուր մար յի արցանէ՞ յՄ  
մրտա՞ չի՞ մասնանա յի յ: լամերոյր զլիտոտար

**ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐՔ**

Բեմը ներկայացնում է Սուրբ Թեոփիլոսի և Սուրբ Կրիստոփորոսի միջև կատարված խոսակցությունը։  
Թեոփիլոսը աջ, ձախ և մեջտեղը։ Սենեակի աջ կողմը դրած է գիվան, առջևը մի սեղան թանկագին ծածկոցով և կողքին մի բազիլիթոս։ Իսկ ձախ կողմը՝ լուսամտի մօտ, փոքրիկ դաշնամուր, մեկ բոլորակ սեղան՝ նոյնպես ծածկած սփռոցով, և աթոռ։ Վերջին սեղանի վրայ դրած է ձեռագործի մի փոքրիկ դամբիկ։ Խորքում աթոռներ։ Լուսամուտներն ու դռները ծածկուած են դրապերներով։

**Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն**

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, ուսնոցներով ու սպիտակ խաչը կրողներին դիվանի վրայ նստած, լրագիր է կարդում, ՍԱԼՕՄԷ, դեմ առ դեմ, բազիլիթոսի վրայ նստած, սուրճ է պատրաստում, ԱՆԱՆԻ, ձախ կողմի աթոռի վրայ նստած, բոլորակ սեղանի մօտ դիրք է կարդում։

**ՍԱԼՕՄԷ**

Էրնէկ գիղենամ քանի կարթաք... (Անանուն) էա ինչ գիր է, վուր էրէգուան դէսը, ձեռնէտ չիս վէր դցում։

**ԱՆԱՆԻ**

Օհ, շատ հետաքրքիր գիրք է, մայր իմ, ես դեռ այսպիսի պատմութիւն չեմ կարդացած։

**ՍԱԼՕՄԷ**

Մէ տուտուց բան կու'լի, էլի։

**ԱՆԱՆԻ**

2է, մայր իմ, դու սխալվում ես։

**ՍԱԼՕՄԷ**

Բայ չէ ու խիստ խելօք իմքնիր կու'լի գրած։ (Տարով մի բաժակ սուրճ Եւոգոր Սիմօնիսին) Կաթ էլ ամիմ։

**ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ**

Վունցոր գ'ուզիս։

**ՍԱԼՕՄԷ**

Իհ, ուցնալուր իս, քան. 'ես խօս չիմ պիտի խմի։

**ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ**

Լու, լաւ, աման։

**ՍԱԼՕՄԷ**

Ահրա... (Անանուն) էա գրիրն է գժուեցնում գիլի ձիգ։ 'ես պիտի Միխէիլին առիմ վուր էլ գրիր շտայ քիգ։

**ԱՆԱՆԻ**

Հաւատան, մայր իմ, որ եթէ լաւ գիրք չիլնէր՝ Միքայէլը չէր տալ ինձ։

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, լրագիրը բանալով եւ բաժակը խառնելով։

Անանին դուրթ է ասում, Սալօմէ, Միխէիլի տուած գիրը լաւը կու'լի։ էա ինչ է, բօման է, Անանի։

ԱՆԱՆԻ

Ո՛չ, սա բոման չէ, հայր իմ, սա մի խեղճ աղջըկայ պատմութիւն է, որ սարսափելի տանջանքներ է կրում ծնողների ձեռքից:

ՍԱԼՕՄԷ

Հարաթ գժութին է էլի անում ու էնդուր էլ տանջում ին էլի:

ԱՆԱՆԻ

Ընդհակառակը, մայր իմ, նա շատ խելօք և պարկեշտ աղջիկ է դուրս բերած այստեղ. խեղճը լուռ ու մունջ տանում է այդ նեղութիւնը չորս պատի մէջ:

ՍԱԼՕՄԷ

Ա՛յ, բարաբալա ախշիկ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Իժում վննց է վիրշանում էտ պատմութիւնը:

ԱՆԱՆԻ

Դեռ չգիտեմ, հայր, ես շուտով կը վերջացնեմ և կը պատմեմ քեզ:

ՍԱԼՕՄԷ

Լաւ է, լաւ, արի՛ քու փնջանը վիկայ:

ԱՆԱՆԻ

Այո՛, մայր իմ, ես կը վերցնեմ, թո՛ղ դեռ մնայ այդտեղ:

ՍԱԼՕՄԷ

Օղօնց կի ձեռիտ գիրը ըլի ու էն էլ Միխէիլի տուած գիր, քիզ համա դավա է ու դավա, էլ դավա ինչ կ'օնիս:

ԱՆԱՆԻ

Օ՛, ես Միքայէլին շատ եմ պարտական, մայր

իմ. եթէ նա չլինէր, ես շատ բաների մասին այսքան հասկացողութիւն չէի ունենալ:

ՍԱԼՕՄԷ, յօնքերը կիտած:

Լաւ, լաւ... Ամա նա էլ ինչի՛ ուշացաւ, թէ վուր էն օրը խոստացաւ վուր դավի վրայ էսօր միզ մօզ կու'լի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Ո՛ւր է, 'ես էլ նրան իմ մնում, մէ էս թուխան իրան էի տուի. էն խիղճ կնգան չիմ գիզի ինչ ասիմ:

ԱՆԱՆԻ

Հանգիստ կաց, հայր իմ, երբ Միքայէլը մի բան խոստացաւ, անպատճառ կը կատարէ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, ցածր ձայնով, Սալօմէին:

Դուք նրան իբ հաւնում, նա էլ ձիզ. էլ ինչ է ջանջլացնում հէր օխնածը:

ՍԱԼՕՄԷ, Եագօր Սիմօնիին, նոյնպէս ցածր ձայնով:

Ի՛նչ է ասո՛ւմ, մինք հաւնում ինք ու դուն չիս հաւնում. ամա նրա ուժամուր հօրն ինչ անէ մարթ. նրա քօփակ գլուխն էլ: 'ես Մէխէիլի միտկը լաւ գիզիմ, էքէզ նրա մօր հիզ էլ խօսեցայ. ջեր ուզում է հօր կամքն ըլի միթամ, թէ չէ մէ խօսի վուր ասիմ՝ էսօր էւէտ հազիր է, քու արիւր:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, պատրաստելով ծխաքարշը:

Ղուրթ, ինչ ջահիլ է... Ա՛նանի, մէ օտիէ: (Անանին վեր է կենում, ծխաքարշը վառում եւ յետոյ կրկին իր տեղը նստում, ձեռագործով պարսպում:) Նրա վրայ էլ... (Մխերով:) լաւ տղայ կու'լի քախկումը:

ՍԱԼՕՄԷ, երկար յոգեց հանելով:

Թէ փուզ կ'ունենանք, Եագօր ջան, 'ես գիզիմ

լաւը վուրն է. ամա ինչ անիս, միր կարողութենի  
գօրա Միխէիլն էլ շատ է, օղօնդ նրա հէրը կամք տայ:  
ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Քաս սնմն իս ուզում քու մտկումը, վուր նա էլ  
շատ է:

ՍԱԼՕՄԷ

Դուն մէ էրկու հազար թուման տու, 'ես գիրիմ  
ուսմոր կուտամ ախշկաս:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Ասինք ունիմ ու տուի էլ... (Դատարկ ձեռքը ձգե-  
լով:) Ըահան, քիզ փէշքաշ:

ՍԱԼՕՄԷ

Ջեր էս վուր ինչ գ'ուզէ ուսում առած ըլի ու  
լաւ տղայ, քախկցու վուրթուն ախշիկ չիմ տա:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Պօլիօվնիցա իս ախար, վսնց կու'լի: (Ծիծաղում  
է:) Հան, հան, հան... Քաս էսօր-էքուց վուր 'ես քիզ  
գէնէրալշա շինիմ մէ բաշ, Սալօմէ, աւտաս Միխէի-  
լին իսկի տուն էլ չթողնիս, ըմ:

ՍԱԼՕՄԷ

Հիմի խօ խիստ ուրախ իմ ու մնացիլ է էնշախը:  
ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Վան, գէնէրալշա Սալօմէ... (Վեր կենարով:) Վանշէ  
պըէվասխաղիտէլստիօ... Ըհը, սվ գիմնայ քիզ: (Ծի-  
ծաղում է:) Հան, հան, հան...

ՍԱԼՕՄԷ

Հան, ծիծաղի, ծիծաղի, ինչսվ իմ ուրիշներէմէն  
պակաս, չի սազ գայ թէ ինչ է: Ո՛վ գէնէրալշէք  
ին, ինձ վրայ լաւն ի'ն:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, ծիծաղում է:  
Հան, հան, հան... Վրայ էրկուսը:  
ՍԱԼՕՄԷ, նեղանարով:  
Վրայ էրկուսը վուր խղճութիւնը շատ բան կ'օնիլ  
տայ մարթու:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Վրայ 'երիքը':

ՍԱԼՕՄԷ, բարկանարով:

Վրայ 'երիքը վուր քու գլուխ շունիմ:  
ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, ծիծաղելով:  
Հան, հան, հան... Դուն ինչ կ'օսիս, Անանի:  
ԱՆԱՆԻ

Ես այն կ'ասեմ, հայր իմ, որ Միքայէլը շատ բա-  
րի և ազնիւ երիտասարդ է:

ՍԱԼՕՄԷ, բարկանարով Անանու վրայ:

Էրնէկ գիղենամ քիզ սվ է խօսեցնում:  
ԱՆԱՆԻ, համեստօրէն:  
Մայր, ես պատասխանում եմ իմ հօրը:  
ՍԱԼՕՄԷ

Է՛լի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Նո՛ւ, 'եփոր դուն չարացար, Սալօմէ, դիփ մէտի  
փշացաւ:

ՍԱԼՕՄԷ, շարունակելով:

Քանի ջէք իմ քիզ ասի վուր նրան իմ հակառակ  
մի խօսեցնի. ինչ կարք է:  
ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Լաւ, լաւ, դուն գիրիս, Սալօմէ. կնգդերանց բա-  
նումը 'ես չիմ խառնվում... Փան, փան, 'ես փան:

ՍԱԼՕՄԷ

Էտէնց, 'ես քիղ ասում իմ վուր քու բան չէ:  
ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, զինուորական կանոնին համաձայն ծիղ  
կանգնում է եւ աջ ձեռքը հակատին տանում:

Սլուշարիւս:

ՍԱԼՕՄԷ, ոտքը յատակին դարկելով:

Ննւ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, ձեռքը ճակատին շուռ դարով:

Նա լէվա կրուզում, մարշ:

Գնում է դէպի բեմի խորքը:

Տ Ե Ս Ի Լ Բ

ՆՐԱՆՔ, ՄԻՔԱՅԷԼ

ՄԻՔԱՅԷԼ, մտնում է միջի դռնից:

Բարի օր ձեզ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Ա՛, Միխէիլ, սրի, է՛, քիղ ինք մնում:

ՄԻՔԱՅԷԼ, Եագօր Սիմօնի ձեռքն առնելով:

Ի՞նչպէս էք:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Չատ լաւ, վունցօր տեսնում իս:

ՄԻՔԱՅԷԼ, Սալօմէի ձեռքն առնելով:

Բարև ձեզ, տիկին... (Անանուն): Բարև օրիորդ:

Գնում է դէպի Անանին:

ԱնԱնի, դէմ գնարով:

Բարև ձեզ, Միքայէլ. (Միմեանց ձեռք են տալիս):  
Ինչի՞ այդքան ուշացար, անցեալ օրը դուք շասացի՞ք

որ այսօր ազատ էք եւ ամբողջ օրը մեզ մօտ կ'անց-  
կացնէք:

ՄԻՔԱՅԷԼ

Այո՛, օրիորդ. միայն ներողութիւն, գործ պա-  
տահեց:

ԱնԱնի

Օ՛, գործ, միշտ գործ...

ՄԻՔԱՅԷԼ

Ի՞նչ արած, օրիորդ, քանի որ մարդ ստիպուած է:

Գնում է դէպի Սալօմէն. Անանին նստում է իր

տեղը:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Համեցէք, նստի:

ՍԱԼՕՄԷ

Նստի, Միխէիլ ջան:

ՄԻՔԱՅԷԼ, ածող մօտ բաշելով:

Ներեցէք, մի վոքք ուշացայ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, հրաւիրելով դիվանի վրայ նստել, ուր

ինքն էլ է նստում:

Է՛ստի, էստի, դիվանի վրայ, ինձ մօդ, Միխէիլ  
ջան:

ՄԻՔԱՅԷԼ

Դուք առանձին սէր էք ցոյց տալիս դէպի ինձ,  
Եագօր Սիմօնիչ:

Նստում է դիվանի վրայ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Գիդէ Աստուձ, վուր քիղ (Անանու վրայ ցոյց տա-  
լով): Նրամէն շիմ ջողում:

Քիզ վուր շտիրինք, Միխէիլ ջան, բաս սեմը սիրինք. քիզ սիլ շի սիրի: Աբա դավէն վունց իս կամենում՝ կաթնով, թէ անկաթ:

ՄԻՔԱՅԷԼ

Եթէ կը ներէք ինձ, ես բոլորովին չեմ կամենում:

ՍԱԼՈՄԷ

Ի՞նչ է էլի ձիզ էսօր. վունց դուն իս ուզում, վունց Անանին:

ԵՆԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Մէկ-մէկու մօզ գրազ կուլին էկի, Սալօմէ:

ՍԱԼՈՄԷ

Այ, Անանու փնջանն էլ էստի է սառում:

ԱՆԱՆԻ, վեր կենալով տեղից:

Ես կը խմեմ, մայրիկ:

ՄԻՔԱՅԷԼ, նոյնպէս վեր կենալով:

Մի նեղանաք, օրհորդ, ես կը բերեմ:

Տանում է Անանու բաժակը:

ԱՆԱՆԻ, առնելով բաժակը:

Չնորհակալ եմ, Միքայէլ. իսկ գնէք:

ՄԻՔԱՅԷԼ

Ճշմարիտ, ցանկութիւն չունիմ:

ՍԱԼՈՄԷ, Անանուն:

Արի, արի, Անանի, մէ քու ձեռով պանրատէ, տիս ինչ լաւ է խմում. քու շինածն ուփրօ է դուր գալի դրան:

ՄԻՔԱՅԷԼ, ժպտալով:

Դուք շատ բարի էք, տիկին:

ՍԱԼՈՄԷ

Բարի հրիշտակը պահէ քիզ, վուրթի:

Միքայէլը ողջունում է:

ԱՆԱՆԻ

Դուք տխուր էք, Միքայէլ, ի՞նչ է հանդիպել:

ՄԻՔԱՅԷԼ

Առանձին ոչինչ:

ԱՆԱՆԻ

Օ՛, ես կ'իմանամ, առանց պատճառի չէ: (Գնում է սուրճ պատրաստելու:) Դու նկատում ես, մայրիկ, ի՞նչպէս տխուր է:

ՍԱԼՈՄԷ

Ո՛վ գիդէ, ի՞նչ դարդ ունէ:

ԵՆԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Առանց դարդ ծիան էլ չի ըլի, ասում ին: (Միքայէլին): Քէփիտ շիս էրեւում, Միխէիլ:

ՄԻՔԱՅԷԼ

Այն, մի փօքը լաւ չեմ գգում ինձ: (Թերթում է Անանու դիրքը, լետոյ ձգելով սեղանի վրայ, առանձին):

Պէտք է իսկոյն վերջացրած:

ԵՆԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, Սալօմէին ցածր:

Ջգրած է էրեւում:

ՍԱԼՈՄԷ, նոյնպէս:

Խիստ:

ԱնԱնի, բաժակը տալով Միքայէլին:

Ահա և ձեր բաժակը... (Միքայէլը ողջունում է:) Բայց ի՞նչ է պատահել ձեզ, Միքայէլ, ասացէք խընդրեմ, ես ձեզ երբէք այդպէս չեմ տեսել. ձեր դէմքը փոխուել է բոլորովին...

ՄԻՔԱՅԷԼ, բաժակը դնելով սեղանի վրայ:  
Ուշադրութիւն մի դարձնէք, խնդրեմ, փոքր ինչ  
զլուխս ցաւում է: (Ցածր:) Օրիորդ, ձեզ հետ առան-  
ձին խօսելիք ունիմ:

ԱՆԱՆԻ

Առանձին:

ՄԻՔԱՅԷԼ

Այո... (Բարձր:) Արդէն բաւականին կարդացել էք  
այդ գիրքը, ինչպէս է, հաւանում էք...

ԱՆԱՆԻ, նստելով իր տեղը:

Օ՛, շատ հետաքրքիր է, շատ շնորհակալ եմ.  
բայց ափսոս որ տկար էք, ես այսօր կամենում էի  
լսել ձեր կարծիքն այս գրքի մասին:

ՄԻՔԱՅԷԼ

Ղերջացրէք, վերջացրէք, օրիորդ, մենք այդ գրքի  
մասին շատ կը խօսենք:

ՍԱԼՕՄԷ

Հէնց ապրիս, Միխէիլ ջան, էլ էտ հանգի գիր  
մի տա դրան. իրիգուն ինչքու կէս-գիշերը կարթում  
էր ու էսօր սաղ օր ձեռնէն չէ վէր գցի ջեր. քանի  
կարելու ու գործելու բան ունէ իժում:

ԱՆԱՆԻ, վերցնելով ձեռագործը:

Ես իմ գործը շինում եմ, մայրիկ:

ՍԱԼՕՄԷ

Սնւ, լաւ է, ձէնդ. էրնէկ գիղենամ, ինչ է դուս  
գալի էտ կարթալէմէն. հաց չէ տալի ու ջուր:

ՄԻՔԱՅԷԼ

Ի դուր էք այդպէս դատում, աիկին:

ՍԱԼՕՄԷ

Բաս ինչ է: ԵՆԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, Սալօմէին:  
Թողէք էտունք... (Միբայէինն:) Մէ արի, նստի  
էստի հալա... Այ, էն խիղճ կնգայ թուխտը, վուր  
ասում էի: (Տալով Թուղթը:) Տիս, թէ կանաս, օտկէ,  
հէնց ապրիս:

ՄԻՔԱՅԷԼ

Մեծաւ ուրախութեամբ:

Նստում է աջ կողմը եւ լուս կարդում:

ՍԱԼՕՄԷ, ծանր քայլերով մօտենում է Անանուն, ցածր:

Արա մէ տեսնիմ վննց է դուս գալի: (Ձեռագործը  
վերցնելով:) Էս սիւ թիւն ուր իս խառնի, քն:

ԱՆԱՆԻ

Միթէ չէ սագում, մայր, կարծեմ դա աւելի է գե-  
ղեցկացնում:

ՍԱԼՕՄԷ, նստելով Անանու մօտ:

Իսկի էլ չէ. կարմիրն ուփրօ լաւ կուլի:

ԱՆԱՆԻ

Ինչպէս կը հրամայես, մայր իմ:

Խօսում են ձեռագործի մասին:

ՄԻՔԱՅԷԼ, Նագօր Սիմօնիին:

Աս մի դժուար գործ չէ:

ԵՆԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Մէ չնրա արա, արիւրդ սիրիս. էն կնգայ օխնանքը  
քիզ հէրիք է:

ՄԻՔԱՅԷԼ

Միւմիտ կացէք, ես հէնց այսօր կ'աշխատեմ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Ա՛յ, ապրիս, վարցի գ'ուզիս, էտ է: Ախար կանգ-  
նիլ ին փուղ ին ուղում. ինքն ինչ ունէ էն խիղճ  
կնիկարմաւը, վուր ուրիշին ինչ տայ, է: Գ յոգ

ՄԻՔԱՅԷԼ, վեր կենալով տեղից: այա՛ճ յոս՛ճ  
Փո՛ղ, փո՛ղ ու միշտ էլ փո՛ղ... (այո՛ճ) յի՛ճ նասա

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ անիս, վուրթի. էս ժամանակին ինչոր վուր  
է, խօսկը փուղն է: Գնամ ի տոյսդ տ աճ՛ճՍ

ՄԻՔԱՅԷԼ

է՛հ, աիկին, դուք էլ հօրս պէս էք դատում: ԵՅՍ

ՍԱԼՕՄԷ

Թէ կի առանց փուղ մարթը մարթ չէ: ԵՅՍ

ԱՆԱՆԻ

Ի՞նչ ես ասում, մայր իմ, միթէ ուր փող չունի,  
նա մարդ չէ: ԵՅՍ

ՍԱԼՕՄԷ

Բաս չէ ու... ԵՅՍ

Անանին զարմացած նայում է մօրը:

ՄԻՔԱՅԷԼ

Մի զարմանաք, օրիորդ, մայրդ կրկնում է այն,  
ինչ որ շատերն են ասում... Ո՛րքան էլ մարդ գի-  
տութիւն ունենայ, ո՛րքան էլ ազնիւ զգացմունքի,  
հանճարի տէր լինի՝ եթէ փող չունի, նրան մարդա-  
տեղ չեն դնիլ... Ամենաերեւելի մարդը նա է այստեղ,  
ով շատ փող ունի, թէն յիմարներէց ու ագէտներէց  
մէկը լինի... Ցաւալի՛ բան... չուտով կը սկսեն փողը  
Աստուծոյ տեղ պաշտել... ԵՅՍ

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Չատ դրուստ իս ասում, Միխէիլ ջան: ԵՅՍ

ՍԱԼՕՄԷ, անցնելով բեմի աջ կողմը: այ տոյս

էրանի կուլէր, վուրթի, էտէնց չէր էլի. ԵՅՍ

աշխարհը դուն խօ չիս կանա դրստի: ԵՅՍ

ՄԻՔԱՅԷԼ

Ես ինչ կարող եմ, ես մի հասարակ մահկանացու  
եմ. բայց զղուելի է, երբ մարդիկ փողի համար իրանց  
մոռանում են և ամեն աններելի միջոցներ գործ  
դնում՝ ուրիշի աշխատանքին տիրանալու:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Ա՛խ, Միխէիլ ջան, պիտի քիպէս մէ քանիսն էլ

լլին, վուր ինձպէս մարթու բանն էլ լաւ գայ:

ՄԻՔԱՅԷԼ

Մեծ պատիւ էք անում ինձ, Եագօր Սիմօնիչ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, վեր կենալով:

էրեսպաշտութին շիմ անում, գիզէ Աստու՛ճ: (Մի-

բայէլը ողջունում է: ) ձաշին խօ միզ մօզ իս:

ՍԱԼՕՄԷ, Եագօր Սիմօնիչին:

Բնս, քա. թէ վուր առուտեան էւէտ ասի:

ՄԻՔԱՅԷԼ

Չատ շնորհակալ եմ. ես ինքս խնդրեցի օրիորդին:

ԱՆԱՆԻ

Այն, հայրիկ, պարոն Միքայէլը այնքան բարի է,

որ խոստացաւ ամբողջ օրը մեզ նուիրել:

ՄԻՔԱՅԷԼ

Օ՛, օրիորդ, ինձ համար առանձին ուրախութիւն

է այդ: ԵՅՍ

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Միդ համա աւելի ուրախութիւն է, Միխէիլ ջան. իխստ լաւ իս փիքը արի... 'Ես մէ հարկաւուր բան ունիմ, շուտով յիդ դու քամ... Սալօմէ, մէ արի, մունդիրս հանէ: (Աջ դռնից դուրս գնալով՝ կանչում է:) Է՛յ...

ՍԱԼՕՄԷ

Էս սահաթիս, Միխէիլ ջան: Հտեւում է Նազօր Սիմօնիցին:

Տ Ե Ս Ի Լ Գ

ԱՆԱՆԻ, ՄԻՔԱՅԷԼ

ԱՆԱՆԻ

Միքայէլ, դուք վշտացած էք:

ՄԻՔԱՅԷԼ

Այո, շատ...

Անանի, մօտենալով Միքայէլին:

Ո՛ւմ վրայ և ինչի՞ համար:

ՄԻՔԱՅԷԼ

Մէկ օր կ'իմանար:

ԱՆԱՆԻ

Չէ, չէ, իսկոյն. աղաչում եմ ձեզ, Միքայէլ, սասացէք, ինչ է ձեր նեղութեան պատճառը... Միթէ ինձ այլևս ձեր բարեկամը չէք համարում. միթէ չէք կամենում ինձ ձեր նեղութեանը մասնակից անել... Ասացէք ձեր բարեկամուհուն, եթէ իրաւի ձեր բարեկամն եմ:

ՄԻՔԱՅԷԼ

Միթէ դուք կասկածում էք. ուրեմն ս՛վ է իմ բարեկամը, եթէ դուք չէք... Լաւ իմացէք, Անանի, որ ձեզանից առաւել թանկագին բարեկամ ես ոչ ոք չունիմ այս աշխարհում:

ԱՆԱՆԻ

Հապա ի՛նչ է պատճառը. սասացէք, խնդրեմ, Միքայէլ, յայտնեցէք ձեր նեղութիւնը: Հաւատացէք՝ չեմ կարող հանգստանալ, մինչև չպատմէք ինձ բոլորը:

ՄԻՔԱՅԷԼ

Յօրս հետ սաստիկ կռուել եմ:

ԱՆԱՆԻ

Օ՛, Միքայէլ, այդ ի՛նչ էք ասում. միթէ ծնողների հետ կարելի է այդպէս վարուել:

ՄԻՔԱՅԷԼ

Ամեն բանի մէջ չափ ու սահման կայ, Անանի... Մենք, ի հարկէ, պարտաւոր ենք երախտագէտ լինել դէպի մեր ծնողները՝ յարգել նրանց, սիրել, պատուել, օգնել, մինչև անգամ շինայել մեր կեանքը, եթէ այդ հարկաւոր է նրանց կեանքն աղատելու. բայց կատարել նրանց անտեղի պահանջները, նրանց ստրուկը դառնալ, զոհել մեզ միմիայն նրանց կամակորութեանը բաւականութիւն տալու համար՝ մենք ամենևին պարտական չենք... Քանիցս անգամ մենք արդէն խօսել ենք այս հարցի վերաբերմամբ. կարծում եմ, որ ինձ հետ համաձայն էք, այնպէս չէ:

ԱՆԱՆԻ

Այո, այո, Միքայէլ, ես լիովին համաձայն եմ ձեզ հետ... Ի հարկէ այդպէս է... Բայց կռուել ծնողի

հետ... (Առուժիւն:) Հետաքրքիր էր իմանալ թէ՛ այն-  
պէս ինչ պահանջ կարող էր սենեկալ հայրը՝ ձեզա-  
նից, որ դուք այդ աստիճան վշտանայիք:

**ՄԻՔԱՅԷԼ**

Ներեցէք, խնդրեմ, այդ մասին միւս անգամ...  
ես կը պատմեմ ձեզ, հաւատացէք կը պատմեմ: Այժմ  
ուրիշ խնդիր ունիմ ձեզ հաղորդելու:

**ԱՆԱՆԻ**

Այո, դուք առանձին խօսելիք ունեցիք... (Հրաւի-  
րելով նստելու:) Խնդրեմ:

Խնդրեմ էլ նստում է իր տեղը:

**ՄԻՔԱՅԷԼ**, նստում է նրա դիմացը. կարծ լռութիւն:

Անանի... շատ ժամանակ է մենք միմեանց ճա-  
նաչում ենք՝ միմեանց սիրան ու միտքը հասկանում...  
(Անանին շփոթվում է:) Խնդրեմ, վախենալու ոչինչ  
չկայ... Գեանքի վրայ մենք շատ անգամ խօսել ենք.  
մեր համոզմունքները գրեթէ մէկ են... Ասացէք  
այժմ, Անանի, դուք համաձայն կը լինիք ձեր կեանքը  
յաւիտեան կապել իմ կեանքի հետ... (Անանին ամօծ-  
խածուծեամբ գլուխը խոնարհեցնում է. լռութիւն:) Ինչի  
ոչինչ չէք խօսում, Անանի... (Առնելով ձեռքը:) Դուք  
բոլորովին գրաւել էք իմ սիրտը, իմ ուշքը, իմ միտ-  
քը... Ասացէք, Անանի, դուք կը կամենայիք իմ  
լինել:

**ԱՆԱՆԻ**, ամօծխած:

Ծնողներդ հետ խօսել էք, Միքայէլ:

**ՄԻՔԱՅԷԼ**, ձեռքը բաց թողնելով:

Ձեր ծնողների կողմից ոչինչ արգելք չի լինի:  
Անանի, ես այդ մասին բոլորովին վստահ եմ:

**ԱՆԱՆԻ**

Իրաւ է, նրանք շատ են սիրում և յարգում ձեզ...  
բայց և այնպէս՝ խօսեցէք նրանց հետ:

**ՄԻՔԱՅԷԼ**

Այո, այո, կը խօսեմ... Ինձ նախ հարկաւոր էր  
ձեր համաձայնութիւնը...

**ԱՆԱՆԻ**

Ես... ես... համաձայն եմ, եթէ, քի հարկէ, ծնող-  
ներս էլ կը կամենան... Իսկ ձեր հայրը, Միքայէլ,  
միթէ նա համաձայն է. ձեզ յայտնի է որ բացի իմ  
սեպհական թոյլ ոյժերից ես ուրիշ ոչինչ չունիմ:

**ՄԻՔԱՅԷԼ**

Ինձ միայն ձեր սիրտն է հարկաւոր, Անանի:

ԱՆԱՆԻ, առնելով ձեռքը:

Ա՛խ, ազնիւ Միքայէլ...

**ՄԻՔԱՅԷԼ**, համբուրելով նրա ձեռքը:

Այժմ ես բոլորովին երջանիկ եմ... Ես ևս, Անա-  
նի, բացի աշխատանքիցս ոչինչ չեմ կամենում ունե-  
նալ... Մենք կը վարձենք մեզ համար առանձին տուն,  
կը միացնենք մեր ոյժերն ու ձեռք ձեռքի տուած  
կ'աշխատենք. կ'ապացուցանենք աշխարհին, որ ա-  
ռանց ուրիշի օգնութեան կարող ենք ապրել...

**ԱՆԱՆԻ**

Օ՛, այն ժամանակ, Միքայէլ, ես քո հաւատարիմ  
ընկերուհին կը լինիմ, ես կ'օգնեմ քեզ, կ'աշխատեմ  
բաժանել քո լծի բոլոր ծանրութիւնը, ինչքան հնար  
է ինձ... Ես կ'իրագործեմ իմ երազած կեանքը...

**ՄԻՔԱՅԷԼ**, նորից համբուրելով Անանու ձեռքը:

Իմ ազնիւ, իմ քննող Անանի... Ո՛րպիսի երջան-

կուժիւն, որ ամբողջ կեանքս քեզ հետ պիտի անց-  
կացնեմ... Այն, ես երջանիկ եմ, այն աստիճան եր-  
ջանիկ, որ կարծում եմ թէ այս բոլորիս աշխարհիս  
երեսին չկայ ինձ նման մէկ ուրիշը: (Կրկին ու կր-  
կին համբուրում է նրա ձեռքը:) Ահ, թուղթը... (Վեր  
կենարով:) Չտապեմ, այս յանձնարարութիւնը կատա-  
րեմ... (Վերցնում է թուղթը. Անանին եւս վեր է կե-  
նում:) Ես չուտով կը վերադառնամ և կը խօսեմ  
ծնողներիդ հետ... (Գարծեալ համբուրելով Անանու ձեռ-  
քերը:) Ցտեսութիւն, իմ թանկագին, իմ աննման  
Անանի... ես այս բոլորիս...

Դուրս է վազում միջի դռնից:

**Տ Ե Ս Ի Լ Ե**

**ԱՆԱՆԻ, յետոյ ՍԱԼՕՄԷ**

ԱՆԱՆԻ, մենակ. երկար լուռութենից յետոյ:  
Ազնիւ, ազնիւ Միքայէլ. ինչքան սիրելիս է կեղեկ  
ինձ... Օ՛, սրբան երջանիկ եմ ես այս բոլորիս...  
ՍԱԼՕՄԷ, դուրս գալով ծախ դռնից:  
Միխէիլին ինչ էլաւ:  
ԱՆԱՆԻ, ընկնելով մօր գիրկը:  
Ա՛խ, մայրիկ...  
ՍԱԼՕՄԷ, փոքր լուռութենից յետոյ:  
Ի՞նչ է. ինչ է պատահի:  
ԱՆԱՆԻ, աչքերը սրբելով:  
Միքայէլը... Միքայէլը խնդրում է իմ ձեռքը:

**ՍԱԼՕՄԷ**

Ի՞նչ. Միխէիլին ուզում է քիզ:  
ԱՆԱՆԻ

Այն, այն... նա խոհոյն կը վերադառնայ և կը խնդրէ  
ձեր համաձայնութիւնը:

**ՍԱԼՕՄԷ**

Մուլափ, մուլափ, Անանի ջան, իժում ի՞նչ ասաւ...  
հէրը կամք է տուի՛ր... ասաւ:

**ԱՆԱՆԻ**

Չգիտեմ, մայր իմ, նա այդ մասին ոչինչ չա-  
սաց ինձ:

**ՍԱԼՕՄԷ**

Ի՞նչ է ասում, քո, բայտ առանց իր հօրը՞. էա  
խօսմ առանց քիզ էլ գիդէի: (Քաղցրութեամբ:) Ուզում  
իմ քննադատը անէ միզ էն մարթը՞:

**ԱՆԱՆԻ**

Ոչինչ չգիտեմ, մայրիկ...  
ՍԱԼՕՄԷ

Լաւ գիդենաս վուր ինչու՞ հէրը կամք չտայ, 'ես  
վունչիչ բանով դարուլ չիմ անի... Իմացար... Տէր  
Աստուծ, ինչ պիտի ըլի էս ջէհէլներու բանը... (Նըս-  
տում է բեմի ծախ կողմը:) Նրան սով էր ասում քիզ  
հիզ խօսի, չէր կանայ ջեր մէ ինձ հիզ մասլահաթ  
անի՛:

**ԱՆԱՆԻ**

Նա խոհոյն կը գայ:  
ՍԱԼՕՄԷ

Իժում դուն ինչ ասիր. խօսի տուի՛ր:

ԱՆԱՆԻ

Այն, մայր իմ, ասացի որ ես իմ կողմից համաձայն եմ:

ՍԱԼՕՄԷ

Վճույ ընդհանամ 'ես. առանց ինձ... էտ է քո արհեստը:

ԱՆԱՆԻ

Ես նրան ասացի որ ես համաձայն եմ, եթէ իմ ծնողները եւ համաձայն կը լինին. կարծեմ թէ ձեզ ընդդէմ չեմ վարուել:

ՍԱԼՕՄԷ

Լաւ է, լաւ, դուն մէ էտունք վիբադէ, օմքին գայ ինչ կ'օսէ, տեսնինք իժում Աստուծ ինչ է տալի: (Անանին շուարուած հաւարում է սրճի բոլոր պարագաները սկուտեղի վրայ. իսկ Սալօմէն, նստելով բեմի ձախ կողմը եւ շարունակելով Անանու ձեռագործը, առանձին:) Խիլքս չէ կարում վուր էն քօփակը դարուլ ըլի արի... ամա արտավազլախ նրա դլիսին, փուղ չունիմ ու բաժինք, բաս ուրիշ սիլ գ'ուղէ դար ու դարդակ արչկաս:

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ, մտնելով միջի դռնից, ստոնօրէն ողջունում է: Բարի լուս ձիգ:

ՍԱԼՕՄԷ, հպարտաբար վեր է կենում եւ ողջունում:

Աստձու բարին, համեցէք: (Առանձին, մինչդեռ Սարգիսը եւ Անանին ողջունում են միմեանց): Թայլին

կուռելու է գալի հիդս. քու բէղասլ գլուխն էլ... (Սարգիսն, ստոնօրէն:) Համեցէք, նստեցէք: (Անանուն, նստելով:) Ի՞նչ էլաւ քիզ, մօղ արա ու տար, էլի:

ՍԱՐԳԻՍ, նստելով:

Էս սուր է Եադօր Սիմօնիչը. տանը չէ:

ՍԱԼՕՄԷ

Հիմի դուս գնաց:

ՍԱՐԳԻՍ

Ուփրօ լաւ. քի մօղ կու խօսիմ:

ԱՆԱՆԻ, առանձին:

Մ'իս, Աստուած իմ, ինչ է լինելու արդեօք:

Դողալով տանում է սրճի բաժակները:

ՍԱԼՕՄԷ

Հրամայէ, պարուն: (Այս միջոցին Անանին ձախ կողմի դռան մօտ վայր է գցում մէկ բաժակ, որ կտրրփում է:) Ա՛նչուք, էտու կտարիլն էլ ինչ էր:

Անանին դուրս է գնում:

ՏԵՍԻԼ Զ

ՍԱԼՕՄԷ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ

Հաջաթ չէ. կու'լի շառն էտու վրայ անց կենայ... Դուն ինձ ասա, իմ քուր, էս ինչ օրէնք է. 'ես մեռիլ իմ թէ ջեր էլի գեղնի էրեսին ման իմ գալի... Ախար առանց ինձ էա հանգի բան բանիլ կու'լի... էլ հէր ու վուրթուրինը գանա վիր ննգաւ աշխարքէմէն:

... ի մոլորաց յտարեց ՍԱՂՕՄԷ՛ զի վար ի արմատոսի  
ինչի՛ վրայ իս ասում, նեա չիմ հասկանում:

ՍԱՂԳԻՍ

Խիստ լաւ հասկանում իս էլ նու գիղիս էլ: Ախար  
էս իմ տղին սըր իք գժուեցրի. նեա բաց աչկալ կու  
թճղնիմ վուր նա մուքթ ախշիկ ուզէ:

ՍԱՂՕՄԷ

Միդ անմիղ իս միդ դնում, պարուն. ամեն մարթ  
իր բանը գիղէ. թէ կի քու տղէն միղ է հանում  
ու մինք էլ նրան, էտումը ինչո՞վ ինք միղաւուր:

ՍԱՂԳԻՍ

Բաս նեա էլ վունչիչ, էլի:

ՍԱՂՕՄԷ

Ո՞վ է ասում, ո՞վ է ասում, պարուն. լաւ գիղացի՛  
էլի քու խաթը ու պատին է, վուր ինչու էսօր  
մնացիլ է բանը, թէ չէ վից ամիս վաղ կու փտակէի...

ՍԱՂԳԻՍ

Ջատ շնորակալ իմ էտ դադա պատուի համա,  
չա՞տ... Ամա մէ ինձ ասա՛, Սալոմէ, դուն խելօք կնիկ  
իս, իմ ասածը չուստ կու հասկանաս... Փուղ ու  
բաժինք դուք չիք տալի, ախպէր, ու չունիք էլ...  
բէղամաղ մի ըլի, գէթ աղվա, ու նեա խօսմ՝ թէ Մի-  
խէիլի ու Անանու բանը գլուխ իք բերի՛ էն ներ-  
գնային Թաքաւորի գօրութիւնը գիղենայ, վուր մէ  
գրօշն ինչ է, չէ թէ մէ գրօշ չիմ տա Միխէիլին  
ամա էլ յաւիտենական մօղ չիմ թողնի վունց մէ-  
կին... Տիմի միխկն ու վարցիլը քու շինքին:

ՍԱՂՕՄԷ

Ի՞նչ իս դնամիչ անում, պարուն, թէ փուղ չու-

նինք... շատ մարթ կայ փուղ ունէ, շատն էլ աղը-  
ւութիւն:

ՍԱՂԳԻՍ

Գիղիմ, գիղիմ վուր աղնիվուրթ իք իք, նեա մէ  
բէղասլ քախկցի իմ, ինչ անինք:

ՍԱՂՕՄԷ

Տա՛, լաւ գիղացի, պարուն, վուր փուղ էլ ունի-  
նանք, էլ Անանու քու Միխէիլին չէի տա. նրա վը-  
րայ լաւիւն էլ շատ կան:

ՍԱՂԳԻՍ

Ա՛յ, օղորմի քու հօրը. նեա վուր ասում իմ խելօք  
իս, էտ իմ ասում, է... Բաս էս սահաթ իս նեա վուր  
ձիդ համա իմ Միխէիլի վրայ լաւը ճարիլ ըլիմ,  
վուր աղանչարով, պաղանտարով ուզում ըլին ձիր  
Անանուն, ինչ կ'օտիք:

ՍԱՂՕՄԷ

Նեա Միխէիլին էլ դարուլ իմ, քու արիւը, օղօնդ  
քու կամքն էլ ըլի:

ՍԱՂԳԻՍ

Է՛հ, Միխէիլը վնւրն է. Միխէիլի վրայ սիրուն,  
Միխէիլի վրայ տիտուկ, Միխէիլի վրայ ջահիլ ու հա-  
րուստ, հարուստ, վուր քախկումը մէկն էլ չկայ:

ՍԱՂՕՄԷ

Էտ ո՞վ է:

ՍԱՂԳԻՍ

Ինքնաբաւական:

ՍԱՂՕՄԷ

Տտեփան Գանէլիչ Բրիլիանտօվի տղէն:

ՍԱՂՕՄԷ

Կն վուր էրէգ ձիր տանը տեսայ. նրա տղէն:

ՍԱՐԳԻՍ

Հնա, հէնց նա:

ՍԱԼՕՄԷ, ուրախ:

Հանաք իս անձում, պարուն, թէ մասխարա իս գցում:

ՍԱՐԳԻՍ

Հանաք-մասխարութիւնը վնւրն է. օխնած հոքի:  
(Սուտ:) Էրէգ հէնց էս բանի վրայ էի խօսում հիղը,  
վուր դուն շնուրհ բերիր:

ՍԱԼՕՄԷ

Հալա թէ քու Աստուծ կու սիրիս:

ՍԱՐԳԻՍ

Աստուծն էլ ու 'երգինքն էլ. չիս աւտում... Ինձ  
թափաքալի մարթ մի գիղեհա, Սալօմէ:

ՍԱԼՕՄԷ

Իժում ինչի՞ Բարբարէն վունչիչ չասաւ ինձ:

ՍԱՐԳԻՍ

Ջեր վնւրդի էր Բարբարէն... նա վուր չէր տուն  
էկի՝ էրէգ էւէտ կու վիրչացնէի:

ՍԱԼՕՄԷ

Քու արիւր, պարուն, կիսի կէսին էլ արժանի  
չինք, թէ էս բանը կու'լի:

ՍԱՐԳԻՍ

Էտումը 'ես թափգէր, քիզ ինչ դաւի: Թէ վրայ  
էկաւ բանը խօ լաւ, թէ չէ ու ձիր հաւնած Միխէի-  
լը խօս էնդի է ու էնդի:

ՍԱԼՕՄԷ

Իժում ումիկ էրիտ Ստեփան Գանէլիչը:

ՍԱՐԳԻՍ

Կիկնեւրքումը խիստ նստեցաւ, քու արիւր... Իմ

աղի համա լաւ բան կու'լի, կօսէ... մէ հիղը խօսիմ,  
կ'օսէ:

ՍԱԼՕՄԷ

Հիմի իմ իմանում էն խօսկիրը, վուր ասաւ թէ՛  
'ես իմ ասելու ասի, ասում է, հիմի դուք խօսե-  
ցէք, կ'օսէ:

ՍԱՐԳԻՍ, կեղծաւորութեամբ:

Ախար վուր ասում իմ...

ՍԱԼՕՄԷ

Աբա ինչ փիքը կ'օնէի... Էնդուր էլ էնէնց հա-  
րապատիկ արաւ:

ՍԱՐԳԻՍ

Բաս 'ես էլ ինչ իմ ասում ախար:

ՍԱԼՕՄԷ

Տղէն խօ, քու արիւր, էն օրը Սարբանի թալումը  
գլինեւրուս փարվնի պէս պառտ էր գալի. ինչ սի-  
րուն ախչիկ ունիս, կ'օսէ. խոստացան էլ վուր վի-  
ղիտով գան միզ մօղ, ամա ջեր չին էկի:

ՍԱՐԳԻՍ

Մէ Աստուծ տայ վիրչանայ էս բանը, վիրիտով  
էլ գու քան յօրէսի դէնն ու առանց վիրիտի էլ:

ՍԱԼՕՄԷ

Ինչ ասիմ, պարուն, էս էն հանգի լաւութիւն  
կ'օնիս միզ, վուր ինչրու մահը պարտական կու'լինք:

ՍԱՐԳԻՍ

Չէ, Սալօմէ, 'ես սուտ սիլի-բիլիք չիմ գիղի. դուրթ  
է, լաւութիւն իմ անում ձիզ, մինձ լաւութիւն, ամա  
ուփրօ մինձ լաւութիւն 'ես իմ գլխին իմ անում՝ իմ  
Միխէիլին. մէ էս փորցանքէմէն աղատիմ 'ես նրան:

...սիրտը դրո՞ւմ իմ... **ՍԱԼՕՄԷ**  
Աստուծ նրան էլ էնէնց բախտաւուրէ, վունցոր  
քու սիրտը գ'ուզէ:

**ՍԱՐԳԻՍ**  
Ախար կանգնիլ է վրէս թէ՛ կնիկ ուղող մարթը,  
ասում է, պիտի կինաց ննգիրը պտուէ իր համա, չէ  
թէ փուղ ու բաժինը, կ'օսէ: Արա էս օրէնք է, քիղ  
իմ հարցնում: Առանց փուղ ննգրութիւն կու'լի աշ-  
խարհումը... Օրինակ ասինք՝ 'ես վունչիչ շունիմ ու  
հրամանքը էլ վունչիչ, ինչո՞ւմը կու դառնանք նրն-  
գիր... հը՛մ... Բէսար նամաղուլ արի, էլի, վուր 'ես  
նրան Ռուսէթ զրգեցի ու էն ուսումը տալ տուի-  
ամա էլ ինչ փայղա:

**ՍԱԼՕՄԷ**  
Ամեն իմ լաւ ուղողի վուրթին դուս գայ էնէնց:

**ՍԱՐԳԻՍ**  
Է՛հ, ծրէմէն դուսն է, ասում իմ, է՛. մէկ վուր  
ասում է «չէ», հէնց մկրատի պէս կանգնած է. մէ  
պօլկ հրիշտակ ու սատանայ վուր մօղ ըլին գլխին,  
նրա ասածը չին կանա փոխիլ տա: Հիմի թէ քու  
Անանին էլ էս հանգն է, 'ես դաւի շունիմ:

**ՍԱԼՕՄԷ**  
Տղի բանն ուրիչ է, պարուն, ախշկայ բանն ու-  
րիչ. վո՞ւնց կանայ Անանին իմ խօսկը չլսէ: Դուն  
ջնփա քաշէ, էլ մի ուշացնի, Անանու համա խաթը-  
ջամ կաց:

**ՍԱՐԳԻՍ**  
Ո՛վ գիզէ, Սալօմէ, ուսում առած ախշիկ է...  
իբանց ասածնիր ին: Ախար ախշկայ էս դաղամի

ուսումն էլ սլ է իմացի... Չխայտառակուիմ էն մար-  
թու մօղ, ամութ է:

**ՍԱԼՕՄԷ**  
Չէ, չէ, պարուն, ինչ իս ասում, դուն էնդի գը-  
լուխ բի բանը, Անանու ջուղաբը 'ես իմ տալի քիղ:

**ՍԱՐԳԻՍ**  
Ղօշաղ կնիկ իս, 'ես ու իմ Աստուծը... (Վեր կե-  
նարով:) Բաս 'ես կու տեսնիմ Ստեփան Դանէլիչին:

**ՍԱԼՕՄԷ**, նոյնպէս վեր կենարով:  
Հն, գէթաղվա. էլ ինչ աղանչաք անիմ:

**ՍԱՐԳԻՍ**  
Էն 'ես գիզիմ:

**ՍԱԼՕՄԷ**  
Ջուղարն էգէրա շուտ իմաց անիս, թէ չէ էլ  
չիմ դնջանա:

**ՍԱՐԳԻՍ**  
Վն, բնս, էսօր էւէտ. ես՝ շնտ, շատ ուշացնիմ,  
էքուց ինչըու էսչախը... (Գնում է, յետոյ յետ դառ-  
նարով:) Ամա ինչ միտս էկաւ, Սալօմէ. թէ քու վուրթ-  
կերանց արիւր կու սիրիս, Միխէիլի անգաճը չզցիք,  
ինչըու բանը քութահ ըլի, թէ չէ նրամէն էլ սաղ-  
սալամաթ չիմ պրծնի:

**ՍԱԼՕՄԷ**  
Արա ինչ իս ասում, պարուն, քիմէն չիմ արմը-  
նում... էրեխայ իմ:

**ՍԱՐԳԻՍ**  
Բէղամաղ մի ըլի, Աստուծ կու սիրիս, էնէնց մու-  
ղայթացնում իմ. սլ գիզէ մէ բաշ իմքին շասէ Անա-  
նուն ու զիփ տակն ու վրայ չըլի միւր դարսողութիւնը:

ՍԱԼՕՄԷ

Արխան կաց, արխան:

ՍԱՐԳԻՍ

Ղօջաղ կնիկ իս, 'ես ու իմ հոքին... (Գնում է, Սալոմէն փոքր ինչ հետեւում է:) Մարթ չիմ էլի, թէ վրայ չիմ բերի... (Առանձին, քթի տակ:) չըմ, Միխէիլ... Գուրս է գնում միջի դռնից:

Տ Ե Ս Ի Լ Է

ՍԱԼՕՄԷ, մենակ, երկար լուծիւնից յետոյ:

Միխէիլին շասիս, կ'օսէ. գժուիլ իմ թէ խիլքէս էլիլ իմ. հէնց գիդէ բանի զօրութիւնը 'ես չիմ իմանում... Ո՛վ Փեթխայինի Աստուծաձին, Գուն բարեխօս ըլիս... Ո՛վ կու փիքը անէր, ես սւմ մակումը գու քէր... Մեռնիմ Քու հրաշագութեանին, Գուն տաս միակ Ստեփան Գանէլիչին, վուր էս բանը գըլուիս գայ... էլի վուր Քու զօրութիւնն է փիքը անիլ տուի Սարքսին, թէ չէ ինչ գ'ուղէ ասէ՛ իր Միխէիլի համա էլ լաւ կու'լէր... Մէ գլուիս գայ էս բանը, էլ Միխէիլը վիս էկադրերա... Ա'խ, Աստուծաձին, օղօնդ կատարիս էս իմ սրտի խոխուրթը, գլուիս շարի փուիս կ'օնիմ Քիզ. բան ու գուրձս Քու սանդըխանիքը կու շինիմ, իմ մատներով Քիզ համա փիանդագ կու կարիմ, աչկիրս Քու փիշի թողով կու լքցնիմ, իմ մատի մինձ մատնիքը մօշլա կ'օնիմ՝ խաչ կու շինիլ տամ ու իմ ձեռով ձախդ կու քաշ անիմ... (Անհրում է:) Ա'նանի, Ա'նանի:

Տ Ե Ս Ի Լ Է

ՍԱԼՕՄԷ, ԱՆԱՆԻ

Անանի, դուրս գալով ծախ դռնից: Ի՞նչ ես կամենում, մայր՝ իմ:

ՍԱԼՕՄԷ

Արա, Անանի ջան, դուն գիդիս վունցոր խելօք կու ժաժ գաս էսօր: (Անանին շուարվում է:) Չայիչ արի վուր խօսկ շամնուլ տաս Միխէիլի մօղ:

ԱՆԱՆԻ

Այսինքն ի՞նչ ես կամենում ասել, մայրիկ:

ՍԱԼՕՄԷ

Էն՝ վուր աւելի ումիկնիր շտաս նրան... Ի՞նչ ասիլ իս խօսկիտ վրայ ղայիմ կանգնի... Գուն բանն ինձ վրայ գցէ:

ԱՆԱՆԻ

Միթէ նրա հայրը...

ՍԱԼՕՄԷ, նստելով:

Հն, հէքը... ղարուլ չէ... կրակ էք վէք ածում էս սահաթիս... էրկուսին մէտի տանէմէն դուս կ'օնիմ, կ'օսէ:

ԱՆԱՆԻ

Ա'խ, Աստուած:

ՍԱԼՕՄԷ

Ամա իրան Միխէիլին վունչիչ շասիս, թէ չէ էլ ինձմէն չիս պրծնի:

Լուծիւն:

ԱՆԱՆԻ

Ինչի՞, ինչի՞ շատել, մայր. ինչի՞ չպարզելի գործը:

ՍԱԼՕՄԷ

Ինձ համա պարզած էլ է ու պրծած էլ:

ԱՆԱՆԻ, սիրտը կոտրած:

Քայց ինձ համար, մայր իմ:

ՍԱԼՕՄԷ

Էլի... ինձ չիս աւանդ, քու վաղն իմ ուղում...  
Պիտի էնէնց բռնիք բանը, Անանի ջան, վուր էլի  
հէրը գայ էստի, էստի, վուտիս տակն աղանչաք  
անէ... Մուլափ տայ հայա... փուղ շունիք, կ'օսէ...

ԱՆԱՆԻ, աղիողորմ:

Քայց մեր անփողոթ ինչը Միքայէլին չէ՞ արգե-  
լում ինձ ուղել... նա ինքն ասաց...

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ է ասում, քան... Միխէիլը վուր ուղում է,  
իժում 'ես կու թողնիմ վուր նրա հօր ընդէմ ըլի...  
Ուղում իս էրկուտիտ մէտի դար ու գարգաղ թողնէ  
ու աշխրքի մասխարա դառնաք... էլ գլուխս սող ինչ  
կ'օնիմ... Ախտուլթենի իմ մի՛նձացրի քիզ գանա...  
Չէ, վուրթի, 'ես քիզ էտէնց շուտ չիմ դիմիշ անի:

ԱՆԱՆԻ

Օ՛հ, ես շատ լաւ դգում էի, սր ինձ համար բախ-  
տաւորութիւն չկայ:

Աչքերը սրբում է:

ՍԱԼՕՄԷ, վեր կենալով:

Արա էա ինչ արարմունք է. էրեխայ իս թէ ինչ  
է. քու տարս աղշիկը կու լաց ըլի, չիս ամանչում...  
Միխէիլը չըլի, ուրիշն ըլի, ինչ կայ... քիշ կամ:

ԱՆԱՆԻ, լացով:

Մայր իմ, մայր իմ, այդ ինչ ես ասում...

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ ասում իմ, լաւ լսէ. 'ես փիս բան չիմ բըռ-  
նի... դուն անմիզ աճկերդ մի խարաբ անի... (Ոտքի  
ծայն է լավում): Ովոր գալիս է. նա չըլի, ինչ կ'օսէ:

ԱՆԱՆԻ

Ա՛հ, սրբան տարաբախտ եմ ես:

Աչքերը սրբելով դուրս է գնում ծախ դոնից:

Տ Ե Ս Ի Լ Թ

ՍԱԼՕՄԷ, ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, հանդիսի նշանադրեստով:

ՍԱԼՕՄԷ, բարձրաձայն:

Ո՛վ քաղցր Աստուծաձին, Դուն բարեխօս ըլիս  
իմ Անանու համա:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, մտնում է միջի դոնից:

Ո՛ւմ հիզ իս մենակ խօսում:

ՍԱԼՕՄԷ

Ա՛խ, եանգօր ջան, չիս գիղի թէ ինչ բան է պա-  
րաստում Աստուծ միզ համա:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Ինչի՞ վրայ իս էտէնց ուրախ:

ՍԱԼՕՄԷ

Անհատնելի դովաթ է բաց անում միզ համա Ա-  
տուծ, եանգօր ջան. Անանու համա հէտախ տղայ է  
լուս գցի, վուր էլ ինչ ասիմ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2

Միխէիլի վրայ լաւը:

ՍԱԼՕՄԷ

Միխէիլը վնւրն է, քան Միխէիլի հատն ու կտուրն է... Բրիլիանտովի տղէն, Բրիլիանտովի տղէն, Եանգոր ջան:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2

Վնւր Բրիլիանտովը:

ՍԱԼՕՄԷ

Աշխրտումը քանի Բրիլիանտով կայ գանա. Ստեփան Դանէլիչի տղէն, Եանգոր ջան, միլիոններու տէրերը:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2

Էն գիշերը վուր Սարբանիումը դօստացանք:

ՍԱԼՕՄԷ

Հան, հէնց նրանք:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2, գարմացած:

Ղուրթ իս ասում, Սալօմէ:

ՍԱԼՕՄԷ

Քու արիւր գիղենայ, Եանգոր ջան:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2

Իժում էտ ո՞վ ասաւ:

ՍԱԼՕՄԷ

Միխէիլի հէրը. էս սահաթ իս էստի էր, գնաց վուր բանը էս օրերումը վիրշացնէ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2, գարմացած:

Միխէիլի հէրը... (Յիսարարը կոպենտոյ): Տօ, թէ լաւ մարթ է, Ստեփան Դանէլիչի վուրթու համա ինչի է շալիչ գալի. իր Միխէիլն էնդի չէ հազիր

հաղրաբաշի: Նրա ղունգը չիմ փոխի սող Ստեփան Դանէլիչի վուրթու հիդ. (Նստում է:) Բնչ անիմ վուր հարուստ է:

ՍԱԼՕՄԷ

Արա վիս էկաղրէքա. վնւնց կանայ Միխէիլը նրա մօդ գայ. զարթնի իր խիլքն ու ուսումը Բնչ ունէ... Նրա բէգասլ հօրն ասիմ թէ Ստեփան Դանէլիչի ասկն ու տակը. մումով էլ վուր պտուի էինք, էս հանգի բախտի չէինք կանա ուստ բերի Անանուն:

Նստում է:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2, ծխերով:

'Ես կարծում իմ, Սալօմէ, վուր Անանին Միխէիլի հիդ ուփրօ բախտաուր կու'լի, կանց Ստեփան Դանէլիչի կալասկումը:

ՍԱԼՕՄԷ

Քիղի-քիղ ձևում իս ու կարում. օրինակ ասինք՝ Միխէիլի մօդ շատ էլ բախտաուր կու'լի Անանին, ամա վուր հէրը չէ ուղում, վուանիրքը իս չինք կանա ննգնի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2

Ինչ գիղիս թէ չէ ուղում:

ՍԱԼՕՄԷ

Հազիր իր բերնով ասաւ էս սահաթ իս ու էլ էստուրն Բնչ գիղենայ է հարկաուր. իր Միխէիլի համա վուր ուղում ըլի, նրանց համա ուր է խօսում:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻ2

Ո՞վ գիղէ, սատանայ մարթ է Սէրգէյ Տարասիչը. կու'լի ղասիղի է մէշ բերում Ստեփան Դանէլիչին, վուր միր միտկը զրուսան իմանայ. ուղում է միթամ

առչի գամը միդ ասեցնիլ տայ, վուր էգէրա աւելի իմքին դուս գջլէ:

ՍԱԼՕՄԷ, վեր կենալով:

'Ես քիդ ասում իմ վուր ամալ-աչքարա իր բերնով ասաւ էն մարթը, վուր Միխէիլի համա վունչիչ բանով չի ուզի Անանուն, փուղ ու բաժինք շունիք, կ'օսէ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԻ

է'հ:

ՍԱԼՕՄԷ

Ասու՛ճ գիգենայ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԻ, վեր է կենում եւ ման է գալիս:

Նն՛, թնղ բաս գլուխը քարը տայ, հէնց գիլէ նրա փուղի վրայ շատ իմ արմնում. դիփ մաշէնիկութենով կու'լի մօդ արած... Ամա Միխէիլը լաւ տղայ է. անփսուս վուր նրա վուրթին է:

ՍԱԼՕՄԷ, հետը ման գալով:

Քու արիւր, Ստեփան Դանէլիչի վուրթուն 'ես օչովի վրայ չիմ փոխի. ինչ անինք թէ մինձ ունում չունէ. մենակ նրա ասկը քսան Միխէիլին աժէ ու ինչ գ'ուզէ պակասութին էլ ունենայ, դօվլթի տակը չի էրևա:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԻ, նստելով:

Քիդ համա օղօնդ դօվլաթ ըլի ու արկով ազնիւ:

ՍԱԼՕՄԷ

Բաս չէ ու՛ թորոզի վուրթի Սարքսի բէդասլ գլուխն է հարկաւուր... (Նստելով) նրա անկն էլ կարիմ... Մէ Ասու՛ճ տայ էս բանը գլուխ գայ, իժում

դուն թանաչա արա թէ քանի ախշկայ տիրուչը էլ դա է դիրչում:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԻ

Փառասիրութենով լիքն իս, Սալօմէ:

ՍԱԼՕՄԷ

Փառասիրութենով կի չէ, խիլքով լիքն ասա:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԻ

Հն՛, խիլքով. քն մաղերուն էլ հարցրու:

ՍԱԼՕՄԷ

Ի'հ, լաւ է. բան իք շինի ձիդ համա... Ինչո՞վ չէլաւ էս աշխարքը չիմացար. զարթնի Անանուն էրկու ախշիկ էլ ուրիչ է մինձանում մարթու տալու, հիդնուհիղը տղերքն ուփրօ գին ին բռնում, տեսիմ թէ վունց իս մարթու տալի: Չեռնէմէս դուս կու թողնիմ էս բանը. յաւիտենական տէր կու դառնայ Ստեփան Դանէլիչը միրը:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԻ, ծիւղով:

Հը՛մ...

ՍԱԼՕՄԷ

Հը՛մ կի չէ, դուրթ իմ ասում:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԻ, վեր կենալով:

Մնւլափ, Սալօմէ, մնւլափ, 'ես ջեր մէ խօսիմ Սէրգէյ Տարասիչի հիդ, մէ նրա միտին իմանամ, տեսիմ Միխէիլի համա ինչ է ասում, իժում կու փիքը անինք Ստեփան Դանէլիչի վրայ:

ՍԱԼՕՄԷ, տեղից վեր թռչելով:

Չէ, չէ, չէ չէ... հայրէցվուրթի վունչիչ շասիս, վունց Սէրգէյ Տարասիչին, վունց նրա Միխէիլին. փիքը էլ իմ արի ու պրծիլ էլ իմ: Մտկումս դրի

վուր Ստեփան Դանէլիչի տղին պիտի տանք ու Էնէնց  
էլ պիտի ըլի, էլ էստումը խօսկ շունիս գուն:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Հը՛մ...

ՍԱԼՕՄԷ

Հա, հը՛մ... Իմանում իս... վունչը չէ՛մէն վունչիչ չգլի-  
ղենաս վունց մէկի մօղ, Թէ չէ էլ ինձմէն չիս պըծնի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Վուր ասում իս, չիմ ասի, վա՛: իմ գլխի դուշման  
խօ չիմ:

ՍԱԼՕՄԷ, փաթաթուելով:

Թէ ինձ կու սիրիս, Եագօր ջան, ջեր վունչիչ  
չասիս. միթամ իսկի վունչիչ չիս էլ գիղի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Չիմ ասի, քու արիվն իմ ասում, վա՛... Բաս ջեր  
Անանուն էլ վունչիչ չիս ըլի ասի:

ՍԱԼՕՄԷ

Հայհարայ ուր էի ասում. ջեր մէ Էնդանց դըուստ  
խօսկ իմանամ, է՛:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Ո՛ւր էր վաղում հէր օխնածը, մէ քիչ չէր կանայ  
մուլափ տա՛. փափէն խօ չէր սառի, 'ես էլ իմացիլ  
էի, է՛:

ՍԱԼՕՄԷ

Ա՛յ, իմանում իս, էլի. լաւ բան վուր չէր էլի,  
խօմ առանց քու հարցնիլ չէի բռնի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Դիփ լաւ, Սալօմէ, ամա Անանին վուր շուղէ նրան,  
Էնչախն ինչ կ'օսիս:

ՍԱԼՕՄԷ

Վունց կանայ վուր իմ խօսկը չկատարէ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Դուն գիղիս, Սալօմէ, կնդդերանց բանումը 'ես  
չիմ խառնվում:

ՍԱԼՕՄԷ

Հա՛, Եագօր ջան, էտէնց. ինչ քու բան է ախար.  
դուն ինձ թմղ, իմ բանը 'ես գիղիմ:

'Իուրս է գնում ձախ դոնից:

Տ Ե Ս Ի Լ Ժ

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, մենակ, նորից ծխաքարը կացնելով:

Էս դիփ տակն ու վրայ էլաւ... Ա՛փսուս, ա՛փսուս  
Միխէիլ. ամա կնդդերանց օխտէմէն սվ գու քայ...  
(Ձախ բան մէջ նայելով եւ երեւակայելով. Թղթախարը:)  
Քուխար փոխուեցաւ. էլ Սարքիս ու Միխէիլ չկայ...  
նրանց մագիար Ստեփան Դանէլիչ, Իվան Ստեփա-  
նիչ... (Աջ ձեռքի ցուցամատը ձակատին դնելով:) Իվան  
Ստեփանիչ... Իվան Ստեփանիչ...

Գնում է դէպի աջ կողմի դուռը:

Տ Ե Ս Ի Լ ԺԱ

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, ՄԻՔԱՑԷԼ

ՄԻՔԱՑԷԼ, մտնելով միջի դոնից:  
Դարող եմ ձեզ ուրախացնել, Եագօր Սիմօնիչ. ես

զնացի ուղղակի մեծաւորի մօտ, (Թուղթը ցոյց տալով:) և ահա աւսէք նրա ձեռքը: (Թուղթը տալիս է Եազօր Սիմօնիչին:) Նա եօթն օր ժամանակ նշանակեց այս գործը վերջացնելու:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, նայում է թղթին, յետոյ առնելով Միքայէլի ձեռքը, մօտ է քաշում իրան եւ ճակատից համբուրում:

Չնտ ապրիս, Միխէիլ ջան, շնտ շնորակալ իմ: Հրաւիրելով Միքայէլին նստելու, ինքն էլ նստում է:

ՄԻՔԱՅԷԼ

Չարժէ շնորհակալութեան. (Նստելով:) ճշմարիտ, ես ինքս ուրախ եմ որ կարողացայ այդ խեղճ կնոջն օգնել. այդպիսի ծառայութիւններն ինձ առանձին բաւականութիւն են պատճառում:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Ջօրանաս, Միխէիլ ջան, զօրանաս. շատ ուրախացրիր ինձ... Մինձ վարցկ բան արելը, դիզեմաս. Աստուձ մուրազիտ հասցնէ... (Միքայէլը ողջունում է:)

Է՛հ, ուրիշ նուր ինչ խաբար:

ՄԻՔԱՅԷԼ

Իսկոյն կ'իմանաք, Եազօր Սիմօնիչ... Ես կարծում եմ մենք միմեանց բաւական հասկանում ենք, ուրեմն էլ երկար խօսքեր հարկաւոր չեն լինիլ յայտնելու ձեզ իմ միտքը...

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, ընդմիջելով:

Քու միտկն էլ գիղիմ, Միխէիլ ջան, քու խղճմը տանքն էլ. աւատան ինձ, վուր քիզ իմ վուրթկերանցմէն պակաս չիմ սիրում:

ՄԻՔԱՅԷԼ, ողջունելով: Հաստատ գիտեմ, Եազօր Սիմօնիչ, և այդ յոյսով համարձակվում եմ...

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Չարմացնում իս ինձ, Միխէիլ ջան... ՄԻՔԱՅԷԼ, վեր կենալով: Ես խնդրում եմ ձեզանից Անանու ձեռքը:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Վն՛հ, իժում քու հէրը: ՄԻՔԱՅԷԼ, չօրս հետ ես վերջացրի գործը:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, զարմացած, վեր կենալով:

Տէր օղորմած Աստուձ... (Առուժիւն:) Ախար քու հէրը... չիմ հասկանում, Աստուձ գիղեմայ... Ախար քու հէրը... դարուլ է:

ՄԻՔԱՅԷԼ

Եազօր Սիմօնիչ, իմ հօր համաձայնութեան վրայ յետոյ կը խօսենք, բայց դուք ինչ էք ասում:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Ինչ իմ ասում... (Առանձին:) Ա՛խ, Սալօմէ... (Միքայէլին:) Արա մէ սնվրեցրու թէ ինչ ջուղար տամ: ՄԻՔԱՅԷԼ, տարակուսած:

Ճշմարիտ, ես ձեզ չեմ հասկանում:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Տօ տը բրատ...

ՄԻՔԱՅԷԼ

Ուրեմն դուք փոխել էք ձեր միտքը: ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, գրկելով եւ համբուրելով Միքայէլին: Էտ մի ասի, Միխէիլ, էտ մի ասի... Աստուձ է

վկայ, վուր քիզ վրայ լու տղայ ինձ չէ ուստ էկի,  
 ու քիզ էնէնց իմ սիրում, վունցոր յատուկ իմ վուր-  
 թի. ամա էս բանը կնգդերանց բան է, 'ես մէշը  
 չիմ խառնիւմ, վունցոր Սալօմէն գ'ուղէ, 'ես նրան  
 խօսկ իմ տուի... Տղայ վուր ըլի իմ խօսկն է հար-  
 կաուր, ամա ախշկայ բանը կնիկարմատը գիղէ:

ՄԻՔԱՅԷԼ

Դուք իզուր միք մեղադրիլ Անանու մօրը, ես  
 հաստատ գիտեմ որ նրա կողմից ոչինչ արգելք չի  
 լինիլ, եթէ միայն դուք համաձայն կը լինիք:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Մի, Միխէիլ, էլի բանն ինձ վրայ իմ գցում...  
 Աստուձ է վկայ, իմ 'երիք վուրթին ապրին, վուր  
 քիզ վրայ լու տղայ 'ես չիմ ուղի Անանու համա...  
 Լաւ գիղիմ քու սիրան էլ, քու ազնուութիւնն էլ, գի-  
 ղիմ ինչքան էլ բախտաւուր կու'լի Անանին քի մօղ-  
 ամա ինչ անիմ վուր մենակ 'ես չիմ տէրը... Թաք  
 Սալօմէն ուղէ էս բանը, ազնիւ խօսկ իմ տալի, Մի-  
 խէիլ ջան, 'եթէ ինձ ազնիւ մարթ իս ճանչնում,  
 (Բաղուկները տարածելով:) վուր էրկու ձեռս բաց արած  
 գ'ուղիմ քիզ:

ՄԻՔԱՅԷԼ, շուարուած, առանձին:

Այլևս կասկած չկայ... անշուշտ այստեղ մէկ բան  
 է պատահել, որի պատճառը ես չեմ կարողանում  
 հասկանալ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Ինձմէն մի նիղանա, Միխէիլ ջան, Սալօմի հիզ  
 դուն ինքզ խօսի, նրան թէ կտարեցիր՝ դէմուղէմն  
 արի ինձ մօղ, էն սահաթին կու օխնիմ քիզ. հաս-

տատ գիղիմ վուր Անանին աւելի կու ուրախանայ,  
 կանց կու հակառակուի. քիզ նման ազիզ է Ան-  
 նիս, էրանի նրան, ում կնիկն էլ նա կու դառնայ...  
 է'տէնց, էտէնց, Միխէիլ ջան... (Գրպանում թաշկի-  
 նակը որոնելով:) Ի՞նչ էլաւ:

Տ Ե Ս Ի Լ Ժ Բ

ՆՐԱՆՔ, ՍԱԼՕՄԷ

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, նկատելով Սալօմին, որ մտնում է ձախ  
 դռնից:

Ա՛յ, Սալօմէն:

ՍԱԼՕՄԷ

Ա՛ն, էկար, Միխէիլ ջան, համեցէք նստի, յօրէս  
 ճաշը հազիր կու'լի... Թագա ինչ կայ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

Թագէն էն է, Սալօմէ, վուր էկիլ է միը Անանուն  
 ուղում է:

ՍԱԼՕՄԷ, յօնքերը կիտելով:

էրնէկ գիղենամ քն դրօս հանաք է:

Բարկացած նայում է Նագօր Սիմօնիին:

ՄԻՔԱՅԷԼ, ժպտալով:

Եագօր Սիմօնիչը հանաք չէ անում, տիկին, մենք  
 այս ըսպէիս հէնց այդ բանի վրայ էինք խօսում:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, գրպանում որոնելով:

էս աղլուխս ինչ էլաւ...

'Իուրս է գնում աջ դռնից:

## Տ Ե Ս Ի Լ Ժ Գ

## ՄԻՔԱՅԷԼ, ՍԱԼՕՄԷ

ՍԱԼՕՄԷ, մոլորուած ձեւանալով:

Արա ինչ ասիմ, վուրթի, չիմ գիդի, Աստուծ գի-  
դենայ... (Նստում է: ) Մէ էրկու օր մուլափ տու,  
Միխէիլ ջան, դրուտ ջուղարը կու իմաց անիմ. մէ  
Անանուս էլ հարցնիմ... խօ գիդիս առանց նրան  
չի ըլի:

## ՄԻՔԱՅԷԼ

Ես այսօր Անանու հետ խօսեցի, միայն մնում է  
ձեր համաձայնութիւնը:

## ՍԱԼՕՄԷ

Արա էտ օրէնք է, Միխէիլ ջան. առանց ինձ նրա  
հիդ սըր էիր խօսում էտ բանը... քիմէն էտուրը չէի  
մնում, քու արիւր:

## ՄԻՔԱՅԷԼ

Ի՞նչ վատ եմ արել, եթէ խօսել եմ. դուք ինք-  
նեզդ, տիկին, բաւական հասկացրել էք ինձ, որ ես  
իրաւունք ունէի այդ քայլն անելու:

## ՍԱԼՕՄԷ

Ասիլ իմ ու էլի կ'օսիմ, Միխէիլ ջան, վուր քիդ  
վրայ լաւ փեսայ չիմ ուզի. քու արիւր, ամա ինչ  
անիմ վուր քու հէրը կրակ էր վէր ածում էսօր  
էստի...

ՄԻՔԱՅԷԼ, շուարուած:

Հայրս այստեղ էր միթէ...

ՍԱԼՕՄԷ, վեր է կենում եւ ձեռքը Միքայէի ուսին դնում:

Վ՛սւյ, գէթաղվա, Միխէիլ ջան, վունչիչ շասիս...  
Թ՛սղ մէ քանի օր անց կենայ, մէ էլի հիդը խօսիմ,  
էգէբա կոտրուի... Ի՞նչ անիս, վուրթի, չիմ ուզում  
նրա ընդդէմ դուս գայ բանը... Թրթում հաւատ էր  
անում, վուր բաց աճկով չիմ թողնի վուր Միխէիլը  
մուքթ ախչիկ ուզէ, կ'օսէ. էլ յաւիտենական վունց  
մէկին չիմ մօղ թողնի, կ'օսէ... Անմիդ անիծելու  
ինչի դառնանք... Թէ կու'լի նրամոլ, վուրթի, խօ  
լաւ, թէ չէ խօսմ էստի ինք ու էստի, սըր ինք փախ-  
չում... վունցոր քէփդ տայ, էնէնց ժած արի... (Ցոյց  
տալով աջ կողմի դուռը): Համեցէք կարիւնէտը:

Գուրս է գնում ձախ դռնից:

## Տ Ե Ս Ի Լ Ժ Գ

## ՄԱՔԱՅԷԼ, մենակ, երկար լուծիւնից յետոյ:

Այժմ ես բոլորը հասկացայ... Ուրեմն այս էր իմ  
հօր սպառնալիքը. ուրեմն այսպիսի ճանապարհներով  
է ուզում նա խանդարել իմ երջանկութիւնը... Հայրս  
ինձ թշնամացել է... Գործիր, գործիր, հայր, բաց  
պատերազմ է յայտնուած մեր մէջ, անշուշտ մէկը  
մեզանից յաղթող պէտք է հանդիսանայ. միայն լաւ  
իմացած կենաս, հայր, որ քո բոլոր ոյժը կը փշրուի  
կամքիս առաջ եւ Անանին իմս կը լինի, թէև հարկա-  
ւոր լինէր նոյնիսկ խլել նրան իր մօր գրկից:

Գնում է գէպի աջ կողմի դուռը. վարագոյրն իջնում է:

... անհատի մասին հարկավոր է հարկադրել...  
... անհատի մասին հարկավոր է հարկադրել...  
... անհատի մասին հարկավոր է հարկադրել...

**ԱՐԱՐՈՒՆԾ ԵՐՐՈՐՔ**

Ստեփան Գանկելի տանը Վանսի առանձնասենեակը՝ ամենա-  
շքեղ կերպով գտնված թանկագին կահ-կարասիքով,  
զբաղված էր պատկերներով և ընտիր ծաղիկներով: Չափ  
կողմում մեծ հայելի, աջ կողմում գրասեղան, սրբ վրայ դար-  
սած են դարձնալ պատկերներ, այլոսներ և սեղանի գանա-  
զան պարագաներ: Խորքում դիտան: Ուր հարկն է աթոռներ  
և բազկաթոռներ: Անկիւններում մեծ կանգնաբլուրներ: Վա-  
ռարանի վրայ ժամացոյց: Մէջտեղում և կողմերում դռներ:

**ՏԵՍԻՆ ԱՌԱՋԻՆ**

ՎԱՆՑ, ֆրակով կանգնած է հայելու առաջ և կիսածայն  
երգում է որեւէ օպերայից մի կտոր, ՕՍԷՓ, խոզա-  
նակով սրբում է նրա ճաղի ֆրակը:

ՎԱՆՑ, շուռ գալով:

Լաւ, հիմի էսթէնը: (Նրզը շարունակում է, յետոյ  
ձեռքով Օսէփի մազերը շօշափում ու ձեռքն իր քթին  
մօտեցնում: ) Էլի իս գողցի իմ պօմաղէմէն:

Մատները սրբում է թաշկինակով:

**ՕՍԷՓ**

Չէ, աղա, էս էն պօմաղէն է, վուր դուք ինձ  
տուիք:

ՎԱՆՑ, կամաց խփելով նրա գլխին:

Ջեր էս վուր քանի ջէր իմ քիզ ասի՝ ինձ աղա  
մի ասի. շտօ դա աղա:

**ՕՍԷՓ**

Ա՛խ, վինալատ, պարուն ջան:

**ՎԱՆՑ**

Հա՛, էտէնց ասա, յիմար: Աղէն փողոցի մարթկե-  
րանցն ին ասում, վուր փուրը փրած ման ին գալի  
ու տուն գալիս մաւի աղլիտով մէ էրկու շաու կա-  
նանչի ին տուն բերում: Ինձ աղա կու սաղ գա՛յ.  
վնըրդանցի աղա իմ 'ես:

**ՕՍԷՓ**

Էս մէկը մտէս ննգաւ, աղա ջան, յօրէնի դէնը  
դիփ պարուն կ'օսիմ, աղա ջան:

ՎԱՆՑ, դարձեալ գլխին խփելով:

Էլի խառնեցիր. քիզ իմ օրումը խիլք շիմ կանա  
տովրեցնի:

**ՕՍԷՓ**

Ախար ի՛նչ անիմ, ա՛... պարուն ջան, 'ես ինչ  
միդ ունիմ, վուր միը լիզումը մէ խօսկի մաղիար  
էրկու կայ. լիզուս խառնվում է: Մ՛յ, տէրը բարի  
տայ ոսներուն... նրանք մէ գլուխ դիփ բարին ին  
ասում... Մէկ էլ էն ծախ լիզուն վուր խօսում ին՝  
մուսա, մուսա. էստու վրայ հիշա ի՛նչ կայ:

ՎԱՆՑ, ծիծաղում է:

Հա՛, հա՛, հա՛... Ասա՛ մօսիէօ:

ՕՍԷՓ

Մուսիէ:

ՎԱՆՕ

Մօսիէօ:

ՕՍԷՓ

Մօսիէ:

ՎԱՆՕ

Մօսիէօ, բալվան:

ՕՍԷՓ

Մօսիէօ, բալվան:

ՎԱՆՕ

Տի սամ բալվան, դուրանկ. 'ես քիզ իմ ասում, չէ  
թէ դուն ինձ ասիս... նն, ասս՝ մօսիէօ:

ՕՍԷՓ

Մօսիէօ:

ՎԱՆՕ, ձեռքը կամաց Օսէփի թշին խփելով:

Նն, մալադէց, էլ չմտէզ պցիս:

ՕՍԷՓ

Չէ, ազա, էլ չիմ մտէս պցի:

ՎԱՆՕ, ոտը յատակին խփելով:

Էլի՛, յիմանր...

ՕՍԷՓ, խօսքը բերանից խփելով:

Վանյ, վանյ, վանյ... պանուն, պարուն ջան:

ՎԱՆՕ

Էտէնց: Գլուխդ դարդակ դթում է. արա ինչի՛  
'ես մտէս չիմ պցում. մէկ ասիլ իմ քիզ՝ ժօղէֆ,  
դիփ ժօղէֆ իս:

ՕՍԷՓ

ժօղէֆ իմ, պարուն ջան, ժօղէֆ: Արա՛ տեսէք,  
միամ վուր վրէդ էլ վունչիչ չկայ:ՎԱՆՕ, հայելու մէջ զննուելով՝ մի որեւէ երգի եղանակ  
է սուլում, յետոյ ցոյց է տալիս մէջքի կողմը:

Էս ի՛նչ է, յիմանր:

ՕՍԷՓ

Էտ անիծած բմբուլը հիմի նստեցաւ: (Սրբելով):  
Սրան էլ կու թռցնիմ:

ՎԱՆՕ, զննուելով:

Լաւ, լաւ... Ը՛մ, ժօղէֆ...

ՕՍԷՓ

Համմէ:

ՎԱՆՕ

Մէ ջուխտ թաղա պէրչատկա բի:

ՕՍԷՓ, մօտենալով պահարանին:

Ի՛նչ ուանգը, պարուն:

ՎԱՆՕ

Չիս գիղի՛ ինչ ուանգը. ֆրակի մօդ ի՛նչ ուանգը  
պիտի. քանի ջէր իմ սովրեցրի:

ՕՍԷՓ, մօտ բերելով մի զոյգ այցի դունաւոր ձեռնոց:

Ա՛յ, էստո՛ւց:

ՎԱՆՕ

Չէ, պալէվի տո՛ւ:

ՕՍԷՓ

Բան էն օրը ֆրակով վուր զնացիր էնդի, էս  
փերչակներէմէն հաքար:

ՎԱՆՑ

Ը, յիմար, էն ուրիշ է, էս ուրիշ. էս օր առաջի անգամն իմ վիզիտ գնում, օրէնքը պալէվին է:

ՕՍԷՓ, տալով յարգագոյն ձեռնոցներ:

Բաս նրան թողնում իս:

ՎԱՆՑ

Չէ, ո՞վ ասաւ քիզ թէ թողնում իմ:

ՕՍԷՓ

Բաս ո՞ւր իք գնում:

ՎԱՆՑ

Ինչքու ամեն բանը շիմանաս, չի ըլի, քու գլխի արիւր:

ՕՍԷՓ

Ինչ 'ես գիդիմ, քու խոստովնահէրն էլ չի գիդի էնքանն ո՞ւր: Ո՞ւր իս գնում, պարուն, գէթաղվա:

ՎԱՆՑ

Չաս մի խօսի, յիմար, մէ աղլուխ էլ արն:

ՕՍԷՓ, պահարանից թաշկինակը հանելով:

Դուխի, պարուն:

ՎԱՆՑ

Դուխի էլ, դուխի էլ:

Օսէփն անուշահոտում է թաշկինակը եւ ծածկաբար էլ իր գլուխը. իսկ Վանօն աջ կողմի սեղանից վեր է առնում ժամացոյցը, երգելով լարում ու գրպանը դնում, յետոյ մատանին մատն է դնում եւ կոկվում:

ՕՍԷՓ

Համեցէք աղլուխը:

ՎԱՆՑ, առնում է թաշկինակը եւ հոտ կալնում:

Հէնց էս է: (Միջի դռան կողմից թոյլ հազի ծայն է լսվում. Օսէփը մօտենում է դռանը:) Ո՞վ է:

ՕՍԷՓ

Կուչէրն է, բուկէար ճարիլ է: (Առաջ բերելով մի հիանալի ծաղկափունջ:) Վուալա, մօսիէ, տիս՝ ինչ լաւն է:

ՎԱՆՑ, առնելով ծաղկափունջը:

Ա՛խ, չօրտ վաղմի, իստակ մտէս ննգաւ: (Ժամացոյցին նայելով:) Ջեր չէ ուշացի... էս սահաթիս, ժօղէֆ, տա՛ր էս էնդի. գիդիս վուրդի իմ ասում:

Ծաղկափունջը յետ է տալիս:

ՕՍԷՓ

Վանց չիմ գիդի. իմ բօղաղի ճանփէն էլ չիմ գիդի էնէնց, վունցոր էն գիդիմ. մաղամ Կարօլինա:

ՎԱՆՑ

Մաղմուաղէլ, յիմար, չէ թէ մաղամ:

ՕՍԷՓ

Մաղամ-դուլօ Կարօլինա:

ՎԱՆՑ

Մաղմուաղէլ, տօ:

ՕՍԷՓ

Մէ խօսկով, պարուն ջան, Կարօլինի տունը գիդիմ:

ՎԱՆՑ

Նո՛ւ, հէնց էնդի. գնա՛ էս սահաթիս: (Չախ կուլիսից լսվում է Նասօի ծայնը՝ «Ես հազիր իմ, Վանօ»:)

Դալիս իմ, գալիս, 'ես էլ հազիր իմ: (Օսէփին:) Դէ, գնա՛ էս սահաթիս. էտ իմ մագիար իրան կու տաս ու կ'օսիս վուր էս գիշիր սահաթի ութին ինձ մնայ:

ՕՍԷՓ

Վուր հարցնէ թէ հրամանքդ ինչ իս շինում, ինչ ասիմ:

ՎԱՆՅ

Ասա՛ վուր իմ քվիր հիդ վիզլտ գնացի:

ՕՍԷՓ

Իժում էն կու հարցնէ թէ ո՛ւր գնաց, ինչ ջուղար տամ. ասիմ թէ շիմ գիդի, շի աւտայ: Ախար ինձմէն ինչ իս թաքցնում, պարուն ջան:

ՎԱՆՅ

Նո՛ւ, ասա՛ վուր Սուրաթինց տուն գնացինք վիզիտ. ինչ կայ էստի թաքցնելու:

ՕՍԷՓ, ձախ ոտը դէպի յետ վեր քաշելով ու աջ ձեռքով ալանջի վերեւը քորելով:

Սուրաթինց տո՛ւն... էն սիրուն ախշիկ վուր ունին. քօման վու պարաէ, մաղամզէլ, հըւ: Ա՛յ, սիրուն:

ՎԱՆՅ, մատներու ծայրը համբուրելով:

Պժամ... տօ տը, ա՛յ, սիրուն. քու Կարօլինէն նրա վուտի պճիզն էլ չաժէ:

ՕՍԷՓ, ծաղրելով:

Քու Կարօլինէն... Քո՛ւ Կարօլինէն, պարուն, քո՛ւնը: Ամա Սուրաթինց ախշիկը քիզ ինչ ձեռք կու տայ. էն վարթն օշոյլ շի թողնի քիզ վուր կտրիս:

ՎԱՆՅ

Վուրդի վուր վարթ տեսնին, դիփ կտրին, ո՛ւր կ'էհայ, յիմար. խանդէխան մենակ հուտ կալնիլն էլ վնաս չէ: (Օսէփը ծաղկափնջից հոտ է առնում. կուխից դարձեալ լավում է Նատոի ծայրը՝ «Չիս գալի՛, Վանձօ»:) Դալիս իմ, գալիս: (Օսէփին:) Դէ, գնա՛, չուտտ արա:

ՕՍԷՓ

Էս սահաթիս, պարուն ջան: (Գնում է եւ յետ դառնում: Աղերսելով:) Մըսիէ ժան...

ՎԱՆՅ

Հըւ, էլի իմքին իս ուզո՞ւմ:

ՕՍԷՓ

Ախար, էրէզ Կարօլինէն ասա՛ւ վուր՝ ինչի՛ բատինկէքդ (Աջ ոտը կրնկի վրայ խաղացնելով եւ վրան նայելով:) լաւ չէ պլպլում, կ'օսէ. քի պէս աղի, (Մըտաբերելով որ սխալուեց, թրում է:) թփո՛ւ, պարնի պէս լաքիէն էտէնց շի պիտի ման գայ, կ'օսէ:

ՎԱՆՅ, մինչդեռ Օսէփը խօսում էր, մի երգի եղանակ է սուլում:

Ֆի՛ւ, ֆի՛ւ, ֆի՛ւ... Իժո՛ւմ:

ՕՍԷՓ

Ախար, էլի էսէնց գնա՛մ:

ՎԱՆՅ

Նո՛ւ, թա՛ղէն առ:

ՕՍԷՓ, գլուխը քորելով:

Փո՛ւղը:

ՎԱՆՅ, ծիծաղելով:

Փուղն էլ ճարէ, էլի՛:

ՕՍԷՓ

Վո՛ւրդի ճարիմ, էլ մէ գըօշ չունիմ:

ՎԱՆՅ

Վո՛ւրդիտը գ'ուզիս:

ՕՍԷՓ, ոտը ոտի մօտ դնելով, փոքր առ փոքր առաջ է գալիս դէպի սեղանը, որի վրայ դրած է փողի քսակը: Ա՛յ, ճարած է հազիբ, պարուն ջան:

ՎԱՆՑ, ծիծաղում է:

Հա՛հա՛, հա՛... նո՛ւ, ժողէֆ, էժան չիս նստում ինձ:

ՕՍԷՓ

Կարօլինէն վուր չըլի, պարուն ջան, ինչ կ'օնիմ.  
էս բատինկէքն էլ լաւն է:

ՎԱՆՑ

Լա՛ւ է, լաւ, գլուխս մի տանի: (Մօտենալով սե-  
ղանին՝ փող է հանում քսակիցը:) Հըս՛, բռնէ՛. էս օխ-  
տը մանէթը հէրիք է... Դուն ինձ կու քանդիս  
զըուսա:

ՕՍԷՓ

Է՛հ, մինձ աղէն սաղ ըլի, պարուն ջան:

ՎԱՆՑ, փողը տալիս է, Օսէփը համբուրում է ձեռքը:

Նո՛ւ, պաշօ՛լ:

ՕՍԷՓ

Սէի չա՛ս:

Թոչկոտելով դուրս է գնում միջի դռնից:

Տ Ե Ս Ի Լ Բ

ՎԱՆՑ, յետոյ ՆԱՏՕ

ՎԱՆՑ, մենակ:

էս ժողէֆին վուր շունենամ, իմ բանը դժար է:  
(Քսակի մէջ փող է ածում եւ դնում ձոցը, յետոյ սուլե-  
լով զննվում է հայելու մէջ:) Ձիկ...

ՆԱՏՕ, դուրս գալով ձախ դռնից, ձեռքին թատրոնի ծա-  
լած հայերէն յայտարարութիւն:

Ի՛նչ էլաւ քիզ, Վանօ. քանի զուքուխս, մօն շէր:

ՎԱՆՑ

Զուքածը դուն իս, նատօ. էտ ի՛նչ դէրիա է,  
ջեր չիմ տեսի:

ՆԱՏՕ

էս օր էրի կարողը: (Վանօի առաջ շուռումուռ գա-  
լով եւ հայելու մէջ զննուելով:) Աբա՛, լաւն է. լաւ է  
կանգնած, ն'էս պա:

ՎԱՆՑ

Ձիկ, շիկ, վրէ շիկ:

ՆԱՏՕ

Ձիկը թէ գ'ուզիս, Վանօ, էքուց տիս. ուրիշ հէս-  
տիկը կարվում է ինձ համա վուր է, քախկումն օշով  
չի ունենա: (Զեռքերով ցոյց տալով:) Էստի կարած  
կու'լի գիւպիւրնիր, էսթէնը կու'լի բանտ, էսթէնն  
իրմէն բուկէտ, էսթէնը պատի ջիւր, բոլորը մանդր,  
մանդր, մանդր ծիւծիւրէք, ու էդնէն ծալիւր, ծալիւր,  
ծալիւր, ծալիւր, ծալիւր, Վանօ ջան, ծալիւր, վուր ինչ  
ասիմ, պրօստօ պրէլէստ. սը սրա շարման. այ շիկ...

ՎԱՆՑ

Ա լա դէրնիէր մօզ:

ՆԱՏՕ

Սէրթէնըման...

ՎԱՆՑ

էտ ի՛նչ է, աֆիշկա է:

ՆԱՏՕ

Հա՛, հիմի բերին. տիս, թագա բան է:

ՎԱՆՑ, առնելով Նատօի ձեռքից յայտարարութիւնը:

Նո՛ւ... Հայոց թատրօն, շատ հարկաւուր է. 'ես

դէն ածելու փուղիը շունիմ: (Չգերով սեղանի վրայ):  
Միթամ բան ին մօգօնի. գլնւպրստ կակայա:

ՆԱՏՕ

Աբւ, գնանք, էլի. ինչ մօգօնից պապաշէն:

ՎԱՆՑ

'Ես շատ ուրախ իմ, Նատօ, Անանուն կու տես-  
նինք. էն բալէմէն դէսը մտկէմէս չէ դուս գնում:  
էրանի թողնէ մէ պաշ անիմ, ինչ գ'ուզէ կու տամ:

ՆԱՏՕ

Ֆի դօն... նա էտ հանգի ախշիկ չէ:

ՎԱՆՑ

Ինչ հանգի էլ գ'ուզէ ըլի, ուզենամ թէ չէ էրկու  
օրումը խիլքէմէն կ'օնիմ. ժը լիւի [lui] թուրնըրէ  
լա թէթ, աղնիմ սլօվօմ...

ՆԱՏՕ

Թէ էտ հանգի բանիը կ'օսիս, էլ հիդդ շիմ դա,  
Վանօ. թիւ է գէօն [tu es un] մօվէ սիւժէ:

ՎԱՆՑ

Լաւ է, լաւ, մի ջգրուի, Նատօ. արի գնանք:

ՆԱՏՕ

Քանի վուխտ է 'ես էլ էտ իմ ատում, ամա վուր  
ծանդը իս ժաժ գալի, ինձ էլ ուշացնում իս. իժում  
քանի բան ունիմ էս օր, վուր գիդենաս:

ՎԱՆՑ

Իմ տօլ բան դուն վոնրդի կ'ունենաս:

ՆԱՏՕ

Դիւնի, դիւնի, արա ինչ բան ունիս:

ՎԱՆՑ

Աբւ ջեր դուն ասա:

ՆԱՏՕ

Ձէ, ջեր դուն ասա:

ՎԱՆՑ

Ձէ, դուն ասա:

ՆԱՏՕ

Ձէ, դուն ասա ջեր:

ՎԱՆՑ

Ձէ, դուն ասա:

ՆԱՏՕ

Ձէ, դուն ասա:

ՎԱՆՑ

Ե՛յ, քանի բան ունիմ. էս վիդիարը...

ՆԱՏՕ

էտ խօս 'ես էլ իմ գալի:

ՎԱՆՑ

Աթանդէ: (Աջու մատով ծախու մատները համրելով):  
էս վիդիարը. իժում պիտի գամ տուն, շուրիըս փո-  
խիմ...

ՆԱՏՕ, ընդմիջելով:

'Ես էլ...

ՎԱՆՑ

Աթանդէ, աթանդէ: (Վրայ տարով): Չուրս պիտի  
փոխիմ, պիտի հաքնիմ վիդիակա, պիտի գնամ պարտ-  
նօուս տեսնիմ, իժում պիտի գամ նօտիր առնիմ, մէ  
ախշկայ խոստացիլ իմ՝ իւն [une] ժօլի դըմուզէլ,  
իժում էն նօտիրը պիտի տանիմ իրան տամ, իժում  
պիտի գամ տուն ու նուր մէկանց մէկէլ վիդիակէս  
հաքնիմ, գնամ կլուրը՝ տեսնիմ իմ ննգըտիքն ինչ ին  
չինում, իժում պիտի տուն գամ իմ հօր առշիւր

Ժանդը ու բարակ ձրուիւմ վուր հաց ուտինք, իժում պիտի ձի նստիմ, գնամ Մուշթէիդ, կուլի ճանփին ինչ պատահի, շորա պարերի, իժում պիտի տուն գամ շայ խմիմ, իժում պիտի շարչրուիմ վուր ութ սահաթը դառնայ ու ութ սահաթին՝ (Մի ոտը բարձրացնելով, միւսի վրայ պտոյտ է գալիս եւ մատներու ծայրը համբուրում:) պժամ... էլ շիմ ասի: Արա դուն ինչ բան ունիս:

ՆԱՏՕ, ծիծաղում է:

Հա՛, հա՛, հա՛... շատ բան ունիմ, շատ բան. հա՛, հա՛, հա՛... էս դադա բան խօսմ 'ես էլ ունիմ. (Նոյնպէս վրայ տալով:) 'ես էլ պիտի տուն գամ, շուրս փոխիմ, ուրիշ շուրիք հաքնիմ, ճաշ էլ ուտիմ, շայ էլ խմիմ, իրիգնահաց էլ ուտիմ, պարկիմ, քնիմ, էքուց վիկենամ, էրեսս լուանամ, հա՛, հա՛, հա՛... էս դադա, քանի գ'ուզիս բան ունիմ, հա՛, հա՛, հա՛... Քը թիւ [tu] է դբօլ, մօն շէր, հա՛, հա՛, հա՛...

ՎԱՆՑ, ծաղրելով:

Հա՛, հա՛, հա՛... Ինչո՞վ է քու բանն աւելի իմ բանի վրայ. ինչ բան ունիս, ինչ, արա՛ ասա:

ՆԱՏՕ, նոյնպէս ծաղրելով:

Ինչ բան ունիս, ինչ... Միթամ շիս դիդի ինչ բան ունիմ. մէ սահաթուան էղնէն մօսիէօ Գուժօն պիտի գայ ու էրկու սահաթ ֆօրտօպեանի վրայ գլուխս ցաւ տայ, իժում պիտի մէ էրկու սահաթ էլ մադամի մօդ՝ քօման վու փօրտէ վու, մէրսի մադամ, մէրսի մօսիէօ, իլ ֆէ բօ թան, իլ ֆէ մօվէ թան...

ՎԱՆՑ, ընդմիջելով:

Մ'է շարման, վու գէթ շարմանթ, վուլէ վու դան-

սէ, վուլէ վու վալսէ. էտունք խօ 'ես շատ վուխտ է գիդիմ, հիմի թո՞ղ քու գլուխն էլ ցաւ տան, մա՛ շէր, իմ գլուխը կատլէս շինեցին:

ՆԱՏՕ

Ղնւթ վուր կատլէս. խանդէխան գլուխս էնէնց ցաւում է էն անիծած մադամիմէն վուր էլ շիմ գիդի վուրթէնը ննգնիմ. սա մ'ամբէթ, Վանօ... Ամա փառք Աստձու, շուստ կու աղատուիմ էստունցմէն. ինչ սովրեցայ էն էլ հէրիք է: Պապաշէն ասաւ վուր էս օրերումն ուղում է ինձ նշնի, ու մէկէլ տեսար, շէր Վանօ, քու մադմուաղէլ նատօն դառաւ՝ (Սորը ըէ-վերսնս անելով:) մադամ... Ինձ համա իմ սալօնը կ'ունենամ, իմ բուդուարը. ինձ մօդ գու քան, կ'էհան, բալիք, վեշէրնիր կու սարքիմ. օ՛, սը սըա էօն [un] վրէ գէլիս:

ՎԱՆՑ

Իժում սւամն է տալի քիգ պապաշէն:

ՆԱՏՕ

Չիմ գիդի, ջեր շէ ասում... Գիդիս ինչ, շէր Վանօ, (Թեւն առնելով:) դուն վուր ուղենաս, մինձ լաւութիւն կ'օնիս ինձ... (Նստում են:) սով գիդէ պապէն ումը ջոգէ ինձ համա, ու խօ գիդիս՝ նրա կամքին հակառակուիլ շի ըլի. դուն մէ էնէնց իմաց արա նրան վուր 'ես մէկին հաւնում իմ:

ՎԱՆՑ

Գիդիմ, գիդիմ,—մօսիէօ Ալմասեան:

ՆԱՏՕ

Վօտ եչչօ... Ալմասեան... դուն էլ օքմին գթար... Ինչ կ'օնիմ 'ես նրան. մադամն ասում է վուր հայքը

կօպիտ ին ու կնգայ գինը չին գիդի... Փի, մօվէ ժանը... So լի դէլօ՝ Սէլիֆօնա Իվանիչ...

ՎԱՆՑ

Ա՛, մօսիէօ Բումեանսկի...

ՆԱՏՕ

Հիւի [լւի] մէմ, լ'էդ դը քան պրէնս Բումեանսկի:

ՎԱՆՑ

Օ՛հ, հօ՛, մտիկ թէ վուրդի իս ձքվում... Մադամ լա պրէնսէս դը Բումեանսկայետա. ո՛վ դիմնայ քիզ էն շախը... Իժում նա գ'ուզէ քիզ:

ՆԱՏՕ

Պապաշէն կամք տայ, թէ չէ նա ինձ համա գժուած է. տէատրումը վուր նստած է, լօռնէտը գցում է աչկերուն ու դիփ ինձ է մտիկ տալի. 'ես էլ նրան խիստ իմ հաւնում, մօն շէր Վանօ. սիրուն, կօկած, տրօսած, օլըրած բիխերով, դիդին էպօլէտ-նիրն ուսին, էքսիլբանանիրը քաշ արած, շպօրնիրը կրնգներուն, պրէլէստ պրօստօ... Գանի կուռս կռանը գցած բուլվարի վրայ անցուղարց կ'օնինք, թուրը գեզնին՝ (Գնարով մի կողմից միւսը:) թխկ, թխկ, թխկ... ու իմ շէյֆն էլ հիդը՝ (Յետ դառնալով:) շխկ շխկ, շխկ... վուալա էօն [առ] վրէ շիկ, ն'էս պա, մօն շէր ժան, ու կալասկով վուր գնում կու'լինք, 'ես (Նստում է եւ ձգվում, հովհարելով:) էսէնց... Տիս, տիս, մօն շէր Սէլիֆօնա Իվանիչ, վունց ին դիփուն-քը միդ մտիկ անում... (Վեր թռչելով:) Օ՛, 'ես կու գժուիմ...

ՎԱՆՑ, նոյնպէս վեր թռչելով:

Օ՛, 'ես էլ կու գժուիմ... 'ես քիզ կու օտկիմ,

շէր Նատօ. դուն ինձ ասն, շատ ախշկերանց հիդ կու ճանչցնիս ինձ:

ՆԱՏՕ

Ում հիդ գ'ուզիս, շէր Վանօ:

ՎԱՆՑ

Ա՛, չօրտ վազմի, կուտիտ տըկ կուտիտ... Արա էնշախը տանցաւատ կ'օնիմ, այ... (Վուրը գցելով Նատօի մէջքին:) Ղուրթ, արի մէ թուր դը պօլկա [polka]: (Պար է ածում պօլկա, բերանով նոյնը եղանակելով:) Թրա լա լա, թրա լա լա, թրա լա լա լա, թրա լա լա...

ՆԱՏՕ, պարելով:

Ուշացանք, ուշացանք, Վանօ:

ՎԱՆՑ, շարունակելով:

Թրա լա լա, թրա լա լա...

Տ Ե Ս Ի Լ Գ

ՆՐԱՆՔ, ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ, մտնում է աջ դռնից:

Է՛ստի մտիկ... (Վանօն ու Նատօն թողնում են միմեանց): Զեր էստի իք:

ՎԱՆՑ

Ա՛յ, գնում ինք, պապա:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ

Դէ, գնացէք. մէ սահաթ աւելի է կալասկէն լըծած է, դուք կի էստի արաինդ իք տալի, միխկ ին ձիանիրը:

ՆԱՏՕ

Քանի վուխտ է պատրաստ իմ, պապա, սա է վուր նորահարսի պէս զուրուիլ գիդէ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Վունց մէկդ պակաս չիք... Դէ, գնացէք. ամա ինչ իմ ասում, Վանօ, ծրարիպրարի շխօսիս էնդի, ամութ է:

ՎԱՆՕ

Մի վախենա, պապաչա, հէտաի խօսիմ վուր է՝ իստակ բօն տօն:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Հը՛ւ, մնղաթ կաց. Եագօր Սիմօնիչիմէն իմ կուղմանէ նիրողութիւն գ'ուղիս, վուր 'ես չկանացի գա:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ, միջի դոնից գուխը հանելով:

Կու՛լի վուր տուն գամ, Ստեփան Դանէլիչ. ծառէն ասաւ վուր ընթունում իք:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Համեցէք, համեցէք, աղա ջան:

ՍԱՐԳԻՍ

Համարցակութիւնս բախշեցէք: (Ողջունում է Վանօին եւ Նատօին, նրանք էլ պատասխանում են. յետոյ ձեռք է տալիս Ստեփան Դանէլիչին եւ Վանօին): Քէփու՛մդ վունց իս, Իվան Ստեփանիչ:

Նորից ողջունում է Նատօին:

ՎԱՆՕ

Լէ՛աւ... (Աջ ձեռքով խփելով Սարգսի փորին): Դուն վունց իս, վունց, Սարքիս աղա:

ՍԱՐԳԻՍ

Վա՛...

ՎԱՆՕ, Ձերուելով դէպի Սարգիսը եւ իբր թէ ականջում:

Միպտայ օքմիքը վունց ին:

ՍԱՐԳԻՍ

Է՛, Իվան Ստեփանիչ...

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ, բարկանալով:

Վանօ՛:

ՎԱՆՕ

Վա՛, բաս սա վուր ասում է:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Սա՛ւ, ասում իմ... (Սարգսին): Բէգամաղ մի ըլի, գէթաղվա, քու էրեխէրքն ին:

ՍԱՐԳԻՍ

Աստու՛ձ քիզ բախշէ. դօրանաք, վուրթիք: Խօ՛մ դաշլա շի՛մ անում ձիդ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Չէ, չէ, Սէրգէյ Տարասիչ, համեցէք նստեցէք. սրանցը Սուրաթինց տուն իմ զրպում վիզիտ:

ՍԱՐԳԻՍ, ուրախ:

Վա՛, դուրթ իս ասում. էտ լաւ է:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Ի՞նչ արմցար, էրէզ ձիր տանն էինք խօսում:

ՍԱՐԳԻՍ

Ղճ՛ւրթ խօ՛մ. միտս է, միտս, Ստեփան Դանէլիչ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Մնում էի վուր ջեր նրանք գան, ամա էս փիլի- սոփէքն ասին վուր ինչրու մինք չէհանք, նրանք չին գա, կ'օսէ: Դէ, գնացէք, վուրթիք, էլ մի ուշա- նաք: (Վանօն եւ Նատօն Սարգսին ողջունում են եւ գնում: ) Ինչ իմ ասում, Վանօ...

Վամաց խրատում է:

ՍԱՐԳԻՍ, այս միջոցին, առանձին:

Աստուծ է շինում իմ բանը... (Նայելով Նատօին: ) Մտիկ, է, շահղաղի լայիղ է... արա Անանու հատն է:

ՆԱՏՕ, միջի դռնից:

է բիէն, ժան, վիէն դօն:

ՎԱՆՕ

Վուի, վուի, [օււ, օււ] գալիս իմ...

Քչիչում են ու քրջքջալով դուրս գնում թեւակցած:

Քրքիջը շարունակում են եւ բեմից դուրս:

Տ Ե Ս Ի Լ Ե

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ, ՍԱՐԳԻՍ

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ, գլուխը շարժելով:

Մանխաս... (Առաջ գալով: ) Վան, համեցէք նստի, է... (Ինքը նստում է: ) Աբա, ինչ լաւ խաբար իս բերի:

ՍԱՐԳԻՍ, նստելով:

Մէ խաբար իմ բերի, Ստեփան Դանէլիչ, մէ խա- բար, վուր էս սահաթիս ինձ մէ լաւ թամբած ձի փէշքաշ անիս, արժանի իմ, հախ Աստուծ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Նը', խօսեցա՞ր, Միխէիլի հիդ: ՍԱՐԳԻՍ

Է՛հ, Ստեփան Դանէլիչ, Միխէիլը վնւրն է. մէ բանի իմ էկի, մէ բանի իմ էկի, վուր Միխէիլն էլ մտէս ննգաւ, նրա հէրն էլ... էս սահաթիս հարցնում էիր, թէ ինչի վրայ արմցայ, վուր էրեխանցդ Սու- րաթինց տուն էիր զրգում. այ, կ'օսիմ ու հիմի դո՛ւն արմըցի... Դուն ինձ ասա, Ստեփան Դանէլիչ, Եպ- փօր Սիմօնիչի ախշիկը... լաւ ախշիկ է գանա:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Լաւ:

ՍԱՐԳԻՍ

Սիրո՞ւն:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Սիրո՞ւն:

ՍԱՐԳԻՍ

Խելօ՞ք:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Խելօ՞ք:

ՍԱՐԳԻՍ

Գիդո՞ւն:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Գիդո՞ւն:

ՍԱՐԳԻՍ

Է՛, էլ ինչի՞ն իս մնում:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Վո՞նց թէ ինչի՞ն իմ մնում:

ՍԱՐԳԻՍ

Էլ էստու վրայ լաւը վճարդի կու ճարիս քու տղի համա:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, ծայնը երկարացնելով:

Վա՛: ՍԱՐԳԻՍ, նոյնպէս:

Ձա՛ն: ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, վեր կենալով:

Փիէ՛... ՍԱՐԳԻՍ, նոյնպէս:

Գ՛ուզիս տանը փիէ ասա, 'ես վուրնոր դրուստն է ու տպածն է, էն իմ ասում, Ստեփան Դանէլիչ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, նորից նստելով:

Տօ՛, ախար 'ես քիզ ինչ ասի, քիմէն ինչ ջուղարի էի մնում՝ դուն ինչ իս ասում հիմի:

ՍԱՐԳԻՍ, նոյնպէս:

Հալալ քու խօսկի ջուղարն է. դուն ուզում իս իմ տղի բանը շինի, ես 'էլ քու տղի բանն իմ շինում. ասած է՝ «Ի՛նչ կու ցանիս, էն կու հնձիս»: Դուն ինձ ասա, մէ քու մտկումն էլ էկիլ է էս բանը՝, թէ չէ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Մարթու միտկը ծով է, ախպէր, ինչ գ՛ուզիս կու անց կենայ. ամա հէնց դուն էլ վճարդի փիքը արիւր էս բանը:

ՍԱՐԳԻՍ

Վճնց է, վճնց թորոզի վուրթի Սարքիսը. դօշաղ իմ, թէ չէ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Չարում մարթ իս, ախպէր. ամա մէ դրճուստն ասա ինձ՝ էս դճն փիքը արիւր, թէ Եագօր Սիմօնիչն է դրդի քիզ մօցիքուլ:

ՍԱՐԳԻՍ

Ա՛յ, Ստեփան Դանէլիչ, 'ես քիզ դրուստն ասիմ բանը վճնց էր, 'ես սուտ չիմ սիրի, սուտը սատանին է: էս բանը վուց 'ես մօգօնեցի, վուց Եագօր Սիմօնիչը. դրուստ Աստճու բան է, քու արիւր գիղենայ, թէ չէ հնդու էկած դավրիչն էլ չէր կանա մօգօնի: Մէ մտիկ թէ վճնց էկաւ... Մէկէլ օրը հրամանքդ վուր միր տանն էիր, Եագօր Սիմօնիչի կնգան խօ քու աճկով տեսար էնդի...

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Հա՛, դուրթ է, աղա ջան:

ՍԱՐԳԻՍ

Չատ պատուական կնիկ է, է... Գնացիր թէ չէ, տեսնիմ ինքը Եագօր Սիմօնիչը տուն էկաւ. խիստ հարկաւուր բան ունիմ, կ'օսէ:—Ի՛նչ խարար է, Եագօր Սիմօնիչ:—Սա թէ՛ Մեիք-Չանգակինք տաք-տաք կպիլ ին, ախչկաս ուզում ին, կ'օսէ, ու ինձ սօվէտ էր հարցնում:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, ծայնը երկարացնելով:

է՛:

ՍԱՐԳԻՍ

Բա՛ս... էլ չիմ գիդի վուց էլաւ, քու արիւր. ինչրու Եագօր Սիմօնիչի խօսկի ջուղարը կու տէի, հէնց գիդիմ շինքումս մէքաշ բոկեցիր... էն քու խօսկիրը, էն քու ախչկայ գովիլը մէ նմուտումը, էս

հալա էրգար իմ յիդ ասում, կէծակի պէս անց կացաւ մտկումս... Էլ վունց տարայ, վունց բերի, գէմուդէմն էն ասի, վուր Մելիք-Չանգակինց տղի վրայ 'ես ձիդ համա ուփրո լաւ տղայ ճարիմ, ասի... Դուն ինձ ասս, թէ Աստճու բան չէր, էն սահաթին ախար նա հարցնում է, ես ջուղար իմ տալի, ու իմ ջուղարն ինչ նրա խօսկի ջուղարն էր, վուր մէ բաշ քու տղէն միտս էկաւ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Տճ, ախար մէ քիչ վաղ կ'օսէիր, է. էլ էրեխէրանցս էնդի վիզիտ չէի գրգի, է. ինչ կ'օսին հիմի:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ պիտի ասի, սրտեներուն ուփրո ումիկ կու տվուայ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ, գուրը շարժելով:

Օյին գ'ուղիք, սյ, էս է:

ՍԱՐԳԻՍ

Դուն ինձ ասս, Ստեփան Դանէլիչ, փիս խօսմ չիմ ժաժ էկի:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Չէ, չէ, շատ շնորակալ իմ. ամա մէ քիչ փիքը անիլ գ'ուղէ էտ բանը:

ՍԱՐԳԻՍ

Էլ փիքը անելու էստի վունչիչ չկայ, Ստեփան Դանէլիչ: Էրէգ շատ ման էկայ քարվասումը, քիզ չգթայ, ու հէնց էս է էս սահաթիս Եագօր Միմօնիչին ռաստ էկայ, ուզում ին էսօր էքուց վիրչացնի: Չունքի քիմէն խօսկ չունէի, Ստեփան Դանէլիչ, աղանչաք արի վուր ինչրու իրիգնապահն ինձ մուլափ

տան... Հիմի դուն գիղիս, Ստեփան Դանէլիչ, 'ես իմ բանը պրծայ:

Չեոքիրը միմեանց է խփում Թափ տալով:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Ախար մէ իրան էլ հարցնիմ — տղիս, է:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ ունիս հարցնելու. նրա պէս ախչկան սվ չի հաւնի. սաղ աշխարքը վուր ման գաս, էլ նրա վրայ լաւն ու ձեռնտու չիս կանա գթնի քու տղի համա:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Ախար 'ես ասում էի, Սէրգէյ Տարասիչ, ջեր մէ իմ ախչկայ ու քու տղի բանը քութահ էինք արի, իժուա էտուրն էինք ձեռը տուի:

ՍԱՐԳԻՍ

Էրկուար մէկ է գալի, Ստեփան Դանէլիչ. առչի գամը թէգուզ տղիտ նշնիս, թէգուզ ախչկատ, դիփ էրկու 'երիք օր թափահութին չի անի:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Աւտաս Միխէիլի հիդ ջեր էլի վունչիչ չիս խօսի:

ՍԱՐԳԻՍ

Վնւրդի կու խօսէի. էս բանը վուր դրի մտկումս, Միխէիլն էլ մտէս ննգաւ ու իմ գլուխն էլ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻԶ

Ազնիւ բարեկամ իս էլի, տղա ջան. բաս մէ ինչրու իրիգնապահը մնւլափ տու, Սէրգէյ Տարասիչ, մէկ էլի լաւ փիքը անիմ ու դրուտա ջուղարը քիզ իմաց կ'օնիմ:

ՍԱՐԳԻՍ

Դուն գիղիս, Ստեփան Դանէլիչ, 'ես իմ պարտքը պրծայ:

Տ Ե Ս Ի Լ Ձ

ՆՐԱՆՔ, ՕՍԷՓ

ՕՍԷՓ, երգելով ու թուղթերով մտնում է միջի դռնից, ձեռքին նամակ:

Վայ մէ...

Նամակը թաղցնելով մնում է շուարուած:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻ2

էտ ինչ գիր էր, աճ:

ՕՍԷՓ

Վունչիչ, աղա ջան, անմիղ թուխտ է:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻ2

էստի շանց տու:

ՕՍԷՓ

Պատի աղինն է, աղա ջան, վննց կու'լի, կու' ջգրուի:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻ2

Իս տու էստի, թէ չէ քիղ էլ, քու պատի աղին էլ...

ՕՍԷՓ

Աղա ջան, միխկ իմ ախար, տանէմէն դուս կ'օնէ ինձ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻ2, վեր կենալով:

Ի'ս տու, թէ չէ էս սահաթիս 'ես դուս կ'օնիմ քիղ:

ՕՍԷՓ, տալով նամակը:

Գէթաղվա, աղա ջան, շասիս էլա թէ 'ես իմ տուի:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻ2

Չէ, չէ. կ'օսիմ էստի ստօլի վրայ գթայ: (Ձնե- լով նամակը:) Էս ինչ հանգն է ծալած, մուհր չկայ վրէն: (Բաց անելով:) Ա'յ, սատանի ծալ դուզիս, էս է. ոսեվար է գրած: (Վարդալով հետզհետէ շփոթվում է, յետոյ մօտենալով Սարգսին, բարկացած:) Մտիկ, է, մտիկ, է. (Սարգսը վեր է կենում:) մտիկ թէ փուղիրս ինչի վրայ է փշայցնում:

ՄԱՐԳԻՍ

Ի'նչ խաբար է, Ստեփան Դանէլիչ. էտէնց ինչ նիղացար:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻ2

Ա'յ, իմացի: (Նամակը կարդալով:) «Իմ սիրեկան ծան», ասում է, անումն էլ վուր իրանց հանգն ին կնքի անիծածնիրը, «քու զրգած բուկէտը», ասում է, «ստացայ, շնորակալ իմ. ամա քու տուած փու- ղիրն», ասում է, «հատաւ: էս գիշիր վուր գալիս ըլիս, մէ տաս-տասնուհինգ թուման հիղդ բի. սա- հաթի ութին, վունցոր սսիլ էիր», կ'օսէ, «մնում իմ քիղ: Ինչրու մահը քու Կարօլինէն»: Իմացար էս լրփութ ինը:

ՄԱՐԳԻՍ, առանձին:

Թային սատանէն էլ է օտկում ինձ: (Ստեփան Դանէլիչին:) Հանաք թէ կու'լի, Ստեփան Դանէլիչ. մի նիղանա, թէ Աստուծ կու սիրիս:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻ2

է'հ, հանաքը վնրն է, Մէրգէյ Տարասիչ: (Օտե-

փին:) Տօ, քիզ էնդուր իմ պահում էստի վուր է տա-  
նող-բերողութին անին:

Նամակը ծեռքից վայր է ընկնում: Սարգիսը վեր-  
ցնում է եւ ծալերը զննում:

**ՕՍԷՓ**

'Ես ինչ անիմ, աղա ջան. ուրոր զրգում է՝ վննց  
կանամ վուր չգնամ: 'Ես ինչ գիտիմ՝ սւտօդ ինչ հէ-  
սար ունէ: Թէ կ'օսիս, աղա ջան, յօրէսի գէնն ուրոր  
կու զրկէ, ջեր գու քամ քիզ կու իմաց անիմ:

**ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ**

Գնա ջեր աճկէմէս հիւացի, իժում կու խօսինք:  
Օսէքը դուրս է գնում ծոճրակը բորելով:

**ՏԵՍԻԼ Է**

**ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ, ՍԱՐԳԻՍ**

**ՍԱՐԳԻՍ**, նամակից հոտ առնելով:

Վա, էս էլ չէի իմացի... Մէ մտիկ՝ ինչ հուտ ունէ:

**ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ**, առնելով եւ հոտ քաշելով:

Ա՛յ, ձիւր անումը կտրէ Աստուծ, հա՛. արս, ասում  
էիր հանար է, կ'օսէ. (Նորից հոտ քաշելով:) էս հա-  
նար է:

**ՍԱՐԳԻՍ**

Է՛, խիտ իս նիղանում, Ստեփան Դանէլիչ, քու  
արիւր. չէհէլ է, կու կոտրուի:

**ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ**, ման գալով:

Չէ, 'ես նրա գլխին պէտկ է օյին գամ, թէ չէ  
խտակ կու փշուրի:

**ՍԱՐԳԻՍ**

Իմ ասիլն էա է, Ստեփան Դանէլիչ, է՛, վուր  
վուտնիրը շուտ բուխով էիր պցի. ամա էլի դուն  
ծանգը ու թեթիւ իս անում:

**ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ**, նամակը ծոցը դնելով:

Ղուրթ իս ասում, դուրթ, աղա ջան. (Նստում է բեմի  
աջ կողմը:) տեսնում իմ վուր դուն ինձ վրայ խելօք իս:

**ՍԱՐԳԻՍ**, նստելով:

Է՛, պարուն, էա ինչ խօսկ է վուր դուն իս ա-  
սում. ամա իմ խիլքով, Անանու պէս ախշիկը մէ  
էրկու ամսումը խիլքի կու բերէ քու տղին: Կու՛րի  
էն ախշկայ վրայ լաւիրն էլ ուփքօ շատ ըլին, ամա  
վննց ջոգէ մարթ. Անանին կի վուր կայ, փորցած  
ակն է, աչքարա գիդինք ինչոր վուր է. նրան ձեռ-  
նէմէն դուս թողնիլը միխկ է, 'ես ու իմ հոքին:

**ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԶ**

Դէ, գնա, կամք իմ տուի քիզ. Եագօր Սիմօնիչի  
հիզ վունցոր պ'ուզիս, էնէնց խօսի իմ մագիար:

**ՍԱՐԳԻՍ**

Ջուխտ աչկիս: (Վեր կենալով, առանձին:) էսօր էւէտ  
մէ օխշար պիտի մատաղ անիմ:

**ՏԵՍԻԼ Ը**

**ՆՐԱՆՔ, ՎԱՆՑ**

**ՎԱՆՑ**, մտնելով միջի դռնից, կանչում է:

Ժօղէ ֆ:

Մնում է ստամ, յետոյ առաջ է գալիս:



ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 էտ քանի տարուան բան իս ասում:  
 ՎԱՆՅՈ  
 Մէ հազար տարի կու'լի:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Իժում դուն վնւրդի տեսար:  
 ՎԱՆՅՈ  
 Չիմ տեսի, ամա իմացիլ իմ:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, զուխը շարժելով:  
 Դուն ինձ ասան, վնւնց իս տեսնում, խելօք է էն  
 ախշիկը, թէ չէ:  
 ՎԱՆՅՈ  
 Հան, խելօք է, խելօք:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Նրա խիլքը քու խիլքի հիդ վնւնց գու քայ:  
 ՎԱՆՅՈ  
 Վնւնց կու'լի վուր նա իմ տօլ խիլք ունենայ. նա  
 ախշիկ է, 'ես տղայ իմ:  
 Սարգիսը ծածուկ ծիծաղում է:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, զուխը շարժելով:  
 Թէ ամեն բանը էտէնց իս իմանում, է բանի է ինձ:  
 ՎԱՆՅՈ  
 Վան, սւմը գ'ուզիս հարցրու, պապա, թէ սուտ  
 իմ ասում:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Լան է, լաւ, ցանցար-ցանցար մի դուս տա...  
 Դուն ինձ ասան, էս գիշիր ութ սահաթին վնւրդի իս:  
 Սարգիսը ծախ ձեռքով երեսը ծածկում է նրանցից  
 եւ դէմքը ծամածռում:

ՎԱՆՅՈ, փոքր ինչ շփոթուած:  
 Օչով:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Բաս օքմնու խօսկ շիտ տուի:  
 ՎԱՆՅՈ  
 Չէ:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Բաս էս գիշիր ութ սահաթին հանդիր կաց, 'ես  
 ու դուն մէտի մէ տիդ պիտի գնանք: (Վանօն շփոթ-  
 վում է): Իմացանը, թէ չէ:  
 ՎԱՆՅՈ, ձեռքը տանելով դէպի զուխը:  
 Ախ, պապա, մտէս ննգաւ. էս գիշիր ութ սա-  
 հաթին հարկաւուր բան ունիմ:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Ի'նչ հարկաւուր բան ունիս:  
 ՎԱՆՅՈ, կակազելով:  
 Իմ... ննգրուչը... խոստացայ, վուր Մուշաթիդի  
 տէատր գնանք:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Բէհէսար իս անում:  
 ՎԱՆՅՈ  
 Աւատան, պապաշա, էրէգ մէկսմէկու խօսկ տուինք:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Նամաղուլ իս անում:  
 ՎԱՆՅՈ  
 Բիլէթնիրն էլ առած ունինք:  
 ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ  
 Բէհէսար նամաղուլ իս անում ու սնւտ իս խօ-  
 սում:

ՎԱՆՑ

Աստուծ գիրենայ:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, տեղից վեր թոշելով, բարկացած:

Ա՛յ, Աստուծ խոռով կենայ քիզ, փնւշ, փշանալու: (Ծոցից նամակը հանելով ու երեսին զցելով:) Ա՛յ, ութ սահաթին վուրդի իս: (Վանօն տեղից վեր է կենում եւ շուարվում:) Վիկալ, վիկալ կարթա... Ի՞նչ սառեցար. սատանի ծալի վրայ ճանչցար, հա՛մ. սատանի լիզուն սատանէն գիրէ ախար, է... Վիկալ, վիկալ, 'ես քիզ ասում իմ, կարթա՛ն ու դօշիզ կպցրու:

ՎԱՆՑ, վեր առնելով նամակն ու ծանուցելով, առանձին: Ա՛խ, Աստուծ, Կարօլինի գրածը... (Սաստիկ շուարվում է:) էս վուրդանց...

Չեոքը աթոռի վրայ, մնում է արձանացած:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ

Լիրփ անսկամ... է՛տ էիր ասում թէ՛ դիփ մինձ մարթկերանց մօդ իմ նստում ու վիկենում, կ'օսէ՛. 'ես էլ վուր ատում էի ու մուխտարար-մուխտարը էնդադա փուղիըր տալիս էի... Ա՛յ, ջնւր էիր կարուռի քու մօր փուրումն ու աշխար շէիր էկի, վուր ինձ էսէնց բէղնամ շէիր արի, հը՛... Ուզում իս մէ քանիսի նման վուխշ կայինքս քամու տաս, իժում ախկատ դադօ դիփուհանց մասխարա դառնաւ. հաղիր իմ ձեռով ախկտացնիմ քի՛զ... Գաղելու շնուք շունիս, տօ՛, յիմար, դադածն էլա մի փըշացնի, է՛... էս սահաթիս դնւս իմ տանէմէն... Գնա՛, դառը քրանքով մէ թիքայ հանց ճարէ, վուր մէկէլներու դաղրն իմանաս. դնա՛, քու փային դիփ ախ-

կաներուն կու բախշիմ, մէ օղորմի էլա մայինց կ'օսին... Գնա՛... Գնա՛... դնա՛, ասում իմ...

ՄԱՐԳԻՍ, վեր կենալով տեղից եւ աղերսալի ծայնով:

էս մէկը, Ստեփան Գանէլիշ, բախշէ, ինձ պատիւ արա, ու յօրէսի դէնը 'ես թավղէր սրա համա, վուր էտ հանգի բան էլ չի անի:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, աղաղակելով:

Ա՛խ, Աստուծ, էն հանգի ի՞նչ գէթ ունէի Քի մօդ վուր էս թավուր վուրթի բահամ բերիր ինձ համա... Ախար ասած է՛ վուր հարուստի վուրթին լաւը չի դուս կանգնի, է՛... Չէ՛, հայրաթ իմ միխկի պատիժն է... Միղայ Քիզ, Տէր Աստուծ, միղայ...

ՄԱՐԳԻՍ

Լաւ է, լաւ, Ստեփան Գանէլիշ, սիրող յիզ բի, թէ Աստուծ կու սիրիս, քու մեռըլին պատիւ արա:

ՄՏԵՓԱՆ ԴԱՆԷԼԻԻՉ, լալով ու աչքերը սրբելով:

Խիղճ իմ նանօ, էրանի է քիզ վուր էստուրը շվրահասար... Օղորմած հոքին սրա խաթիր շուրս տարի դիզց ու խնձուր չկերաւ... ինչ ուխտ ասիս սրա համա է կատարի... (Սարգիսը կեղծաւորութեամբ աչքերը սրբում է:) բորլիկ վուտով Սօնդալուխէմէն խտրտած Թելէթ է տարի... ամեն Ասծու էրկուշափթի պաս է պահի... էստու համա... Ա՛յ, հարամ բլի քիզ քու մօր ամազը...

ՄԱՐԳԻՍ, մօտենալով Ստեփան Գանէլիշին եւ սուտ լացով:

Թէ իմ խաթրն ու պատիւն ունիս, Ստեփան Գանէլիշ, էս մէկն ինձ պատիւ արա, ի՛նձ:

Աչքերը սրբում է:

ՄՏԵՓՍԵ ԴԱՆԷԼԻԻ

Մէկն էս է, հազարն էլ ուրիշ կու'լի:

ՍԱՐԳԻՍ

2Է, չԷ, 'ես ումիկ ունիմ Աստձէմէն, վուր ինձ չի ամանչեցնի քի մօղ:

ՄՏԵՓՍԵ ԴԱՆԷԼԻԻ

Իր գլուխն ու իմը վուր չինահից, քու գլուխը կու ինահէ:

ՍԱՐԳԻՍ

'ես թավդէր իմ, Ստեփան Դանէլիչ, օմքնու խօսկն էլ լսէ, հէր օխնած, է:

ՄՏԵՓՍԵ ԴԱՆԷԼԻԻ

Թավդէրն էն է վուր (Մատիցը մատանին հանելով:) էս մատնիքը տար, Սէրգէյ Տարասիչ, Եագօր Սիմօնիչին տու իմ մագիար. կ'օսիս վուր նրա ախշկան ուզում իմ էս փուշ փշանալուի համա, թէ իրանք էլ լայիղ կու աեսնին:

ՍԱՐԳԻՍ, առնելով մատանին:

Ձեռիտ էլ պաշ կ'օնին:

ՎԱՆՕ, թոթոկելով:

Պապա... ախար...

ՄՏԵՓՍԵ ԴԱՆԷԼԻԻ

Սու, սու, ձէնդ, թէ չէ էս սահաթիս տանէմէն դուս կ'օնիմ, Աստուձ գիղենայ:

ՎԱՆՕ, աչքերը սրբելով:

Ախար, պապա, ջեր ինչ վուխտի իմ կնիկն է. իմ ննզրաեքանց էրեսին իժում վննց մտիկ անիմ:

ՄՏԵՓՍԵ ԴԱՆԷԼԻԻ

Փուշ արարմունքով խօ կանաս մտիկ անի. էրեւում է նրանք էլ լաւ պտուղնիր ին էլի:

ՎԱՆՕ, լարով:

Մէ քիչ... ժա...մա...նակ տու, պապաշա ջան, փիքը անիմ:

ՄՏԵՓՍԵ ԴԱՆԷԼԻԻ, զայրացած:

Խէրով բան կու փիքը անիս, քու գլխի պատուելը գիղենայ... էլ 'ես ժամանակ-մամանակ չիմ գիղի. էս սահաթիս կամ «հա», կամ թէ չէ էլ իմը վուրթի չիս. խօ գիղիս իմ խօսկը խօսկ է... էլ քի մօղ խօսելու գլուխ չունիմ... Սիրտս շուռ էկաւ. մէ դուս գնամ շունչ քաշիմ... էս սահաթիս գալիս իմ, Սէրգէյ Տարասիչ... Մէ էս անիրաւին հասկացու, վուր կիսին էլ արժանի չէ էն խիղճ ախշկանը... չայի՛փ, հայի՛փ ախշիկ, 'ես ու իմ հոքին...

'Գուրս է գնում աջ կողմից, Վանօն ընկնում է, գրասեղանի մօտ, ածողի վրայ:

ՏԵՍԻԼ Թ

ՍԱՐԳԻՍ, ՎԱՆՕ

ՍԱՐԳԻՍ, բեմի ձախ կողմում կանգնած, առանձին:

Միթամ իմ վուրթու քարոզիլը հերիք չէր ինձ... (Երկար լուծիւնից յետոյ քայլ առ քայլ մօտենում է Վանօին:) Լաւ պըծար, 'ես ու իմ հոքին. պատժելու մագիար, քու հէրը քիզ նուր բախտի է ռաստ բերում:

ՎԱՆՑ, տեղից վեր թռչելով:

Էս սվ մօզօնից, սվ էդի նրա միտկը. դուք ասիք, մօցիքուլը դուք իք:

ՍԱՐԳԻՍ

Ձէ, չէ, վուրթի, ինչ իմ բան է. առուարի հէ- սար ունէի քու հօր հիդ...

ՎԱՆՑ

Բաս էտ մատնիքը քիզ սւր էրիտ:

ՍԱՐԳԻՍ

Եագօր Սիմօնիչի մօզիկ հարեան իմ, պարուն, էնդուր թէ էրիտ քու հէրը... Դուն հէնց գիդիս շատ շնորակալ իմ. ամա ինչ անիմ, քու հօր խաթըը չիմ կանա կոտրի. շարէս ինչ է, պիտի տանիմ:

ՎԱՆՑ

Բաս սվ ասաւ, սվ. իմ հէրն իրան-իրան վսւրդի փիքը արաւ էտ բանը:

ՍԱՐԳԻՍ

Ախպէր, իմ գալուն իս միդ դնում... Ջեր 'ես վուտս էլ չէի տուն դրի էստի, վուր դուք Եագօր Սիմօնիչի մօզ էիք դնում. արա մէ փիքը արա, հէնց ապրիս, է. 'ես ինչ միդ ունիմ:

ՎԱՆՑ

Ախ, էրանի գիդենամ թէ սվ էդի էս բանը իմ հօր մտկումը, էս ստհաթիս մաս-մաս կ'օնիմ, վից լուլանի բէվօլվէրը մէտի կու դարդըկիմ նրա սրտու- մը. նրա հէրն անիծած, նրա հէրը...

ՍԱՐԳԻՍ

Ինչ իս ուշունց տալի, վուրթի, էգէրա լաւ մարթ է:

ՎԱՆՑ

Լաւ ցաւի ռաստ գայ ու սիւ սատանի. քոռանայ, խլանայ...

ՍԱՐԳԻՍ

Վա՛...

ՎԱՆՑ

Լիդուն պապանձուի, չորնայ նրա բերանը...

ՍԱՐԳԻՍ

Վա՛, վա՛...

ՎԱՆՑ

Վուշ տեսնէ իր վուրթու բախտաւուրութինը, թէ վուրթի ունէ...

ՍԱՐԳԻՍ

Վա՛, վա՛, վա՛...

ՎԱՆՑ

Անիծուի, փշուի, փշանայ, վուր էս բանը չէր մօզօնի ինձ համա:

ՍԱՐԳԻՍ

Քու հօրմէն անբաւական իս, վուրթի, եադերէ- մէն ինչ իս ուղում:

ՎԱՆՑ

Ախար էս հանգի բան կու'լի:

ՍԱՐԳԻՍ

Ինչ փիս բան է, վուրթի. էն ախչիկն 'ես կու ճանչնամ, շաւ լաւ ախչիկ է, Աստուձ գիդենայ... իմ վուրթիկերանց արիւը վկայ:

ՎԱՆՑ

էտ 'ես էլ գիդիմ վուր լաւ ախչիկ է. ամա բա՛ դրօս իմ կնիկն է, բա՛ դրօս... Իմ ննգրտիքը վուրդի

վուր ուզենան քէփ անին, 'եփոր էլ ուզենան էն շախը տուն գնան. 'եօ կի իմ կնգայ կուզի պիտի դառնամ, շլէյֆի պէս պիտի թրևի ինձ, ուրոր գնայ պիտի հիզն ըլիմ... Իժում պիտի էրեխէրք ըլին, նրանց էգնէն ման գամ, նրանց ճղաւելուն անգամ դնիմ. (Նրեխաների ճղաւոցը ծաղրելով:) ան... ս... Լ... ու իմ ննգրտիքը կի քէփ անին առանց ինձ... (Մազերից քաշելով:) Մ'խ...

Բռունցքով խփում է գրասեղանին, մօտը նստում ու ձախ արմնկի վրայ յենուելով գլուխը բռնում:

ՍԱՐԳԻՍ

Ջեր ջհէլ իս, վուրթի, քու գլխի գինը չիս գիդի... Ափսուս չէ քու սիրուն էրեսարքը, վուր սատանի պռօշնիր ըլի գիրչում վրէն:

ՎԱՆՕ

Սատանէն վնւրն է:

ՍԱՐԳԻՍ

Թէգուզ հէնց քու Կարօլինէն:

ՎԱՆՕ

Ի՞նչ իս ասում, է՛յ, պարուն. նա հրիշտքի նման ախշիկ է:

ՍԱՐԳԻՍ

Մէ բան պակաս կու'լի. քու աչքումը կու էրևայ հրիշտաք... Քու փուղերով իստակ հաքնվում կու'լի, բերանը դուխերով ու օդիկալօնով օդողում կու'լի, ձեռնիրը բարաթ-բարաթ սապներով լուսնում կու'լի, հա հրիշտաք է ու հրիշտաք: էտէնց վուր անիմ, 'եօ էլ հրիշտաք կու էրևամ... Ամա լաւ գիդացի, վուրթի, վուր հրիշտաք չէ, սատանայ է, սատանե-

ըով լիքն է: Խիլքէմէտ կու հանին, մի աւտա դուն նրանցը... Դուն հէնց գիդիս էն ձեռիտ ու վուտիտ վուր պաշ ին անում, շլնքիտ օցի հանգը փաթըթ-վում ին ու ասում ին՝ դուշինկա Վանօ ջան, դուրթ քիզ ին ասում:

ՎԱՆՕ

Քաս սումն ին ասում...

Հետզհետէ մտածմունքի մէջ է ընկնում եւ մնում անշարժ՝ գլուխը ձեռքերի մէջ, արմնկների վրայ յենած:

ՍԱՐԳԻՍ

Դիանիս, վնւնց չէ. քու ջիրի փուղերուն ին ասում: Աբա մէ էրկու շափաթ փուղ մի տա,—ասս վուր յօրէսի դէնը զարթնի սէրը վունչիչ հէսար չի պիտի ըլի միր մէշը, ասս. դուն ինձ՝ դուշինկա Վանօ ջան իս ասում, տաս, 'եօ էլ քիզ՝ դուշիչկա հրիշտաք ջան իմ ասում,—Աստուձ գիդենայ, դիփ կինծումը տալով դուս կ'օնէ տանէմէն: Բէգամազ չըլիս, գէթաղվա, մէբաշ լիզուիս էկաւ. էնէնց իմ խօսում քի մօդ, միթամ իմ վուրթու մօդ... Աբա, վնւրթի, էսէնց է նրանց բանը. նրանք վուր կան՝ ջիրի ծուրբէլէք ին, չէ թէ աթմորթիք. քրիստանէն կու աւտայ նրանցը... Քի մօդ օրթում կու'լի ուտում, վուր զարթնի քիզ՝ նրա համա աշխրբումը վունց արեգագ կայ, վունց լուսնիակ. ամա քսանուհինգ լուսնիակ ու արեգագ էլ ուրիշ կ'ունենայ, աստղիրը հալա դէնը կենայ: Լաւ իմացի՛ էտ նրանց փէշակն է... (Լռութիւն:) Խիլքումը նստում է գանա... Քանի մարթ է խարաք էլի նրանցմէն. անփսուս չէ

քի պէս աղէն, էն էլ քի պէս խելօքը, վուր նրանց ճանգումն ըլի... Էքուց էլօք, Աստուծ մի արասցէ, ով գիղէ ինչ օյլին էին բերի գլուխդ. միխկը չէր քու աէրը... Գնա, վնւրթի, գնա, Աստուծն փնոր տու վուր էս միտկն էրիտ քու հօրը... Իժում ինչ ախչիկ է՝ թէ օսկով լիքը խաղինա իս ճարի, թէ նրան, գիլի մէկ է, 'ես ու իմ Աստուծը... Գնա, ձեռին պնչ արա, շնորակալութիւն արա, վուր աշխարքի փորցանքէմէն քիդ աղատում է... (Մօտ է գնում:) Արի, արի, վնւրթի, (Թեւից բռնում է:) արի մէտի գնանք:

ՎԱՆՑ, տեղից վեր ձռչելով:

Ի՛ս տու էտ մատնիքը:

ՍԱՐԳԻՍ

Վնւնց թէ քիդ տամ:

ՎԱՆՑ

Ի՛ս տու, իս տու, 'ես կնիկ-մնիկ չիմ գիղի:

ՍԱՐԳԻՍ, առանձին:

Արի ու գիլի գլխին Աւետրան կարթա:

ՎԱՆՑ

Ի՛նչ իս փիքը անում, իս տու էստի, ասում իմ:

ՍԱՐԳԻՍ

Ախար, վնւրթի, ինչ իս ասում. քու հօրը չիս ճանչնում:

ՎԱՆՑ

Ի՛նչ անիմ, չարացած էր, մէքաչ ասաւ. մէ էր-կու օրուան վրայ յիդ գու քայ:

ՍԱՐԳԻՍ

Ձէ, վուրթի, չէ, չիմ կանա տա. քու հօրն ինչ

ջուղար տամ. թէ դուն չիս վախենում նրամէն, 'ես վախենում իմ, ախպէր:

ՎԱՆՑ

Գէթաղվա, ինչ գ'ուղիս կու տամ:

Փաթաթվում է:

ՍԱՐԳԻՍ

Ձիմ կանա, քու արիւր:

ՎԱՆՑ, փաթաթուած:

Քու լաւութիւնը կու վշարիմ:

ՍԱՐԳԻՍ

Ձիմ կանա, Աստուծ գիղենայ... Իմ հօր գերեզմանը գիղենայ, չիմ կանա:

ՎԱՆՑ

Ա՛յ, թէ չիս կանա...

Կամենում է մատանին խել:

ՍԱՐԳԻՍ, մատանին բերանն է գցում:

Է՛, ձեռը վիկալ թէ քու Աստուծ կու սիրիս...

(Աղատվում է:) Փիէ...

Փախչում է միջի դռնից, Վանօն վազում է ետեւից: Վարագոյրն իջնում է:

## ԱՐԱՐՈՒՆԾ ՉՈՐՐՈՐԴ

Յեմը ներկայացնում է Միքայելի գրասենեակը, որ գարգարուած է թէն համեստ, բայց նուրբ ճաշակի կահ-կարասիքով: Աջ կողմը գրասեղան և մեծ լուսամուտ, իսկ ձախ՝ դիվան, վառարան և դուռը: Ուր հարկն է աթոռներ և բազկաթոռներ: Մէջտեղը ևս դուռը, որից աջ՝ գրասեղանի գիմացը, գրադարան:

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԻՔԱՅԷԼ, մենակ, գրասեղանի մօտ՝ ոտի վրայ, պայուսակի մէջ դասաւորում է գրքեր, ճաղուստներ եւ զանազան իրեղէններ:

Մնաս բարեաւ, դու՝ իմ հայրական տուն... (Նայում է իր շուրջը: ) Մնաք բարեաւ, մանկութեանս քնդցը յիշատակներ... Այստեղ ծնունդի, այստեղ մեծացայ, բայց այժմ այս ահագին տանը մի անկիւն անգամ չէ մնում ինձ համար, ուր կարողանայի ազատ չունչ աւնել... «Գուրս կ'անեմ տանից, գուրս կ'անեմ», սպաւնում ես դու, հայր. ահա ես ինքս իրապօր-ծում եմ քո ցանկութիւնը... Թափառիր այժմ սե-

նեակից սենեակ, կանչիր, աղաղակիր սրբան էլ կամենաս, սակայն իմ հետքն անգամ չես կարող գտնել այստեղ... (Ընկղմվում է մտածմունքի մէջ. լռուութիւն: ) Այո, դնալ, գնալ, կորչել այստեղից...

Նստում է գրասեղանի մօտ եւ շարունակում իր գործը:

### ՏԵՍԻԼ Բ

#### ՄԻՔԱՅԷԼ, ԲԱՐՅԱՐԷ

ԲԱՐՅԱՐԷ, ներս գալով ծախ գոնից:

էտ ի՞նչ իս անում, Միխէիլ ջան:

ՄԻՔԱՅԷԼ

Ահա, տեսնում ես, մայրիկ... Ես արդէն ասացի քեզ, թէ իմ այստեղ մնալն այլևս անկարելի է:

ԲԱՐՅԱՐԷ

է՛, ձեռը վիկալ, Միխէիլ ջան, հէնց ապրիս. լսօ չի՞ս կանա սպանի ինձ... Ախար միխկը չի՞մ, վնւրթի. քու գլուխը չիս խղճում, ինձ էլա խղճա՛, է՛... է՛տ է քու սէրը...

ՄԻՔԱՅԷԼ

Գու ինքդ էլ լաւ գիտես, մայրիկ, որ եթէ քո սէրը չլինէր, ես մինչև այսօր մի բոպէ անգամ չէի մնալ այստեղ:

ԲԱՐՅԱՐԷ, խլիով Միքայելի ձեռքից գիրքը, որ նա դնում էր պայուսակի մէջ, եւ պոկով սեղանի վրայ:

Արա՛ ես բաց աճկով կու թողնիմ վուր դուն էտ բանն անիս:

ՄԻՔԱՅԵԼ, վեր առնելով նոյն գիրքը եւ դնելով պայուսակը:

Ո՛չ, ո՛չ, մայր իմ, ես արդէն վճռել եմ որ էլ այստեղ չկենամ եւ կեանքովս եմ երդվում, որ ոչ մէկ բանով չեմ փոխիլ իմ վճիռը...

ԲԱՐՅԱՐԷ, նստելով մօտը:

Ջո՛ւրն էկիլ է ու ինձ տարի...

ՄԻՔԱՅԵԼ

Հայրս ինձ այս դրութեանը հասցրեց:

ԲԱՐՅԱՐԷ

Քու հէրը քու բախտաւորութիւնն է ուզում միթամ, վնւրթի:

ՄԻՔԱՅԵԼ

Նրա բախտաւորութիւնը փողն է...

ԲԱՐՅԱՐԷ

Է՛հ, վնւրթի, ծիր մարթ է, նրա ասածն ի՛նչ իս այնումդ պցում:

ՄԻՔԱՅԵԼ

Ի՛նչպէս թէ՛ ի՛նչ ես այնումդ պցում... Նա ուզում է որ ես ո՛չ կամք ունենամ, ո՛չ սիրտ, ո՛չ խելք, ամեն դէպքում իր խելքով շարժուեմ, իր կամքը կատարեմ... (Վեր կենալով:) Ես չեմ կարող դիմանալ, մայրիկ, ես էլ մարդ եմ... Աստուած իմ, այսպէս էլ բան. հայրը որդի մեծացնէ, ուսում տայ—սե ու սիպտակը հասկացնել տայ նրան եւ երբ երեխան մարդ դառնայ, ամեն օր այն կռիւն ու անբաւակա՜նութիւնն ունենայ թէ՛ ի՛նչի մարդը նորից երեխայ չէ դառնում... Կատարեալ պատիժ, ճշմարիտ: Ի՛նչ է՛ կուրօրէն չեմ հետևում նրա խորհուրդներին, նա սպառնում է ինձ տանից դուրս անել եւ բաւական

չէ որ այս երեսիս է ասում, այլ երէկ գնացել, Սալօմէի մօտ էլ է պարծեցել... Օ՛հ, նա իմ սիրտս բոլորովին թունաւորել է:

Բարկացած ման է զայիս, յետոյ վառարանի

վրայ աջ արմնիով յենվում՝ զլուխը ձեռքի մէջ առած:

ԲԱՐՅԱՐԷ, երկար լուռութեամբ յետոյ:

Գո՛ւն էլ վուր նրանցն աւտում ի՛նչ, վնւրթի, արմնում իմ քիմէն, քու արիւր... Ասած է՛ «Օցը դըրսէմէն է ճրէլ, մարթը՝ նեքսէմէն»... Լաւ գիդենաս վուր նրանք չէ թէ քիզ ին ուզում, քու հօր կարողութենի վրայ ունին աճկը... Էլախտ էլ ասի, վնւրթի, վուր էն օրն իր վուտով էկաւ Սալօմէն ու իր բերնով ասաւ էս բանը, քիզ կի սուտ ումիկնիր է սուի. արա աւտալու է... Ո՛վ գիդէ նրանց մտկումն էլ ի՛նչ կայ ու քու հօրն ին սուտ մահանա բերում... (Կարծ լուռութեամբ:) Քիզ ի՛նչ ասիմ, Միխէլի ջան, վուր քու գլխի դադըր չիս գիգի. էն հանգի ջուղար իմացար նրանցմէն ու էլի նրանց վրայ իս փիքը անում, վնւրթի:

ՄԻՔԱՅԵԼ

Է՛հ, մայրիկ, մէկն ասում ես, միւսը չէ...

ԲԱՐՅԱՐԷ, զնալով դէպի Միքայէլը:

Ախար գլուխդ խուզի հիզ հաւսըրեցիր. գնացիր դէմուդէմը խնդրեցիր ու ջուխտ ձեռով վուտիտ չըփաթըթուեցան ու էն սահաթին շտուին քիզ իրանց ախչիկը. էլ նրանց էրէսին կու մտիկ անիմ, ես բարիլուս կու տամ յօրէսի դէնը... Գլուխը քարը տան,

էրէսը սիւ պատովը. դուն էլ թքէ նրանցն ու մըտ-  
կէմէտ հանէ:

Նստում է դիվանի վրայ:

ՄԻՔԱՅԵՆ, մօտենալով մօրը:

Մայրիկ, ես սիրում եմ Անանուն, հասկանո՞ւմ  
ես, սիրում եմ...

ԲԱՐՅԱՐԷ

Ուցնալուր իս դուն էլ, Միխէիլ. ինչ անիմ վուր  
սիրում իս, քախկումը ախշիկը կարուիլ է... Նրա  
վրայ լաւը յօրէն քու հօր ասածն է, հաղիր աղանշա-  
քով տալիս է քիզ նրա տէրը՝ Էնդաղա փուղ ու  
բաժնքով. ամա վուր քու ասածի իս, ինչ վայ տամ  
'ես իմ գլուխը:

ՄԻՔԱՅԵՆ, գրասեղանի մօտ:

Մայրիկ, ի սէր Աստուծոյ, այդ բանի մասին էլ  
ոչ մի խօսք:

ԲԱՐՅԱՐԷ

Բաս ինչ ասիմ, վնւրթի. թէ կի հէրն ու մէրը  
դուրթ դարուլ չին անի, տանէմէն խօ չիս կանա  
փախցնի ախշկան:

ՄԻՔԱՅԵՆ

Թէ աղջիկն էլ համաձայն է, ինչի՞ չէ, լաւ...

Ման է գալիս:

ԲԱՐՅԱՐԷ

Վնւյ քողանամ 'ես, էտ է պակաս... էտ ինչ իս  
ասում, Միխէիլ ջան. ուզում իս աշխրքի «ասա-կօ-  
սէն» դուն դառնան:

ՄԻՔԱՅԵՆ

Այո, գիտացիր որ այդպէս էլ կ'անեմ, եթէ այդ  
տեղը կը հասցնեն:

ԲԱՐՅԱՐԷ

Ու էտու համա էլ հիւանում իս ինձմէն, էլի,  
վնւրթի... (Աչքերը սրբում է:) Քանի տարի գնացած  
իս էլի ուսումիտ, Էնդաղա վուխտ աճկէս հիւու իս  
էլի իստակ, հալվիլ ու մաշվիլ իմ քու վերու, ամա  
սիրտս մէ օր էլ չէ ցաւի ու միկաացի Էնշախն  
էսէնց, վուցոցը հիմի... էս ինչ բան իս բերում իմ  
նաշար գլխին, վնւրթի...

Լաց է լինում:

ՄԻՔԱՅԵՆ, նստելով մօր կողքին:

Գու հանգիստ եղիր, մայրիկ, մի օր էլ չեմ  
անց կացնիլ առանց քեզ տեսնելու. ես հօրիցս եմ  
հեռանում և ոչ թէ քեզանից:

ԲԱՐՅԱՐԷ, լալով:

Միցիլ էր իմ ծնելու սահաթը... Վնւր մէկիտ  
գիմնամ. դուն մէ կուռը, քու հէրը մէկէլը...

ՄԻՔԱՅԵՆ, գրկելով մօրը:

Թէ ինձ սիրում ես, մայրիկ, մի դառնացնիր  
օրս... Անանուն խօսք եմ տուել, ես նրանից ձեռք  
չեմ վերցնիլ՝ թէկուզ աշխարհը տակն ու վրայ լի-  
նի. իսկ նրան այստեղ բերել անհնարին է, դու էլ  
գիտես, որ անհնարին է՝ ոչ հայրս թոյլ կը տայ և  
ոչ էլ ես կը կամենայի, որ այն խեղճ աղջիկը հօրս  
նախատինքները լսէր ամեն օր... Միակ ճանապարհը՝  
գնալ, հեռանալ այս տանից... Մի լար, մայր իմ,



ԲԱՐՔԱՐԷ, Սարգսին:

Էրնէկ գիղեհամ, ինչ իս նահատակում խիղճ  
էրեխիս:

ՍԱՐԳԻՍ

Բարբարէ, դուն ձէնդ...

ԲԱՐՔԱՐԷ

Քօծ խօ շիմ, 'ես էլ մէ օր պիտի ձէն հանիմ,  
թէ չէ... Հաղիր համով խօսիս հիզը վուր աշխրբի  
իջնօ ու մասխարա շղառնանք... Արա ինչ կ'օսէ  
խալիսը, վուր էս հանգի վուրթին չէ կանացի քի  
մօղ դիմնա:

ՍԱՐԳԻՍ, գոռալով:

Տօ, ձեռը շիս վիկախի ինձմէն:

ԲԱՐՔԱՐԷ

Մէ խիտ բղաւի վրէս, շատ այնումս գալիս է.  
հիմի գ'ուզիս գլուխս էլ ջարթէ, 'եփոք 'ես էս օրին  
արժանի էլայ:

ՍԱՐԳԻՍ, վեր կենալով:

'Ես քիզ ասում իմ, Բարբարէ, դինջ կաց, թէ չէ  
հանաքը շանաք կու դառնայ ու տեսնիմ թէ ո՞վ է  
օտկում քիզ:

ՄԻՔԱՅԷԼ, մօտենալով մօրը:

Մայրիկ, տեսնում ես, որ սրա համար էլ ոչինչ  
չկայ՝ ոչ որդի և ոչ կին. էլ մի խօսիր հետք, խնդրեմ:  
ԲԱՐՔԱՐԷ, վեր է կենում եւ փաթաթվում Միքայէին:

Մի գնա, մի գնա, Միխէիլ ջան... (Սարգիսը այդ  
միջոցին մօտենում է պայուսակին եւ ձեռքերն ու զու-  
լսը շարժելով՝ անբաւականութիւն արտայայտում: ) Զարըդ  
տանիմ, մի գնա...

ՄԻՔԱՅԷԼ

Աստուած սիրես, մայրիկ, դրա մասին էլ չխօ-  
սենք:

ԲԱՐՔԱՐԷ, լալով:

Ա'իս, Միխէիլ ջան, քիմէն էս ումիկը շունէի.  
գնա հիմի, վուրթի, ինչ գ'ուզիս արա. ամա լաւ  
գիղացի, վուր կինքս հառամ էլա... (Գնալով:) Վայ  
իմ ապրելուն յօրէսի դէնը...

Լալով դուրս է գնում ծախ դնից:

Տ Ե Ս Ի Լ Գ

ՄԻՔԱՅԷԼ, ՍԱՐԳԻՍ

ՄԻՔԱՅԷԼ, շուարուած, առանձին:

Ա'իս, Աստուած, այս ինչ օր է...

ՍԱՐԳԻՍ, պայուսակի մօտ, առանձին:

Արի ու վուրթի մինձացու... (Միքայէին, մօտե-  
նալով:) Տօ, հիմի էլ ջուղար շիս տա. ախար էս ո՞ւր  
իս հաղըվում:

ՄԻՔԱՅԷԼ, գնում է դէպի գրասեղանը:

Ի՞նչ հարկաւոր է ձեզ իմանալ. բաւական է որ  
ձեր ցանկութիւնը կատարում եմ և չեմ սպասում որ  
ձեր ձեռքով դուրս ածէք այս իրեղէնները:

ՍԱՐԳԻՍ, նստելով դիւանի վրայ:

Վունցոր դարսիլ իս, յիդ իր ախը դարսէ ու բէ-  
սար նամադուլ մի անի, թէ չէ դուն ինձ ջեր լաւ  
շիս ճանչնում:

ՄԻՔԱՅԷԼ

Արդէն ուշ է, հայր, այլևս ոչինչ չի օգնիլ... Այժմ գնացէք ամեն տեղ աւելի լաւ պարծեցէք, թէ ինձ տանիցը նրա համար դուրս արիք, որ ես Անանուն ուղեցի:

ՍԱՐԳԻՍ, հեզօրէն:

Ուղեցիր, սուղեցիր... Փռանդստնու հանգը ժած իս էկի՝ դէմուդէմը խօսիլ իս. վայ մօցիքլերու միխկը յօրէսի դէնը... Հալըաթտա վուր ուղեցիր... Էրեւում է էնդու համա իս հաղրվում վուր գնաս քու աներանց տանը կենաս... Աշխրքումը շատ տնփեսայ կայ, մէ տնփեսէն էլ դուն կու'լիս... (Ծիծաղում է:) Հա՛, հա՛, հա՛...

ՄԻՔԱՅԷԼ

Բաւական է, բաւական, հայր. իմ գլուխը ծաղրելու չէ, որ ծաղրում էք... Ամանի մէջ այնքան կ'ածեն, ինչքան կարող է տանել, աւելին ավնեցից կը թափուի. իսկ իմ սիրտը պռնկէ պռունկ լցրել էք դառնութեամբ... Ի՞նչ է ձեր միտքը, հայր, ի՞նչ. դուք չէ, երկնքից որ հրեշտակ վայր իջնի՝ դարձեալ չէ կարող ինձ Անանուց հեռացնել:

ՍԱՐԳԻՍ

Է՛տ էլ կու տեսնինք:

ՄԻՔԱՅԷԼ

Կը տեսնենք, կը տեսնենք:

ՍԱՐԳԻՍ

Կամաց պարծենաս:

ՄԻՔԱՅԷԼ

Կամաց պարծենալը ձեզ կը վայելէ, հայր. ես բարձր եմ խօսում և ոչ ոքից չեմ վախենում:

ՍԱՐԳԻՍ

Ինձմէն էլ չիս վախենում:

ՄԻՔԱՅԷԼ

Դուք ինքներդ կտրեցիք ձեր ասը իմ սրտից:

Սօտնում է պայուսակին:

ՍԱՐԳԻՍ, վեր կենարով:

Փանք Քիզ, Աստուձ, վուր էս օրին էլ հասցրիր ինձ... Մարթ ամազ անէ, աշխատանք քաշէ, վուրթի մինձացնէ ու վիրշը էստունը լա՛... Տօ, սանրաղ, ինձ ի՞նչ իս միզ գնում, մէ ասա՛. աճկիրդ քոռացիլ է, միտկդ մթնիլ է ու քու լաւն ու վաղը չիս տեսնում, էստունը 'ես ի՞նչ միզ ունիմ... Դուն ուզում իս վուր աղանշար անիմ քիզ, թէ Ստեփան Դանէլիչի ախշկան թո՛ղ ու գնա Անանուն ուղէ՛. վուր չիմ կանա, թէգուզ վուտէմէս քա՛շ արա՛՝ չիմ կանա... Դուն քու հանգն իս ժած գալի, 'ես էլ իմ հանգը: Հիմի ուզում իս՝ 'ես էլ քու աճկով մտիկ անիմ ու քու խիլքով ման գամ. վուր չի ըլի, սուտ չէ:

ՄԻՔԱՅԷԼ

Ես ինքս հաստատ գիտեմ, որ ո՛չ դուք կարող էք իմ խելքով ման գալ և ոչ էլ ես ձեր խելքով, բայց դուք աշխատում էք քանդել իմ բախտաւորութիւնը:

ՍԱՐԳԻՍ

'Ե՛ս իմ քանդում քու բախտաւորութիւնը, 'ես:

ՄԻՔԱՅԷԼ

Այն, դուք, դուք, հայր... Ինչե՛ր էիք ասում այժմ Սալօմէին, ինչե՛ր աւելացրիք ձեր երեկուան ասածներին:

ՍԱՐԳԻՍ, նորից նստում է:

Քիզ ի՞նչ, քիզ ի՞նչ դաւի. ինձ համա խօ մէդիատօր չին ջոգի քիզ. քիզ ի՞նչ, ինչօր ասում էի... Իմ հարցմունքին խիստ խօ ջուղար տալի, վուր քու հարցմունքին 'ես ջուղար տամ... Դուն բարգդ դարսում խօ, դարսէ, անպէք, էլ ինձմէն ի՞նչ խօ ուզում. էլ խօ 'ես քու հէք չիմ, էլ խօ դուն քու գլուխը վուրթի չիս համարում իմը, մինք միր հախ ու հէսարը պրծանք... Բէսար արի՛ մէ բան ասի... Գնա հիմի, ինչ քէփա ուղէ, էն արա, էլ հէք ու վուրթութիւնը մօղա չէ յօրէսի դէնը... Գնա քու ճանփէն, Աստուձ ձեռք տայ, տեսնիմ առանց ինձ վո՛ւնց խօ եօլա գնում. ախար վիրջը կու էրեայ, էլի՛... Գնա, անպէք, գնա, դուն քու ճանփէն գնա, 'ես իմ ճանփէն:

ՄԻՔԱՅԷԼ

Բայց դուք ձեր ճանապարհով չէք բաւականանում, հայր, այլև իմ ճանապարհի վրայ էլ քար էք գցում...

ՍԱՐԳԻՍ, ծաղրալի դէմքով նայում է եւ երկու ձեռքը ձգելով դէպի Միքայէլը:

Վայ, քու տիրուչ միխկը, վուր աշխրքի ափայլը ջեր չիս իմանում... 'Ե՛ս իմ քար գցում քու ճանփի՛ն... (Լուռ շարժում է գլուխը:) Տօ, ինչո՞վ չիմացար վուր ամեն մարթ իր խէրն է պառում... Նրանք հէստի տղի ին տալի Անանուն վուր նրա վուրի

պճիղն էլ շափա... (Միքայէլը ապշած նայում է հօր երեսին:) Ինչկլի հիմի կու՛լի դուն էլ շատ լաւն էիք նրանց համա, ամա հիմի էլ վունչիչ... Չիս գիղի վուր լաւի վրայ լաւը ուփրօ լաւ է... Վո՛ւր գիժը կու՛լի վուր ձեռին ակն ունեւայ, աղը դէն գցէ ու նրա տիղ անմիղ կէնճի վիկալնէ... (Երկար լուծիւն:) Ի՛նչ իս մտիկ անում, գնա մտկէմէտ հանէ, էլ Անանի չկայ քիզ համա, Անանիտ ուրիշի վրայ է նշնած:

ՄԻՔԱՅԷԼ

Ուրիշի վրայ նշնած... Անանի՛ն... (Ծիծաղում է:) չա՛, հա՛, հա՛...

ՍԱՐԳԻՍ

Ծիծաղի, ծիծաղի, չիս աւտում միթամ. աճկով վուր տեսնիս, էնչախը խօ կու աւտաս:

ՄԻՔԱՅԷԼ

Դուք ու Սալօմէն շատ բան կարող էք հնարել, միայն ես խորհուրդ կը տայի՝ հանգիստ մնայիք ձեզ համար:

ՍԱՐԳԻՍ

Էս խրատը վուր քու գլխի համա պահիս, ուփրօ լաւ կու՛լի, էնդուր վուր, 'ես քիզ ասում իմ՝ Անանին նշնած է, ու թէ գ՛ուղիս իմանա թէ քիզ վրայ լաւն ս՛վ լուս ննգաւ նրանց համա, էն հարցրու... Չատ հարկաւուր է նրանցը քու գիլն ու դալամը... Ինչո՞վ չիմացար, վուր հիմիկուան ժամանակը ինչօր վուր է՝ փուղն ու հարստութիւնն է... Քու մտկիլը դուն գնա սրբիչ տիղ քարոզէ, նրանք իրանց ախշիկը իվան Ստեփանիչին տուին:

## ՄԻՔԱՅԷԼ

Իվան Ստեփանիչ...

## ՍԱՐԳԻՍ

Հա՛, Իվան Ստեփանիչ... Ովոր քիզ արչիկ է տալի ու դուն չիս ուզում, հէնց նրա տղէն:

## ՄԻՔԱՅԷԼ

Այն թեթեամիտը... (Ծիծաղում է:) Հա՛, հա՛, հա՛... Անտ է, սնտ, երբէք չեմ կարող հաւատալ...

## ՍԱՐԳԻՍ

Սուտը դուն իս վուր վունց անգճներուտ իս աւտում, վունց հօրդ. մնացածն էլ քու աճկով կու տեսնիս, էլի... Տանու բարեկամ իս արար, քիզ էլ կու կանչին նշանաւորումը. առանց քիզ վունց կու'լի...

## ՄԻՔԱՅԷԼ

Այժմ եմ հասկանում ձեր նրանց մօտ գնալ-գալու պատճառը, այժմ եմ հասկանում թէ ինչ խորհուրդներ կ'ունենայիք դուք ու Սալօմէն... Լաւ պաշտօն էք յանձն առել, հայր, շնորհաւորում եմ... Այս բուսիս որ ուրախ-ուրախ ճանապարհ դրեց ձեզ Սալօմէն, երեւի այդ ձեր նոր աշխատութեան վարձատրութիւնը կը լինէր... Օ՛, հայր, երջանիկ էք, որ ծնողի անուն էք կրում, ոչինչ չեմ կարող անել... որդիդ եմ... Որդի... Ի՞նչ որդի, փո՛ղ, փո՛ղ և միայն փող. ձեր Աստուածը նա է, նրան պէտք է պաշտէք ձեր բոլոր կեանքում... Բայց լաւ գիտացէք, հայր, որ ես ձեր ծախած ու գնած ապրանքը չեմ, որ ինչպէս կամենաք, այնպէս վարուէք հետս... Գնացէք, նստեցէք Սալօմէի հետ, դարսեցէք, շինեցէք,

քանէ պարիսպներ բարձրացրէք, միայն իմացած կացէք որ դուր է ձեր աշխատանքը. Անանին իմն է լինելու՝ թէկուզ տասը Սալօմէ դուրս գայ դժոխքի խորքից:

Գլխարկը ձեռքին դուրս է գնում միջի դռնից:

## Տ Ե Ս Ի Լ Ե

ՍԱՐԳԻՍ, մենակ, երկար լուծիւնից յետոյ, հեղսօրէն, ցածր ծիծաղում է:

Հա՛, հա՛, հա՛... Մնւլափ, մնւլափ, Միխէիլ... ձը-զան պէս դամբումը բռնուիլ իս ու ջեր խիտ իս փրփրաում, ամա վիրշը վուրդի վուր նիզ քունջն է, էնդի կուզ գու քաս... Չատ տրաինգներ կ'օնիս ջեր էլի, ամա վիրշը իմ քէփի մարդ կու դառնաս, մի վախենա... (Մօտենալով պայուսակին:) Էստունք էլ վուր աղավարի դարսիլ է. մէբաշ եաքա տուն չբռնիս քիզ համա... Իմ ամագն ու աշխատանքն էստու համա էր... (Պայուսակը շուռ է տալիս եւ միջի իրեղէնները վայր ածում:) Էսէնց վուրթի կու'լի վուր իմ սէրը չէ հասկանում... Տէր Աստուծ, էս ինչ ժամանակի ինք հանդիբի... (Ընկղմվում է մտածմունքի մէջ:) Փիս ժաժ էկայ միթամ... Ինչի... Ծառի շուաքը վուր դաշլա է անում իմքնին, ծառը տակէմէն հանում ին ու դէն ին գցում... Խօսկիրը ինչ գօրութիւն ունէ քիզ համա... վունչիչ... դարդակ քամի... այ, (Փշում է:) փփո՛ւ... փչեցիր, գնաց ու տիրը վունչիչ շմնաց... Քիզ գուրծք էր հարկաւոր, Միխէիլ,

գուրծք, էն հանգի գուրծք, վուր անգճով իմացիլ էիր  
ու աճկով տեսի... էն գուրծքը 'ես մօգօնեցի, դար-  
սեցի ու տիրը հասցրի... Հիմի ինչ ձեռնէմէտ գայ,  
էն արա... էլ Անանի չկայ քիզ համա, գնաց, ջըն-  
ջուեցաւ յաւիդեանական... Գնա դադուի, էրուի,  
խորվուի, վուր խիլքդ հասնի ու աշխարքը ճանչնե-  
նաս... Տեսնիմ իժում դուն իս քու գրեքով ուփրօ  
խնլօքը, թէ 'ես իմ փողոցի խիլքով:

Գուրս է գնում ձախ դոնից. վարագոյրն իջ-  
նում է:

## ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆ ԳԵՐՈՐԳ

Երկրորդ արարուածի՝ Սուրաթենց տան սենեակը, միևնոյն գար-  
դարանքով: Գիշեր է: Աջ կողմի սեղանի վրայ դրած է վառ  
լապտեր, իսկ ձախի վրայ՝ հանգած մոմ, լուցկատուփ և  
նոյն գիւրքն ու դամբիւղը:

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

### ՍԱԼՕՄԷ, ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

ՍԱԼՕՄԷ, ուրախ-ուրախ դուրս գալով աջ դոնից, մատա-  
նին ձեռքին:

Վոնց է, վոնց, իմ ասածը:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, հագնուած ինչպէս երկրորդ արարուա-  
ծի սկզբում, թէյի բաժակը ձեռքին, հետևում է Սալ-  
ոմէին:

Աճկերուս չիմ աւտում, Աստուձ գիդենայ, Սալոմէ:  
ՍԱԼՕՄԷ

Հիմի էլ կ'օսիս վուր խիլք չունիմ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ, նստելով դիվանի վրայ:

Չնուրով իս, չնուրով, Սալոմէ:

## ՍԱԼՕՄԷ

Քաս չէ ու քի պէս անշնուք կու'լիմ... Եարար  
լինչ կու'լէր քու չարէն վուր 'ես չէի ուստ էկի քիդ:  
ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, բաժակը խառնելով ու ժպտալով:

Էգէբա քի վրայ լաւին էի ուստ գալի, Սալոմէ:  
ՍԱԼՕՄԷ, քրքրուելով:

Վճնց կու'լէր քու բանը. մէ էրկուսն էլ կան  
ինձպէս ախշկիբք, (Աջ ձեռքը շարժելով:) գանա չիմ  
գիդի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, ծիծաղում է:

Հա՛, հա՛, հա՛...

ՍԱԼՕՄԷ, մօտենալով լապտերին՝ զննում է մատանին:

Մէ մախի, մէ մախի, Ենգօր ջան, ինչ ջուր ունէ.  
վրէն էւէտ էրեում է վուր տէրն էլ իրպէս ասլզադա  
է... (Ծաղրելով:) «Տուտուց կնիկ իս ու, մաղիրդ էր-  
գէն ունիս ու, Աստուճաճնին նիղացնում իս ու...»  
ախ վուր ինձ աւելի է աւտում Աստուճաճնը...  
Փնւխ էհամ նրա դօրութենին:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, խմելով թէյը:

Աւտաս ինչլիր իս խոստացի, Սալոմէ:

## ՍԱԼՕՄԷ

Էն 'ես գիդիմ... Քանի ջէր իմ փորցի. նրա փիշը  
վուր դայիմ բունիլ իմ, իմ սրտի ուզածը գիփ կա-  
տարիլ է... Աւտացած էի վուր էս բանն էլ պիտի  
էոէնց ըլի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Մէ քիչ կի սիրտդ գնաց ու էկաւ վուր էս բանը  
մէ քիչ ուշացաւ. կի՛նաղամ ումիկդ կարվում էր:

ՍԱԼՕՄԷ, նստելով նրա դէմ առ դէմ բազկաթոռի վրայ:  
Քու արիւր, Ենգօր, հանց քուր ու ախպէր վի-  
գիտով էկան էսօր՝ սիրտս խաթրջամացաւ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Հա՛, հիմի էտէնց կ'օսիս. էրէգուան դէսը կի տա-  
սը ջէր քուչի դուռը դուս վաղեցար:

## ՍԱԼՕՄԷ

Ո՞վ էր էլի իմ մաղիար վուր սիրտն էնէնց չէր  
շուռ էկի վունցոր իմը. մնալու պէս դժար վունչիչ  
չկայ... Դուն էն քօփակին ասա թէ մատնիքը ջի-  
բումտ ունիս, էլ ինչ իս ուշանում, արի՛, է՛:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Է՛հ, հէր օխնած, էգէբա ինչ հարկաւուր բան  
ունէր:

## ՍԱԼՕՄԷ

Էստու վրայ էլ հարկաւուր բան վճրը կու'լէր.  
աճկիրս ջուր դառաւ նրա մնալէն:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Էգէբա...

Ականջումը քչիչում է:

## ՍԱԼՕՄԷ

Ի՛հ, լաւ է, քա՛, ինչ ախա դուն կու մօգօնիս:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, ծիծաղում է:

Հա՛, հա՛, հա՛...

ՍԱԼՕՄԷ, նորից զննելով մատանին:

Աւտաս հարուր թուման աւել աժենայ, Ենգօր  
ջան:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, առնելով մատանին ու զննելով:

Քաս չի աժենայ. անտիկա իմքին է:

Մատանին յետ է տալիս եւ զնում աջ ան-  
կիւնից ծխաքարը վերցնում:

ՍԱԼՕՄԷ

Ջեր անմիդ բէլգէն վուր էս է, դուն մէկէլնիբը  
հէսար արա թէ ինչ կու'լի... (Ձախ կողմի սեղանից  
լուցկատուփը վերցնելով): Գնա ու գնա, Ա'նանի, բախ-  
տաւուր աստղի իս ծնած. դուքած վուր դուս գաս,  
աւտաս հինգ հազար թումնի մենակ ակնեղէն ըլի  
վրէտ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, ծխաքարը պատրաստելով:

Գիփ լաւ, Սալօմէ, ամա (Գլուխը շարժելով): չիմ  
գիղի թէ Անանուն վունց պիտի կոտորիս...

ՍԱԼՕՄԷ, երկիւղով նայում է ծախ դռանը, որ  
ծածկած է:

էտ 'ես գիղիմ, դուն բան չունիս:

Ծխաքարը վառում է:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, ծխելով:

Գիղիմ, գիղիմ. իմ ասելուն 'ես ասիլ իմ, միխկն  
ու վարցիլը քու շինքին, Սալօմէ:

ՍԱԼՕՄԷ, թեւակցած առաջ բերելով նրան:

Ամեն իմ միխկը Աստու մօտ էս ըլի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Ա'խ, Միխէիլ, քու հօրն ինչ ասիմ:

ՍԱԼՕՄԷ, լուցկատուփը թողնելով աջ կողմի սեղանի վրայ:

Աբա Միխէիլի հատն ու կտուրն է, եւագօր. ինչ  
իս ասում, մէ քիչ Աստու ունեցի, է:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, յօնքերը կիտելով:

Լաւ է, լաւ, քու հօրն օղորմի. ինչ էլաւ, էլաւ:  
Թեւակցած գնում են ծախ կողմը:

ՍԱԼՕՄԷ

Ըահա՛, պրծաւ գնաց. վարսալամ, վարքալամ. էլ  
ինչ նուր չար, նուր բարի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, նստում է Անանու աթոռի վրայ. իսկ

Սալօմէն աջ արմնկով յենվում է նրա ծախ ուսին:

Աստուձ տայ, Սալօմէ, վիրջը չփոշիվնինք ու ու-  
րախանալու մագիար սրտէնեքուս չդառնացնինք. օրի-  
նակնիր ասում ին շատ է էլի՛ վուր սրաի ընդէմ  
մարթու տուած ախշիկը էրգար օր չէ ունենում:

ՍԱԼՕՄԷ

էտ օրինակնիրը տուտուց մարթկերանց ասած  
թէ կու'լի ու դուն էլ աւտում իս... Նշնելու ախշկայ  
սիրտն ո՛վ է հարցնում. նրանք ինչ գիղին՝ վնւրն է  
իրանց համա լաւը, վնւրը վաղը... Ինձ վուր նշնում  
էին, գոն հէնց գիղիս խիստ էի հաւնում քի՛զ. ամա  
չարէս ինչ էր՝ (Սագօր Սիմօնիչը գլուխը տըմբտըմբացնե-  
լով ու ժպտալով խորը նայում է Սալօմէին): իմ հէրն  
ու մէրը վրէս շաքուշի պէս կանգնած էին... Իժում  
իմացայ վուր վաղ շին ուղեցի ինձ համա. Աստուձ  
հոքէներուն յուսաւուրէ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ

Հահա՛, փնոք Աստու:

Արծակելով ծխի գունդ, ծխաքարը վայր է գնում  
սենեակի անկիւնում եւ վերցնում պաշտօնա-  
կան թուրը:

## ՍԱԼՕՄԷ

Քաս ինչ գիղէիր. 'ես քիզ ասում իմ վուր կնիկ-  
արմտի բանը քու բան չէ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, թուրը պցելով ուսին:

'Ես ձեռս լուացիլ իմ, Սալօմէ. կնդդերանց բա-  
նումը չիմ լսառնվում... (Գլխարկը վերցնելով): 'Ես  
գնում իմ կլուրը, էս գիշիր ուշ կու առն գամ:

## ՍԱԼՕՄԷ

Խիտտ լաւ էլ կ'օնիս:

ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻՉ, միջի դռանը:

է՛յ:

ՍԱԼՕՄԷ, առանձին:

Էրնէկ կու'լէր կնդդերանցը վուր քու արով էին  
մնացի... (Հասնելով Յազօր Սիմօնիչին): 'Ես կու օտկիմ:

Գուրս են գնում:

## ՏԵՍԻԼ Բ

ԱՆԱՆԻ, մենակ, սեւ հագուստով եւ սպիտակ փոքրիկ  
վերարկուով, դուրս է գալիս ծախ դռնից, ծանր քայլե-  
րով գնում, նոյն կողմի լուսամուտը բաց է անում  
եւ դուրս նայում:

Չկայ, չէ երևում... (Առևտամուտը փակում է): Աշ-  
քերս ջուր կտրուեց ամբողջ օրը նրա ճանապարհը  
պահելով, խակ նա դեռ եւ չէ գալիս... Երբէք այսպէս  
չեմ ցանկացել նրան տեսնել, ինչպէս այժմ, երբէք  
սիրտս այսպէս չէ լցուել, ինչպէս այժմ... Օ՛հ, սր-  
բան բան ունիմ նրան պատմելու: (Չախ սեղանի վրայ

որոնում է լուցկատուփը եւ գնում վերցնում աջ սեղա-  
նից): Ա'խ, Միքայէլ, Միքայէլ, եթէ այս էր վերջը,  
եթէ այսքան արգելքներ պիտի ծագէին մեր միա-  
նալու դէմ, ինչի՞ ասացիր ինձ այն քաղցը խօսքերը,  
ինչի՞ խոստացար ինձ քո սէրը, ինչի՞ խլեցիր ինձա-  
նից իմ հանգստութիւնը... Ապրում էի ինձ համար  
անհոգ, քեզ տեսնելով ուրախանում, քեզ հետ խօ-  
սելիս բաւականութիւն ստանում, բայց քո բացա-  
կայութիւնը երբէք ինձ վիշտ չէր պատճառում...  
Այժմ... այժմ ինչ արիւր դու ինձ, այս ինչ կրակ  
պցեցիր սրտիս մէջ, որ առանց քեզ, առանց քեզ  
վրայ մտածելու, առանց քո անունը յիշելու շունչ չեմ  
կարողանում քաշել... (Առուժին): Ա'խ, Աստուած,  
մի՞թէ մէկ բոպէ նրա համար միայն ուրախացրիր  
ինձ, որ յետոյ այսպիսի տանջանքներ կրեմ... Ի՛նչ  
ճար կայ իմ խեղճ գլխին... (Վառում է ծախ կողմի  
սեղանի վրայ դրած մոմը, առաջը նստում, ձեռագործը  
վերցնում, գնում եւ յետ զամբիւղը դրում. յետոյ վեր-  
ցնում է գիրքը եւ մի բանի վայրկեան կարդում): Խեղճ  
աղջիկ, դու էլ ինձպէս տանջվում ես. հասկանում  
եմ քեզ, հասկանում, բայց ոչ որ օգնող չկայ մեզ...  
(Գարձեալ մի բանի վայրկեան կարդում է. յետոյ ծախ-  
ով գիրքը): Կարդալու սիրտ ես չկայ... (Գնում է  
դաշնամուրի առաջ նստում եւ նուագելով երգում է մի  
տխուր եղանակ. բայց շուտով կտրում է երգը եւ աչքե-  
րը սրբելով վեր կենում): Էլ չեմ կարող, կարծես  
թէ խեղդվում եմ... (Նորից նայում է լուսամտից):  
Չեկաւ:

## Տ Ե Ս Ի Լ Գ

## ԱՆԱՆԻ, ՍԱԼՄԷ

ՍԱԼՄԷ, մտնում է միջի դռնից:

Ինչի՞ իս փաթըթուի, մըսում իս:

ԱՆԱՆԻ

Այո, լաւ չեմ զգում ինձ:

ՍԱԼՄԷ

Հիւանդ խօ չիս: (Ձեռքը բռնում է:) Էս ի՞նչ է, տաքութիւն ունիս:

ԱՆԱՆԻ

Գարեջի է:

ՍԱԼՄԷ

Հաջաթ չէ, կու անց կենայ:

ԱՆԱՆԻ

Ասո՛ւ, խնդրեմ, մայրիկ, այս ի՞նչ է անցնում այստեղ. ինձանից ծածուկ հաւարվում, փակվում, խօսում էք... Ո՛րքան էլ մտածում եմ, մտածում, ոչինչ չեմ կարողանում հասկանալ:

ՍԱԼՄԷ

Նստի էստի, վնւրթի, նստի... (Նստում են՝ Սալմէն դիվանի վրայ, Անանին՝ մօտը, բազկաթոռի վրայ:) Ձարթնի քիզ ի՞նչ ունինք խօսելու. միը ուրախութիւնն էլ դուն իս, միը դարդն էլ, միը ասելուն էլ, միը լսելուն էլ... Քիզ նշնում իմ, Ա՛նանի ջան...  
ԱՆԱՆԻ, ուրախ:

Ուրեմն Միքայելի հայրը համաձայնվում է:

## ՍԱԼՄԷ

Միխէիլը վնւրն է... Հէստի բան ուրախացնիմ քիզ, Ա՛նանի ջան, վուր Միխէիլին էլ մտէզ գցիս ու ինձ էլ... Ստեփան Դանէլիչն ուզում է քիզ իը վուրթու համա... (Լոռեթիւն:) Ի՞նչ իս արմնում, դուրթ իմ ասում, քու արիւը...

ԱՆԱՆԻ

Ես քեզ չեմ հասկանում, մայրիկ:

ՍԱԼՄԷ

Վնւնց թէ չիս հասկանում... (Գրպանից հանում է մատանին) Ա՛յ, էս էլ բէլգէն. էս սահաթիս էկաւ... Գնո՛ւ ու գնա՛, տասը մատիս մում վառէ ու Ատաձուն էնէնց փնռք տու, վուր էս հանգի բախտի է քիզ ուստ բերում, էրազումա էլ չէիր կանա տեսի...  
ԱՆԱՆԻ

Դու հանար ես անում, մայրիկ:

ՍԱԼՄԷ

Հանարը վնւրն է, քա՛. քու արիւը սուտ օրթում կ'ուտիմ... Էսօր հանց էսղանց գնացիլ է տուն խիզ աղէն, հօր առչիւը չորիլ է ու հէնղադա աղանչանք է արի, ինչրի նա էլ մատէմէն էս մատնիքը հանիլ է ու զրգիլ է... Ախար աչքարա տեսնում էի վուր խիլքի ծէքը գնում էր էն աղինը քիզ հիզ խօսելիս. վէնանցվալէ նրա կօկօր բիխերուն, ցուզրումէլա իրմին է:

ԱՆԱՆԻ, վեր կենալով:

Ինչե՛ր ես պատմում, մայրիկ. ես դեռ ես ականջներիս չեմ հաւատում:

## ՍԱԼՕՄԷ

Վսննց թէ չիս աւտում, թուրքերէն խօ չիմ խօսում ու լէզգերէն. Ստեփան Դանէլիչի տղէն ուզում է քիզ, ասում իմ, ուրիշ էլ ինչ աւտալ գ'ուզիս...

## ԱՆԱՆԻ

Բայց Միքայէլը, Միքայէլը, մայր իմ. նրա մէկ մազը չեմ փոխիլ տասը Ստեփան Դանէլիչի որդու հետ:

Գնում է դէպի ձախ:

## ՍԱԼՕՄԷ, հետեւելով:

Այ, անխիլ իս ու անխիլ էլ խօսում իս. արա նրանց մօտ ինչ յիշելու է Միխէիլը:

## ԱՆԱՆԻ

Ի՞նչպէս... Մինչև այսօր Միքայէլի նմանը ոչ ոք չկար քեզ համար, իսկ այժմ նրան յիշելն անգամ չարժէ:

## ՍԱԼՕՄԷ

Ինչ կու փոքր անէինք, թէ Աստուծ Ստեփան Դանէլիչի տղին ռաստ կու բերէ վիրշը. նրա բանն սւրիշ է, նրա բանն ուրիշ:

## ԱՆԱՆԻ

Այդպէս է, հա... Օր չէր անցնիլ որ Միքայէլի համար չասէիք՝ «լաւ տղայ է, ուսում առած է, խելօք է, ազնիւ սիրտ ունի, նրա նմանը ոչ ոք չկայ քաղաքում, երանի կը լինի քեզ ուզէ...», իսկ այժմ նրա բանն ուրիշ է. այժմ, երբ սիրտս էլ, միտքս էլ նրան եմ տուել... Իմ սիրտը քո հագուստների պահարանը չէ, մայրիկ, որ ինչ տեսակ հագուստ կամենաս, այն պահես մէջը:

Անցնում է աջ կողմը:

## ՍԱԼՕՄԷ

Ծնւլպակաս, ծնւլպակաս մի խօսի... Իժում սով ասաւ վուր Միխէիլն ուզում է քիզ:

## ԱՆԱՆԻ

Պարզուած չէ միթէ. նրա առաջարկութիւնն արդէն յայտնի է՝ նա սիրում է ինձ և... ես էլ նրան:

## ՍԱԼՕՄԷ, մօտենալով:

Էրկուսդ մէտի ձիր սէրը վիկալէք, դճյիմ ծալեցէք ու սրտի մագիար շիրէներումդ պահեցէք. հասաւտ գիղացի վուր էլ նա չի կանա ուզի քիզ:

## ԱՆԱՆԻ

Ինչի՞:

## ՍԱԼՕՄԷ

Էնդուր վուր նրա հէրը չէ ուզում... քանի ասիմ քիզ:

## ԱՆԱՆԻ

Նա իր հօր խելքով չէ ման գալիս:

## ՍԱԼՕՄԷ

Ինչ է ասում, քան. բարէմց էրկուսդ մէտի գնացէք ու թաքուն փսակուեցէք, էլի, ու աշխրքի մասխարա դառէք:

## ԱՆԱՆԻ

Հաւատացած կացէք, մայր իմ, որ բացի Միքայէլից ես ուրիշ ոչ ոքի չեմ ուզիլ:

Գնում է ձախ կողմը:

## ՍԱԼՕՄԷ, հետեւելով:

Քու քէփի սով է թողնում քիզ, էրնէկ գիղենամ. ինչ գիղիս դուն քու լաւն ու վաղը... Դուն ինձ

վրայ շատ իս հասկանում. քու տօլ խիլք ղնգնեբումս էլ ունիմ:

ԱՆԱՆԻ

Այն, այն, մայր իմ, ի հարկէ դուք աւելի էք հասկանում. բայց թողէք այդ, ուրիշ բան խօսենք, խնդրեմ:

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ է ասում, քան. ուրիշ ի՞նչ պիտի խօսիմ, ի՞նչ ունիմ խօսելու. ասիմ վուր արեգազը առուտէհան դուս է գալի, իրիգնութիւն մէր է մտնում. ի՞նչ կայ, կայ, ու ինչոր հիմի ասում իմ՝ պիտի ըլի:

ԱՆԱՆԻ

Անկարելի է, մայր իմ, անկարելի:

ՍԱԼՕՄԷ

Կարած էլ է ու ձեած էլ:

ԱՆԱՆԻ

Ա՛խ, Ա՛ստուած:

ՍԱԼՕՄԷ

Աստուծ քու բանը շինիլ էլ է ու պրծիլ էլ. ամեն սահաթի քիզ համա պարապ չէ: Ի՞նչ գիդիս՝ քանի խէշ ու սուրփ իմ մէշ գցի... (Մտնեալով): Բռնէ դուն էս մատնիքը. տիս ինչ լաւն է՝, անգին ակն է:

ԱՆԱՆԻ, առնում է մատանին եւ դէն գցում:

Թո՛ղ տանեն իրանց համար պահեն, ինձ հարկաւոր չէ:

ՍԱԼՕՄԷ

Վճ՛ւյ քոռանամ՝ ես... (Մատանին վեր առնելով): Էտ ի՞նչ արարմունք է... Էրէսդ պարզ կենայ, լա՛ւ իս գիդացի մօր պատիւը:

ԱՆԱՆԻ

Ես քեզ չեմ անպատվում:

ՍԱԼՕՄԷ

Անպատուիլն էլ վճարը կու՛լէր, ձեռնէս առար ու գլխիս խփեցիր:

ԱՆԱՆԻ

Ներիր ինձ, մայրիկ, ճշմարիտ որ ես ինձ մոռացայ:

ՍԱԼՕՄԷ, նստում է աջ կողմի բազկաթոռի վրայ:

Չէ էլ ամանչում. էն հանգի տանէմէն ուզում ինքիդ ու դուն էլ նազ իս անում:

ԱՆԱՆԻ

Ո՛ւմ տանից էլ կ'ուզէ լինի, ես նրա ընկերը չեմ:

ՍԱԼՕՄԷ

Քու արիւր, էնէնց ննգիր իք մէկամէկունը, վունցոր խնձուրը կէս անիս. դրուստ մէկմէկու վրայ ձեւած իք՝ դուն ջէհէլ, նա ջէհէլ. դուն սիրուն, նա սիրուն. դուն խելօք, նա հարուստ. էստու վրայ էլ լաւ ննգրութիւն կու՛լի:

ԱՆԱՆԻ

Չեմ կարող, մայրիկ, եթէ սպանես էլ՝ չեմ կարող... Ես նրան չեմ կարող ուղել, չեմ ուզում... մշ ոքի չեմ ուզում...

ՍԱԼՕՄԷ, վեր կենալով:

Բաս մնա՛ վուր տանը քացխիս... Գիժը՝ ես իմ վուր ծանդը ու բարակ հիզդ մասլահաթ իմ անում... Չնորակալ էլ չիս վուր քիզ բան իմ հարցնում... Քի պէս վուր նշնելու էի, քու հօրը բերին մէբաշ գլխիս կանգնեցրին ու ասին թէ՛՝ այ քու մարթը:

ԱՆԱՆԻ, ծախ կողմը կանդնած:

Ի՞նչ անեմ, եղել է ժամանակ, երբ որդուն տանում էին փողոց և այնպէս ծախում, ինչպէս այսօր մէկ ոչխար ծախեն:

ՍԱՆՄԷ, մօտենալով, քաղցրութեամբ:

Բաս էտ է քու խոնարհութիւնը, Անանի:

ԱՆԱՆԻ

Կարծում եմ որ մինչև այսօր քեզ միշտ խոնարհ եմ եղել, մնայր իմ, բայց ինչ որ ինձանից չէ կատուած՝ չեմ կարող կատարել:

Աչքերը սրբում է:

ՍԱՆՄԷ

Էնդուր վուր դուն մենակ քու գլխի համա իս փիքը անում: Սրտիդ հիդ ննդիլ իս ու էլ խիլքիդ շիս հարցնում: Քիդ համա էլ վունց մէր կայ, վունց հէր, վունց քուր ու վունց քվիրտիք մարթու տալու... Խօ տեսնում իս՝ ինչ ժամանակ է էկի... Աստուծ քիդ համա բաց արաւ էս բախտը վուր մուքթ ուղում ին քիդ. Իր օղորմութիւնը դիւի խօ մէ օջախի շի տա... Էն էլ շատ է, ինչ քիդ համա է տալի Աստուծ... Էսօր է թէ էքուց քվիրտիքդ քի պէս մարթու տալու կու դառնան, ինչո՞վ ինք մարթու տալի, քիդ իմ հարցնում... Լաւ գիդենաս վուր քու հէրը վունչիչ չունէ. ամսէ ամիս տօնուղը վիր է կախում ու վայ-նաչարի, վունցօր բլում է, ապրում ինք. էկող ամսուանն էլ էս գլխէն ինք ուտում... Էս տուն ու տիղը կարքած ու սարքած վուր տեսնում իս, աշխրքի համա ինք սարքի. էսանց էլ վունչիչ չկայ... վերչի թիքէն վրէն ինք բանեցրի: Ինչի հա-

մա, չէ՞ վուր է քու ազըղացնելու... Հիմի փիքը արա. հէրտ օրն օրուան վրայ ծիրանում է, Աստուծ մի արասցէ, դուրեղեմէն մէրաչ դուս արին. (Անանին թաշկինակով ծածկում է աչքերը եւ լաց է լինում:) առուտուր շի գիդի, վուր գնայ նուր մէկանց փուղ աշխատէ, ինչո՞վ պիտի ապրինք, ինչո՞վ, քիդ իմ հարցնում. Չուրն էկիլ ու տարիլ է միդ էնչախը... Աբա՛, Անանի ջան, էստունք էլ փիքը արա, է՛, մե՛նակ սրտի հիդ գնալը վունց կու՛լի. ամա Ստեփան Դանէլիչը վուր կայ յաւիտենական դամին է տալի միդ Աստուծ... Դուն հէնց գիդիս Միխէիլին քիմէն պակաս իմ ուղում՝ ե՛ս, քիմէն պակաս իմ հաւնում. ամա ի՞նչ անիմ, առանց իր հօրը, նա էլ մէ քու հօր նման մարթ դուս գու քայ... Էնդադա նա ի՞նչ կանայ աշխատի ու ճարի, վուր համ քիդ պահէ, համ միդ, ու նրա հէրը խօմ՝ աչքարա գիդիմ, քու արիւմն էլ իմ ասում, քու մէկէլներունն էլ, վուր բաց աճկով իր Միխէիլին շի թողնի վուր քիդ ուղէ. էրէզ առուտեան, խօ ասի էլ, իր բերնով ասաւ՝ «փուղ ու բաժինք չունիք», կ'օսէ... (Անանին նեղութիւն է արտայայտում:) Դառը խօսկիր է, գանա, վունքթի. ամա էս անգճովս իմացայ, ա՛յ... Էտէնց է, վունքթի. մարթու ճակատին գրած է՝ վուր դիւի իր սրտի ուղածը շի կանա կատարի... Էտէնց վուր չըլի, խօմ ամեն մարթ թաքաուր կու՛լի աշխրբումն ու ամեն կնիկ թաքաուրի կնիկ... Խիլբումդ նստում է, գանա... չերիք է, վունքթի, աճկերդ մի խարար անի:

## ԱՆԱՆԻ

Ա՛խ, Ա՛ստուած, սփռ էիր մարդուն սիրտ տալիս:  
Նստում է իր սովորական տեղը:

## ՍԱԼՕՄԷ

Սիրտը տուիլ է, վնասելի, ամա՛խիլքն էլ հիզն է  
տուի, վուր սրտին կառավարիս... Փիքը արա, վնաս-  
թի, փիքը. դուն ինքդ կու իմանաս, վուր ծուռը  
չիմ խօսում քի մօղ... (Մօտ է գնում գրկում եւ համ-  
բուրում:) Գէնացվալէ, Ա՛նանի ջան, լաւ փիքը արա...  
Գիզիմ վուր խոնար իս, գիզիմ վուր գլուխդ չիս խնահի  
միդ համա, վուր ասիմ՝ ջուրը ննգի, ջուրը կու  
ննգնիս. ամա դօռ չիմ ուզում բանեցնի... 'Ես ուզում  
իմ էնդագա փիքը անիս, վուր քու խիլքն ասէ քիզ՝  
«հա՛ն»... (Մի բանի քայլ գնում է:) Հէնց արա, Ա՛նանի  
ջան, վուր գիփունքն ասին՝ ա՛յ, բանաքայլա ախշիկ:  
Գուրս է գնում ծախ դռնից:

## ՏԵՍԻԼ Գ

ԱՆԱՆԻ, մենակ. փոքր ժամանակից յետոյ վեր կենալով:

Ա՛խ, Ա՛ստուած, ինչի ծանօթացրիր ինձ Միքայէ-  
լի հետ... Ի՞նչ անեմ այժմ, սր ջուրն ընկնեմ ես...  
Միթէ խեղճի համար բախտաւորութիւն չկայ այս  
աշխարհում, միթէ ամեն բան առևտրի վրայ է հիմ-  
նուած, միթէ էլ սուրբ ոչինչ չէ մնում մեզ... (Կարծ  
լուծիւն:) Ի՞նչ անեմ այժմ, Ա՛ստուած իմ, ի՞նչ անեմ...  
Միթէ պէտք է ծախեմ ինձ ծնողացս համար... Օ՛հ,  
թէ թանգ գնով է վճարվում ծնողաց խնամքը...

Ինչ որ ուրիշների մէջ ծաղրել եմ, այժմ ինձ է հան-  
գիպում—հարստութեանը պէտք է զօհեմ ինձ... (Դա-  
ռը ծիծաղով:) Դրսից դար ու փարչայով փայլեմ, իսկ  
սրտիցս արիւն կաթի... Աշխարհը պէտք է ինձ երանի  
տայ, բայց ես՝ այն ոսկու և արծաթի մէջ, վերջին  
աղքատին... Ի՞նչպէս հաշտուեմ ես, ի՞նչպէս, այսպի-  
սի դրութեան հետ... ի՞նչպէս դառնամ թեթեա-  
ւիտ Բրիլիանտովի կիւնը... Նրա հետ կառքի մէջ  
նստած լինիմ ու Միքայէլը ինձ տեսնի, արդեօք  
ի՞նչ պէտք է կարծէ նա իմ մասին, սում հետ կը  
համեմատէ նա ինձ... 2է, չեմ կարող ես Միքայէլին  
ուրանալ. առանց նրան աշխարհս սուտ է, առանց  
նրան կեանք չկայ ինձ համար... (Սաստիկ յուսահատ:)  
Ա՛խ, Ա՛ստուած, ինչի ստեղծեցիր ինձ, ինչի տուիր  
ինձ հոգի, որ շունչ եմ քաշում, ինչի տուիր ինձ  
սիրտ, որ այսքան սիրեմ Միքայէլին... (Ձեռքը դնե-  
լով ծակատին:) Էլ չգիտեմ ինչ եմ ասում... Գլուխս  
այրվում է, աչքերս մթնում, առաստաղը գլխիս  
պտոյտ է գալիս:

Ընկնում էիր ածուրի վրայ եւ հեկեկալով լաց է  
լինում երկար ժամանակ:

## ՏԵՍԻԼ Ե

## ԱՆԱՆԻ, ՄԻՔԱՅԷԼ

ՄԻՔԱՅԷԼ, մտնում է միջի դռնից, առաջ է գալիս, մի  
վայրկեան լուռ նայում Անանուն եւ յետոյ մօտենալով:  
Անանի:

ԱնԱնի, վեր թռչելով տեղից:

Ա՛խ, Միքայէլ, դ՞նք ես... (Աչքերը սրբում է եւ ձեռքը բռնում: ) Օգնիր ինձ, Միքայէլ, օգնիր... ինձ-պէս տարաբախտ աղջիկ չկայ...

ՄԻՔԱՅԷԼ

Հանգստացիր, հոգիս, (Համբուրելով ձեռքը: ) Հանգստացիր. նստիր դեռ այստեղ... (Նստեցնում է: ) Ինչի՞ հս այդպէս լաց լինում... (Նստելով կողքին: ) Պատմիր, ինչ է պատահել:

ԱնԱնի

Մեզ յաւիտեան բաժանում են, Միքայէլ...

ՄԻՔԱՅԷԼ

Բաժանում... յաւիտեան բաժանում... Բայց եթէ դու չին կամենալ, Անանի, ո՞վ կարող է մեզ բաժանել:

ԱնԱնի

Ծնողներիս խեղճութիւնն ու հօրդ ազահութիւնը...

ՄԻՔԱՅԷԼ

Հօրս ազահութիւնը մեզ հետ գործ չունի, Անանի, իսկ քո ծնողներին ինչ է հարկաւոր. հարստութիւն չեմ կարող խոստանալ, ի հարկէ, բայց դու լաւ գիտես որ նրանց անկարէք ապրելու համար ոչինչ չեմ խնայիլ...

ԱնԱնի

Ա՛խ, Միքայէլ, դու դեռ բոլորը չգիտես... Մայրս ստիպում է ինձ թեթեամիտ Բրիլիանտովին ուղել...

ՄԻՔԱՅԷԼ

Դ՞նք էլ արտասանեցիր այդ անունը, դ՞նք էլ ասա-

ցիր այդ խօսքերը... Գիտեմ, գիտեմ, Անանի, բոլորը գիտեմ, ես բոլորը լսել եմ... (Վեր կենալով: ) Այս ի՞նչ դժոխային հնարք են գործ դրել... Հայրս և մայրդ երդուել են մեզ քամբախտացնել. բայց, դ՞նք, դ՞նք, Անանի, միթէ դու համաձայն ես, միթէ կարելի է թվում քեզ այդ ամուսնութիւնը, միթէ հարստութեան գորութիւնը կարողացաւ և քո սիրտը յափըշտակել... (Անանին վշտանում է: ) Ձէ, չէ, (Նստելով կողքին: ) ներիր ինձ. ես չեմ կամենում այդ բանին հաւատալ, դու չես ուրանալ ինձ, դու չես կարող ուրանալ... (Ձեռքերը բռնելով: ) Այնպէս չէ, Անանի, դու ինձ չես ուրանալ... Դու իմն ես, իմ նշանածն ես, դու խոստացել ես իմս լինելու, մայրդ ևս խոստացաւ. նա միայն մի քանի օրով յետաձգեց մեր ամուսնութիւնը, նա իրաւունք չունի քեզ հետ այդպէս վարուելու... Դու մի վախենալ, ես եմ քո պաշտպանը, քո տէրը, քո ամուսինը, ո՞չ ոք չէ կարող խլել քեզ ինձանից, ո՞չ ոք, քանի որ դու ինքդ չես կամենալ...

ԱնԱնի

Բայց, մայրս, մայրս, Միքայէլ... նա այժմ ոչինչ չէ կամենում լսել...

ՄԻՔԱՅԷԼ, վեր կենալով:

Մայրս, մայրս... Երեխայ ես դու, ինչ է... Ո՞վ կարող է քո կամքի հակառակ պսակ դնել գլխիդ... Ահա թէ քո չափազանց խոնարհութիւնը սրբախի ծայրայեղութեան է հասել, որ համարձակվում են մինչև անգամ այդպիսի առաջարկութիւններ անել քեզ... Օ՛հ, Ա՛տուած իմ, այս ինչ մարդիկ են, այս

Ընչ հասարակութիւն է. պատիւ, սէր, զաւակ, խրդմտանք, բոլորը, բոլորն ունայն խօսքեր են այստեղ. այս հասարակութեան երջանկութիւնը միմիայն փոքն է և եթէ այդ փոքը մարդու սրտի մէջ անգամ լինի պահուած, սիրտը կը ճղեն որ միջից հանեն... (Լոու-թիւն:) Գնահ, գնահ ուրեմն դու էլ ծախիր քեզ՝ մօրդ կամքը կատարելու համար...

ԱՆԱՆԻ, մօտենալով:

Մի ասիր, Միքայէլ, մի ասիր, մի արտասանիր այդ դառը խօսքերը. թող ես չլսեմ քո բերանից այդպիսի նախատինքներ, սիրտս առանց այն էլ կտրատվում է...

ՄԻՔԱՅԷԼ

Ներիր, խնդրեմ...

ԱՆԱՆԻ, շարունակելով:

Ինձ ոյժ է հարկաւոր, Միքայէլ, և այն ոյժը ես քեզանից եմ խնդրում, քեզանից, Միքայէլ. դու ես իմ բարի հրեշտակը, իմ եղբայրը, իմ հայրը... Ասահ, ընչ անեմ, ընչպէս ազատուեմ ես այս յուսահատ դրութիւնից...

ՄԻՔԱՅԷԼ

Յուսահատուելով ոչինչ չես կարող օգնել, իմ քննիչը Անանի, այստեղ հարկաւոր է միայն սառը դատողութիւն և հաստատուն կամք...

ԱՆԱՆԻ

Գատողութիւնս էլ կորաւ, Միքայէլ, ու կամքս էլ. ես ինքս չեմ հասկանում թէ ընչ եմ անում կամ ընչ եմ խօսում...

Անցնում է բեմի աջ կողմը:

ՄԻՔԱՅԷԼ

Հօրդ հետ խօսել ես, Անանի. նա ընչ է ասում. միթէ այն բարի մարդն էլ այն աստիճան քարացաւ, որ քո արտասուքներն անգամ չեն շարժում նրա սիրտը...

ԱՆԱՆԻ

Հօրս դեռ չեմ տեսել, նա տանը չէ. բայց միթէ նրան չես ճանաչում. նա միայն մէկ կամք ունի, այն է՝ միմիայն մօրս կամքը. նա ընչ կարող է, կամ ընչ օգնութիւն պէտք է սպասել նրանից:

ՄԻՔԱՅԷԼ, կարճ լուսնից յետոյ:

Անանի, դու ինձ սիրում ես:

ԱՆԱՆԻ

Միթէ դու կասկածում ես, Միքայէլ:

ՄԻՔԱՅԷԼ

Ուրեմն իսկոյն վճռիր՝ կամ ինձ հետ խեղճ ապրել մեր սեպհական աշխատանքով, կամ մօրդ խորհրդով հարստանալ. երկուսից մէկը...

ԱՆԱՆԻ

Ա՛խ, Միքայէլ, ընչ ես ասում. ընչ հարստութիւն կարող է ինձ տալ այն երջանկութիւնը, որ ես կ'ունենայի քեզ հետ ապրելով, թէկուզ ամենազառն աղքատութեան մէջ... ես պատրաստ եմ շարժարուել, տանջուել, բոլոր նեղութիւններն ուրախութեամբ տանել, միայն թէ քեզ հետ լինիմ:

ՄԻՔԱՅԷԼ

Ձեռքդ տուր. (Ձեռքը բռնելով:) գնանք իսկոյն պսակուենք... Արի, արի շուտով հեռանանք այստեղից:

ԱՆԱՆԻ, բաց թողնելով ձեռքը:

Ի՞նչ ես ասում, Միքայել... Ծածուկ, առանց ծը-  
նողներին գիտութեան. հեռանալ տանից, փախչել  
ուրեմն. անկարելի է, Միքայել, անկարելի. մահն  
աւելի լաւ է ինձ համար, քան թէ այդ բանը. էլ  
աշխարհի երեսին չեմ կարող նայել ես...

ՄԻՔԱՅԷԼ

Սուտ էին բոլոր իմ յոյսերը. դու արդէն նուիրել  
ես քո սիրտը Ստեփան Դանէլիչի որդուն:

ԱՆԱՆԻ

Խնայիր ինձ, Միքայել, խնայիր. եթէ սիրտս նրան  
լինէի նուիրած, էլ այսքան արտասուք չէի թափիլ...  
Ես նրան անքան եմ ցանկանում, որքան դժոխքի  
կրակը...

ՄԻՔԱՅԷԼ, ձեռքը բռնելով:

Գնանք ուրեմն, Ա՛նանի. բոլոր թանգ է մեզ հա-  
մար... (Մի քանի քայլ տանելով:) Ուրիշ փրկութիւն  
չկայ:

ԱՆԱՆԻ, աղատուելով:

Կաց, կաց, Միքայել... ամբողջ մարմնով դողում  
եմ, ծնկներս ծալվում են... Ժամանակ տուր ինձ  
վերջին անգամ խօսեմ մօրս հետ. ոտքերը կ'ընկնեմ,  
կ'աղաչեմ որ ինձ կենդանի գերեզման չդնէ...

Ընկնում է աջ կողմի բազկաթոռի վրայ:

ՄԻՔԱՅԷԼ

Ի դուր կը լինի, Ա՛նանի, քո աղաչանքը. նա  
քեզ խղճացողը չէ, նա չի կարող խղճալ, նրա սիր-  
տը մօր սիրտ չէ. այժմ ես նրան լաւ եմ ճանաչում...  
Նա իր տեսակ է հասկանում երջանկութիւնը...

ԱՆԱՆԻ

Ա՛խ, խելքս խառնվում է...

ՄԻՔԱՅԷԼ

Գնանք, ասում եմ, գնանք իսկոյն, և եթէ կամե-  
նում ես վաղը բոլորովին կորչենք այստեղից, ուրիշ  
քաղաք գնանք, հեռու, հեռու, սուր որ կամենաս.  
ամեն տեղ մենք միասին երջանիկ կը լինինք...  
Գնանք, սիրելիդ իմ Անանի. միթէ ինձ չես հաւա-  
տում, միթէ իմ սէրը հաստատ յայտնի չէ քեզ...  
Վեր կաց, ինչի՞ ես կաշկանդուել, վեր կաց, իմ սի-  
րուն Անանի, իմ քնոցը Անանի. ոչինչ չեմ խնայիլ  
քեզ համար՝ հանգստութիւնս, կեանքս, բոլորը, բո-  
լորը քեզ եմ նուիրել. քո բոլոր կամքը, քո ամենա-  
փոքր պահանջն անգամ սրբութեամբ կը կատարեմ...  
Վեր կաց, մի լաց լինիր, այլ ես ժամանակ մի կոր-  
ցնիր, շտապիր... (Վեր է կացնում:) Գնանք...

ԱՆԱՆԻ

Չեմ կարող, Միքայել, իսկոյն վայր կ'ընկնեմ...  
(Դողում է:) Խղճա՛ ինձ, Միքայել, աղաչում եմ՝ խղճա՛...

Ընկնում է նոյն բազկաթոռի վրայ:

ՄԻՔԱՅԷԼ

Սակայն ես քեզ այդպէս թողնելու չեմ, ես իս-  
կոյն կ'երթամ հօրդ կը գտնեմ, ամենայն միջոց գործ  
կը դնեմ, որ գտնէ նա գլխայ... Վերջապէս նա մարդ  
է, մօրդ պէս քարասիրտ չէ. թող գայ տեսնի քո  
արտասուքները, նա անպատճառ կը խղճայ քեզ... Մի  
վախենար, հնգիս, (Համբուրելով ձեռքը:) ես իսկոյն  
կը վերադառնամ... (Գնալով:) իսկոյն կը բերեմ հօրդ...

Դուրս է գնում միջի դռնից:

## Տ Ե Ս Ի Լ Ձ

ԱՆԱՆԻ, մենակ. երկար լուռթիւնից յետոյ վեր է կենում:

Գնաց... Ի՞նչ անեմ, Աստուած իմ, ի՞նչ անեմ այժմ... Ո՛ւմ հետ կարող եմ փոխել Միքայէլին. ո՞վ կայ նրա նման... Այնքան սիրել՝ որքան նա է ինձ սիրում, ո՞վ կարող է...

## Տ Ե Ս Ի Լ Է

ԱՆԱՆԻ, ՍԱԼՕՄԷ, որ մտնում է ձախ դռնից:

ԱՆԱՆԻ, ընկնելով մօր ոտքերը եւ փաթաթուկելով ծնկներին:

Մի տարաբախտացնիր ինձ, մայր իմ. առանց Միքայէլին ես չեմ կարող ապրել... Մի՛թէ Ստեփան Գանէլիչի հարստութիւնը ինձանից աւելի թանգ է քեզ համար. եթէ ես չեմ լինի, ի՞նչ հարկաւոր է քեզ այն հարստութիւնը:

## ՍԱԼՕՄԷ

Վիկաց, ի՞նչ իս անում. էտ էիր փիքը անում ինչ-ընչ հիմի՛, էտէնց չուստ քամու տուիր իմ խրատները՝:

ԱՆԱՆԻ, վեր կենալով:

Ի՞նչ անեմ որ սիրտս Միքայէլին է քաշում...

## ՍԱԼՕՄԷ

Էլի Միխէիլ. էտ խօս էլախտ ասինք էլ ու լսեցինք էլ. խիլքումդ շնստեցաւ վուր անկարելի բան է՛:

## ԱՆԱՆԻ

Ի՞նչ ես կամենում դու, մայր իմ, ի՞նչ. Բրիլիանտօլի հարստութիւնը չէ կարող տալ քեզ այն՝ ինչ որ Միքայէլը չի խնայել քեզ. նա իր աշխատանքով, ես իմ մատի պտղունցով գիշերը ցերեկ կը շինենք ու քո սրտի բոլոր ուղածը կը կատարենք:

ՍԱԼՕՄԷ, հեղձօրէն:

Բաս ի՞նչ իք արի:

## ԱՆԱՆԻ

Հաւատո՛ւ, մայրիկ, որ մենք մեր սեպհական աշխատանքով աւելի կարող ենք օգնել քեզ, քան թէ Բրիլիանտօլը իր ամբողջ հարստութիւնով... Ամեն հարուստ իր համար է հարուստ և ոչ մէկ հարուստ իր ունեցածը խեղճերին չէ բաժանել. մի՛ յուսար թէ նրանք քեզ հազարներով փող կը տան...

## ՍԱԼՕՄԷ

Նա նրանց հազարները չիմ ուզում. նա քու լաւութիւնն իմ ուզում:

## ԱՆԱՆԻ

Եթէ իմ լաւութիւնն ես ուզում, մայր իմ, թո՛ղ ես Միքայէլին ուզեմ:

## ՍԱԼՕՄԷ

Գուն «հա ու չէ» չիս իմանում, թէ գփուիլ իս ու տուտուցացիլ իս, չիմ գիգի. չիմացանք վուր նրա հէրը չէ ուզում, խուլ խօս չիս:

## ԱՆԱՆԻ

Ի՞նչ անեմ թէ հայրը չէ ուզում. այդ չէ արգելում Միքայէլին ինձ ուզել. նա այս ըոպէիս այստեղ էր...

ՍԱԼՕՄԷ, ընդմիջելով:

Ո՞վ էր էստի. Միխէիլը... Էն վո՞ւնց էկաւ ու գնաց վուր շտեսայ... Էս ի՞նչ ժամանակ էկաւ, Աստու՞նձ գիղեհայ. ս՞վ էր իմացի էտէնց տղայ ու արշակայ խօսիլը... Դի՞ի իմ միղն է վուր մօղնի ժած էկայ, վիկալնիս ու քարգուրձ անիս ինձ... Իժու՞մ ի՞նչ էր ասում էն բէհայէն:

ԱՆԱՆԻ, դառնացած:

Բէհայեա՞...

ՍԱԼՕՄԷ

Բաս ի՞նչ է վուր բէհայիա չէ. 'ես իր հօր բերնով ապսպրեցի վուր քիզ նշնում իմ, ուրիշին իմ տալի, էլ ո՞ւր էր գալի, ի՞նչ քաղաքավարութիւն է. ի՞նչ է ուզում միղմէն, նշնած խօմ չիմ թողնուլ տալի քիզ...

ԱՆԱՆԻ

Նա ինձ սիրում է, մայր իմ. մի՞թէ սա աւելի հաստատ նշան չէ:

ՍԱԼՕՄԷ

Էտէնց իս կարծում. սէրը քոռացրիլ է քու աճկիրն էլ, նրանն էլ ու էլ սիւ ու սիւտակ չիք տեսնում վունց մէկը... (Հանելով գրպանից մատանին:) 'Ես քիզ ասում իմ՝ ա՞ռ էս մատնիքն ու ձեռիս պնձ արա:

ԱՆԱՆԻ

Ձեմ կարող, մայրիկ, չեմ կարող, մորթես էլ՝ չեմ կարող...

ՍԱԼՕՄԷ

Վո՞ւնց թէ չիս կանա. բաս 'ես էլ մէր չիմ քու՞նը... Զուր էիք կարուի ու քիզ չէի բերի... Էս է

իմ ամազը, էտէնց իս վճարում... Ինչի՞ քիզ ուրիշներու պէս կօպով ու կոխպած շմինձացրի, էնչախը կու իմանէիք իմ գինը... 'Ես իմացիլ իմ վուր ուսումն աւելի պիտի սորվեցնի հօրն ու մօր պատիւը, չէ թէ էտէնց հակառակ խօսիլը... (Անանին Թաշկինակը տանում է աչքերին:) Բռնէ, ասում իմ, բռնէ էս մատնիքն ու մի անիծիլ տա ինձ քու ծնելու ու իմ ծնելու սահաթը. հանէ Միխէիլը մակէմէդ:

ԱՆԱՆԻ

Ա՛խ, Աստուած, որ ո՞չ մտքիցս է հեռանում, ո՞չ սրտիցս, մայր իմ, ի՞նչ անեմ...

ՍԱԼՕՄԷ, հետզհետէ տաքանալով:

Մակէմէտ չէ հիռանում ու սրտէմէտ... Դէ, գնա, դուռը բաց է... Գնա՞ ձեռը բռնէ ու էս սահաթիս հիղը փսակուի... Գնա՞ աշխրքի դէնօ դառի. գնա, էլի՛, գնա, քիզ իմ ասում, գնա էտ աննամուտութիւնն արա, ուրիշ էլ ի՞նչ է մնում... Ա՛յ գեղինը պատուուի ու քիզ դէ՛վէր տանէ, հըա՞...

ԱՆԱՆԻ

Բաւական է, մայրիկ, էլ ես ոչ ոքի չեմ ուզում, ո՞չ Միքայէլին և ոչ էլ մի ուրիշին:

ՍԱԼՕՄԷ, շարունակելով:

Բէհայիա, կնայ կարած, չէ էլ ամանչում... 'Ես մէր ըլիմ, քիզ բան տսիմ ու իմ խօսկը չկատարիս... էլ ի՞նչ մէր, ի՞նչ կ'օնիս դուն մէր... քու մէրը շար ստատնէն է, վուր մտիլ է ջանդ ու էլ վունչիշ չիս իմանում:

ԱՆԱՆԻ

Խղճա՞ ինձ, մայրիկ, աղաչում եմ քեզ, խղճա՞ ինձ.

Թող աշխարհից հրաժարուեմ, Թող կուսանոց մտնեմ՝  
գիշեր ցերեկ աղօթք կ'անեմ քեզ համար, իմ քոյրե-  
րի համար, բայց Բրիլիանտովի հարստութեան կե-  
րակուր մի շինիր ինձ, մայրիկ:

ՍԱԼՄԷ

Այ, փշանաս, փշուխ, վեր ջնջուի քու անումը,  
քիզ էլ Թաղիմ, քու քվիրտերանցն էլ, 'երիքիտ մէ  
նաշումը տեսնիմ...

ԱՆԱՆԻ, աղիողորմ:

Օ՛, մայր իմ, մայր իմ...

ՍԱԼՄԷ

Մայր Աստուծը խռով կենայ քիզ, վուր էլ 'ես քու  
մէքը չըլիմ. իմ մօր մէշկը շորցիլ էր, վուր ինձ չէր  
բերի ու քիզ չէի ունեցի...

ԱՆԱՆԻ, բեմի ծախ կողմը կանգնած:

Ա՛խ, Աստուած, ինչի՛ հէնց այս բոպէս հոգիս չես  
առնում:

ՍԱԼՄԷ, կանգնած բեմի աջ կողմը:

Աղանչաք արա Աստձուն, աղանչաք, վուր մէքաշ  
մեռնիմ 'ես, Թաղիս ինձ, մազիբդ գՂտելով լաց ըլիս  
ինձ վրայ, սուտ սիւիը հաքնիս, մէ էրկու ամսուան  
վրայ մարսիս իմ մահը ու իժում գնաս քու սրտի  
ուզածն անիս՝ քու Միխէլին ուզիս. տեսնիմ Թէ  
վճնց է խէրում քիզ Աստուծ...

ԱՆԱՆԻ, սաստիկ յուզուած՝ արագ մօտենալով մօրը:

Իուք իմ մահն էք կամենում, մայր, (Խիլով մատա-  
նին): շուտով կը տեսնէք...

Մի բանի քայլ շտապով գնում է դէպի ծախ:

Տ Ե Ս Ի Լ Ը

ՆՐԱՆՔ, ՄԻՔԱՅԷԼ, ԵԱԳՕՐ ՍԻՄՕՆԻԶ

ԱՆԱՆԻ, տեսնելով Միքայէլին, մտնելիս միջի դռնից:

Ա՛խ...

Շփոթուելով՝ բռնում է ծախ կողմի ածուր:  
ՄԻՔԱՅԷԼ, սառնօրէն ողջունելով Սալօմէին՝ շտապով մօ-  
տենում է Անանուն, միջոցեւ Եագօր Սիմօնիչը նոր է  
մտնում նոյն դռնից:

Ան՛ս ե հայրդ, Անանի. նա մեզ հետ համաձայն  
է, նա քո երջանկութիւնն է ցանկանում...

ՍԱԼՄԷ, Եագօր Սիմօնիչին, բարկացած:

Թէ մէ խօսկ ասիլ իս, գլուխս էստի էւէտ կու  
սպանիմ, գիզէ Արարիչը... (Անանուն աջ ձեռքով ծախ  
դուռը ցոյց տալով): Հիւացի էսդանց:

ԱՆԱՆԻ, Միքայէլին:

Ներիր ինձ, Միքայէլ, ներիր... ես վճռեցի գոհել  
ինձ մօրս կամքին... Մ'նաս բարեաւ յաւիտեան...

ՄԻՔԱՅԷԼ, Անանու ձեռքը բռնելով:

Այդպէ՛ս, Անանի...

ԱՆԱՆԻ, ազատելով ձեռքը:

Ա՛խ, Միքայէլ...

Գնում է. ծախ դռան մօտ կանգ առնելով, մի  
վայրկեան նայում է Միքայէլին եւ յանկարծ  
դուրս ընկնում՝ ձեռքը ճակատին ու գլուխը  
յուսահատ յետ գցած: Միքայէլը մնում է  
շուարուած:



ՍԱԼՕՄԷ, արագ գնալով, Միրայէլին:  
Քու հէրն էսէնց կամեցաւ, վնւրթի, մինք ինչ  
անինք...

Գուրս է գնում Անանու ետեւից:  
ՄԻՔԱՅԷԼ

Օ՛ր, ես թշուառս...  
Խփում է ճակատին եւ մնում անշարժ: Ետզօր  
Սիսօնիչը՝ կանգնած Միրայէլի ծախ կողմը,  
նայում է նրան, ուսերը բարձրացնում եւ թե-  
ւերը բանալով արտայայտում, թէ բոլորը վեր-  
ջացաւ. նոյնպէս մնում է անշարժ: ՊԱՏԿԵՐ:  
Վարագոյրը կամաց-կամաց իջնում է:

Վ Ե Ր Զ



ԵԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Նրէս:	Տոր:	Տոր-ած է:	Պէր է:
3	1 ներհեից	ես	'ես
5	6 վերեից	մնայ	մնա
8	« «	Գու-	Գու-
13	7 ներհեից	երեխեբը	էրեխեբը
«	« «	զինաց-	զէնաց-
14	1 վերեից	զանք	քանք
«	2 «	Դանելիչին	Դանելիչին
16	11 «	աշկին	աճկին
«	1 ներհեից	դանայ	դանա
17	2 «	մոլորվի	մոլորվի
19	1 վերեից	յաւիտեան	յաւիտեան
22	6 ներհեից	չէ. 'ես	չէ... 'ես
41	3 «	հէրիք	հէրիք
48	13 վերեից	ՏԵՍԻԼ Ե	ՏԵՍԻԼ Դ
52	4 ներհեից	յաւիտեանական	յաւիտեանական
57	9 «	լի	լի
58	5 վերեից	էլ	լի
«	4 ներհեից	աշկիրս	աճկիրս
66	9 «	կանայ	կանա
69	5 «	սո սը բրատ	սո սը բրատ
73	11 «	ՄԻՔԱՅԷԼ	ՄԻՔԱՅԷԼ
82	9 վերեից	հէրիք	հէրիք
87	« «	«	«

Երկիր:	Տարի:	Տարածք է:	Պետք է:
88	14 Վերելից	աշկերուն	աճկերուն
91	3 ներհեից	արմցայ	արմըցայ
93	7 Վերելից	արմցար	արմըցար
97	5 «	տղխ	տղխ
«	2 ներհեից	պարտքը	պարտկը
112	7 «	աչքումը	աճկումը
120	2 «	կօ-	կօ-
149	7 «	էիթ	էիթ

1614191

« Ազգային գրադարան



NL0014191

ԲՈՒԿ. 193  
 ՊԻՆԵ. 40

**ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ**

**Թ Ա Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Գ Ր Ո Ւ Ա Ծ Ն Ե Ր Ը**

	Ռ. Կ.
ԴԵԶԻՐՎԱՆ ՍԱՅՐԸ ԽԵՐ Ե, կատակերգութիւն մէկ արարուածով, երկրորդ տպագրութիւն, ուղղած . . . . .	— 30
ԽԱԹԱՅԱԼԱ, կամեղիա շորս արարուածով . . . . .	— 50
ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉԷՆ ԵՆ ԿԻՆՔՈՒՄԸ, կատակերգութիւն մէկ արարուածով . . . . .	— 30
ԵԼԻ ՄԷՅ ԶՈՏ, կամեղիա հինգ արարուածով, երկրորդ տպագրութիւն, ուղղած . . . . .	1 —
ՊԷՊՅՈ, կամեղիա երեք արարուածով, երկրորդ տպագրութիւն, ուղղած . . . . .	— 50
ՔԱՆԿԱԾ ՕՋԱԽ, կամեղիա երեք արարուածով . . . . .	— 50
ԱՄՈՒՍԻՆՆԵՐ, կամեղիա հինգ արարուածով, երկրորդ տպագրութիւն, ուղղած . . . . .	1 —

վաճառվում են թիֆլիզում՝ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ և ԿՈՎԿԱՍՏԱՆ գրավաճառանոցներում:

11 17

507

2013

